



ԸՆԴԴԵՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՄԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԿ

FOUNDATION AGAINST VIOLATION OF LAW NGO



Օքսֆամ ՄԲ Հայաստան



Բաց Հասարակության օժանդակության հիմնադրամ-  
Հայաստան (OSI)

## Առանձին իրավական հարցերով Ուղեցույց

(Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան և ՀՀ-ի ստանձնած  
պարտավորությունները,  
կանանց և երեխաների աշխատանքային իրավունքներ,  
աշխատավարձ, հարկեր և տուրքեր)

Երևան 2008

ՀՏԴ 349.2 (479.25)  
ԳՄԴ 67.99 (2Հ) 7  
ՈՒ - 439

## ՈՒ - 439 ՈՒՂԵՑՈՒՅՑ ԱՌԱՆՁԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ

Եր: «Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպություն, 2008. – 80 էջ:

Օքսֆամ ՄԲ Հայաստանյան մասնաճյուղի հովանավորությամբ և Բաց հասարակության ինստիտուտ օժանդակության հիմնադրամի (ԲՀԻ ՕԺ) աջակցությամբ «Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպության կողմից հրատարակված սույն գիրքույկն ուղղված է հանրության իրավագիտակցության բարձրացմանը: Ներկայացվող գրքով փորձ է արվում հասարակության լայն խավերին ծանոթացնել կանանց և երեխաների աշխատանքային իրավունքներին, աշխատավարձի վճարման կարգին, հարկերի և տուրքերի վճարման առանձնահատկություններին, Վերնայված Եվրոպական խարտիայի և Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններին:

Գրքում բերված օրենսդրական նորմերը, իրավական պաշտպանության մեխանիզմներն ու դրույթները հնարավորինս հստակեցված և պարզեցված են: Ձեռնարկի հեղինակները չեն հավակնել տվյալ բնագավառի օրենսդրությունը ներկայացնել ամբողջությամբ. առանձնացվել է այն, ինչը առավել արդիական է, իսկ նրա իմացությունը՝ կարևոր:

Կազմակերպությունը լիահույս է, որ այս նախաձեռնությունը ևս մեկ քայլ է Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության և քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացում:

ԳՄԴ 67.99(2Հ) 7

ISBN 978-99930-919-7-4

«Ընդդեմ իրավական կամայականության»  
հասարակական կազմակերպություն, 2008 թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան և ՀՀ-ի ստանձնած պարտավորությունները ..... 4-17
2. Կանանց և երեխաների աշխատանքային իրավունքների առանձնահատկությունները.....18-24
3. Աշխատավարձի վճարման կարգը և պայմանները .....25-33
4. Պարտադիր վճարումներ հարկերի, տուրքերի ձևով և գանձումներ մատուցվող ծառայությունների դեմաց ..... 34-79
5. Հավելված 1..... 80-82
6. Հավելված 2..... 83-89

**ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ԽԱՐՏԻԱՆ և ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան /այնուհետև նաև Խարտիա/ Եվրոխորհրդի անդամ պետությունների կողմից ընդունվել է 1996թ. մայիսի 3-ին և ուժի մեջ է մտել 1999թ. հուլիսի 1-ին:

Խարտիան անվանվում է «Վերանայված» այն պատճառով, որ Եվրոպական սոցիալական խարտիան ընդունվել է 1961թ. հոկտեմբերի 18-ին, որն այնուհետև հաշվի առնելով ներպետական և միջազգային կյանքում տեղի ունեցած հիմնարար սոցիալական փոփոխությունները, անդամ պետությունների կողմից վերանայվել, ընդունվել և գործողության մեջ է դրվել այժմ գործող բովանդակությամբ:

Եթե Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականին ընդունված կոնվենցիան և դրան կից արձանագրությունները պաշտպանում են միայն մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքները, ապա Խարտիան կոչված է լրացնելու կոնվենցիայով ամրագրված հիմնարար իրավունքների և ազատությունների շարքը՝ պաշտպանության ենթակա սոցիալ-տնտեսական իրավունքների ամբողջացման միջոցով:

Վերանայված սոցիալական խարտիան բաղկացած է նախաբանից, վեց մասերից և հավելվածից:

Նախաբանում տրված են 1961 թվականին ընդունված Եվրոպական սոցիալական խարտիայի տեքստը վերանայելու հիմնավորումները: Մասնավորապես նշվում է Խարտիայի բովանդակության արդիականացման և Նախարարների խորհրդի որոշումներին հարմարեցման, ինչպես նաև Խարտիային նոր խթան հաղորդելու անհրաժեշտությունը:

Խարտիայի 1-ին մասը վերաբերում է մասնակից պետությունների քաղաքականության այն նպատակին, որին նրանք պետք է հասնեն տվյալ մասի 31 կետերով թվարկված խնդիրները լուծելու ճանապարհով: Դրանք խնդիրներ են, որոնք կարող են երաշխավորել Խարտիայով ամրագրված իրավունքների ապահովումը:

Խարտիայի 2-րդ մասը վերաբերում է աշխատանքի և սոցիալական ապահովության բնագավառի այն իրավունքներին, որոնք մասնակից պետությունները հանձն են առնում իրականացնել օրենսդրական բարեփոխումների, տնտեսության զարգացում ապահովելու և հնարավոր այլ ճանապարհներով:

Ընդհանուր առմամբ Խարտիայի այս մասը պարունակում է 31 հոդված:

Խարտիայի 3-րդ մասը վերաբերում է մասնակից պետությունների պարտավորություններին, ըստ որի Խարտիայի 1-ին մասը մասնակից պետությունների համար դիտվում է որպես նրանց նպատակների հայտարարագիր:

Այնուհետև սահմանվում է, որ մասնակից պետություններից յուրաքանչյուրը պետք է իրեն պարտավորված համարի Խարտիայի 2-րդ մասի հետևյալ 9 հոդվածներից առնվազն վեցով՝ հոդվածներ 1-ին, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 12-րդ, 13-րդ, 16-րդ, 19-րդ և 20-րդ: Բացի դա, մասնակից պետությունն իր ընտրությամբ իրեն պարտավորված պետք է համարի Խարտիայի 2-րդ մասի հոդվածների կամ համարակալված կետերի լրացուցիչ քանակով՝ պայմանով, որ այդ հոդվածների կամ համարակալված կետերի ընդհանուր թիվը, որոնցով նա պարտավորվում է, լինի ոչ պակաս 16 հոդվածից կամ ոչ պակաս 63 համարակալված կետից:

Մասնակից պետությունը Խարտիայի վավերացման փաստաթուղթն ի պահ հանձնելու ժամանակ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ծանուցում է նաև ընտրված հոդվածների մասին:

Խարտիայի 4-րդ մասը վերաբերում է Խարտիայում առկա պարտավորությունների իրականացման վերահսկողությանը, ըստ որի այն իրականացվում է նույն կարգով, ինչ նախատեսվել է Եվրոպական սոցիալական խարտիայով սահմանված պարտավորությունների համար:

Խարտիայի 5-րդ մասը վերաբերում է խտրականության բացառմանը, ըստ որի «Սույն Խարտիայում նշված իրավունքներից օգտվելը պետք է երաշխավորվի առանց խտրականության որևէ հիմքի, ինչպիսիք են ռասան, գույնը, սեռը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ կարծիքը, ազգային կամ սոցիալական ծագումը, առողջությունը, ազգային փոքրամասնությանը միացումը, ծնունդը կամ այլ կարգավիճակը»:

Այս մասում անդրադարձ է կատարված նաև պատերազմի կամ հասարակական արտակարգ իրավիճակների ժամանակ իրավունքների սահմանափակմանը, ներպետական օրենսդրությանը կամ միջազգային համաձայնագրերին Խարտիայի առնչությանը, ստանձնած պարտավորությունների կատարման կարգին:

Խարտիայի 6-րդ մասը վերաբերում է ստորագրմանը, վավերացմանը և ուժի մեջ մտնելուն: Այն սահմանում է, որ Խարտիան բաց է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կողմից ստորագրվելու համար:

Համաձայն այս մասի, Խարտիայի ուժի մեջ մտնելը պայմանավորվում է Եվրոպայի խորհրդի առնվազն երեք անդամ պետության կողմից Խարտիայով պարտավորված լինելու մասին համաձայնություն հայտնելով:

Խարտիային կից հավելվածը վերաբերում է Խարտիայի առանձին հոդվածների մեկնաբանմանը:

Հայաստանի Հանրապետությունը Եվրոպայի խորհրդին անդամագրվել է 2001 թ. հունվարի 25-ին, Եվրոպական վերանայված սոցիալական խարտիան ստորագրել է 2001թ. հոկտեմբերի 18-ին, Ազգային ժողովի կողմից այն վավերացվել է 25.12.03 թվականին:

Խարտիան ստորագրելիս արված հայտարարությամբ Հայաստանի Հանրապետությունն իրեն պարտավորված է համարել 1, 5, 6, 7, 8, 17, 18, 20, 22, 24, 27, 28 հոդվածներով, ինչպես նաև.

- 2-րդ հոդվածի 1-6,
- 3-րդ հոդվածի 1-ին,
- 4-րդ հոդվածի 2-5,
- 12-րդ հոդվածի 1, 3,
- 13-րդ հոդվածի 1, 2,
- 14-րդ հոդվածի 2-րդ,
- 15-րդ հոդվածի 2, 3 կետերով:

Առավել պարզ պատկերացնելու համար, թե Հայաստանի Հանրապետությունն ինչպիսի պարտավորություններ է ստանձնել, այստեղ ներկայացվում են թվարկված հոդվածները.

## **Հոդված 1. Աշխատանքի իրավունք**

Աշխատանքի իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են`

1. ընդունել որպես իրենց հիմնական նպատակներից և պարտականություններից մեկը աշխատանքի հնարավորին չափ բարձր և կայուն աստիճանի նվաճումը և պահպանումը` նպատակ ունենալով լիակատար զբաղվածություն ձեռք բերելը,

2. պաշտպանել արդյունավետ կերպով իր ապրուստը վաստակելու աշխատողի իրավունքը նրա կողմից ազատորեն ընտրված ցանկացած աշխատանքով,
3. ստեղծել կամ պահպանել աշխատանքի ազատ տեղավորման ծառայություններ բոլոր աշխատողների համար,
4. օժանդակել կամ ապահովել համապատասխան մասնագիտական ուղղվածություն, ուսուցում և վերականգնում:

## **Հոդված 2. Աշխատանքի արդար պայմանների իրավունքը**

Աշխատանքի արդար պայմանների իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են՝

1. օրական և շաբաթական աշխատանքային ժամերի բանական տևողությունը ապահովելու համար աշխատանքային շաբաթը պետք է աստիճանաբար կրճատվի այն չափով, որը թույլատրվում է արտադրական աճով և այլ համապատասխան գործոններով,
2. ապահովել վճարովի ոչ աշխատանքային օրեր,
3. ապահովել տարեկան նվազագույնը չորսշաբաթյա վճարովի արձակուրդ,
4. վերացնել վտանգները հատկապես անառողջ և վտանգավոր աշխատանքներում, իսկ որտեղ դեռևս հնարավոր չէ, վերացնել կամ զգալիորեն նվազեցնել այս վտանգները, ապահովել աշխատանքային ժամերի կրճատում կամ սահմանել լրացուցիչ վճարովի արձակուրդներ այդ աշխատանքներում ներգրավված աշխատողների համար,
5. տրամադրել մեկշաբաթյա հանգստի ժամանակահատված, որը հնարավորին չափով պետք է համընկնի համապատասխան երկրում կամ տարածաշրջանում ավանդույթով կամ սովորույթով որպես հանգստի օր ճանաչված օրվա հետ,
6. ապահովել, որ աշխատողները հնարավորին չափ արագ և, ցանկացած դեպքում, իրենց աշխատանքի անցնելուց հետո երկու ամսից ոչ ուշ, գրավոր տեղեկացված լինեն պայմանագրի կարևոր ասպեկտների կամ աշխատանքային հարաբերության վերաբերյալ,

## **Հոդված 3. Անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմանների իրավունքը**

Անվտանգ և առողջության համար անվնաս աշխատանքային պայմանների իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը, խորհրդակցելով գործատուների և աշխատողների կազմակերպությունների հետ, պարտավորվում են՝

1. ձևակերպել, իրականացնել և պարբերաբար վերանայել աշխատանքային անվտանգությանը, աշխատանքային առողջությանը և աշխատանքային միջավայրին վերաբերող առանձնահատուկ ազգային քաղաքականություն:
- Այդ քաղաքականության առաջնային նպատակը պետք է լինի աշխատանքային անվտանգության ու առողջության բարելավումը և աշխատանքի ընթացքում ծագող, դրա հետ կապված կամ տեղի ունեցող վթարների և առողջությանը վնասելու հնարավորության կանխումը՝ մասնավորապես նվազեցնելով աշխատանքային միջավայրին հատուկ վտանգների պատճառները:

#### **Հոդված 4. Արդարացի վարձատրման իրավունքը**

Արդարացի վարձատրման իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են՝

1. ճանաչել աշխատողների վարձատրման իրավունքը, որը նրանց և նրանց ընտանիքներին կապահովի պատշաճ կենսամակարդակ,
2. ճանաչել աշխատողների վարձատրման դրույքաչափի ավելացման իրավունքը արտաժամյա աշխատանքի համար, բացառությամբ առանձնահատուկ դեպքերի,
3. ճանաչել կին և տղամարդ աշխատողների նույնարժեք աշխատանքի համար հավասար վճարման իրավունքը,
4. ճանաչել բոլոր աշխատողների՝ աշխատանքից ազատելու վերաբերյալ նախապես ծանուցում ստանալու իրավունքը,
5. թույլատրել աշխատավարձից պահումները միայն ազգային օրենքներով կամ կանոնակարգերով սահմանված պայմաններով և դրանցում նկարագրված չափով կամ կոլեկտիվ համաձայնագրերի կամ արբիտրաժային վճիռների համաձայն: Այս իրավունքների կիրառումը պետք է ձեռք բերվի ազատորեն կնքված կոլեկտիվ համաձայնագրերով կամ աշխատավարձ սահմանող օրենքով սահմանված մեխանիզմով կամ ազգային պայմաններին համապատասխան այլ միջոցներով:

#### **Հոդված 5. Կազմակերպելու իրավունք**

Իրենց տնտեսական և սոցիալական շահերի պաշտպանության համար տեղական, ազգային կամ միջազգային կազմակերպություններ ստեղծելու և այդ կազմակերպություններին միանալու՝ աշխատողների և գործատուների ազատությունը երաշխավորելու կամ ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են, որ ազգային օրենսդրությունը չի խոչընդոտելու և չի կիրառվելու այնպես, որ խոչընդոտի այս ազատությանը: Սույն հոդվածում նախատեսված երաշխիքների՝ ոստիկանության նկատմամբ կիրառման չափը պետք է սահմանվի ազգային օրենքներով և կանոնակարգերով: Ջինված ուժերի անդամների նկատմամբ այս երաշխիքների կիրառումը կարգավորող սկզբունքը և չափը, որով դրանք կկիրառվեն այս կատեգորիայի անձանց նկատմամբ, պետք է հավասարապես սահմանված լինեն ազգային օրենքներում կամ կանոնակարգերում:

#### **Հոդված 6. Կոլեկտիվ գործարքների կնքման իրավունքը**

Կոլեկտիվ գործարքների կնքման իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են՝

1. նպաստել աշխատողների և գործատուների միջև համատեղ խորհրդակցությունների անցկացմանը,
2. անհրաժեշտության դեպքում խթանել մեխանիզմներ գործատուների կամ գործատուների կազմակերպությունների և աշխատողների կազմակերպությունների միջև կամավոր բանակցությունների համար՝ կոլեկտիվ համաձայնագրերի միջոցով աշխատանքի ժամկետները և պայմանները կարգավորելու նպատակով,

3. խթանել աշխատանքային վեճերի կարգավորման համար հաշտարար և կամավոր արբիտրաժի համապատասխան մեխանիզմի ստեղծումն ու օգտագործումը, և ճանաչում են՝

4. շահերի բախման դեպքում աշխատողների և գործատուների համատեղ գործողությունների անցկացման իրավունքը, ներառյալ գործադուլների իրավունքը՝ այն պարտավորություններին ենթարկվելու պայմանով, որոնք կարող են ծագել նախօրոք կնքված կոլեկտիվ համաձայնագրերից:

## **Հոդված 7. Երեխաների և երիտասարդների պաշտպանվածության իրավունքը**

Երեխաների և երիտասարդների պաշտպանվածության իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են՝

1. աշխատանքի ընդունման համար որպես նվազագույն տարիք ապահովել 15 տարեկանը, բացառությամբ այն երեխաների, որոնք զբաղվում են ընդունված թեթև աշխատանքով, առանց վնասելու նրանց առողջությունը, բարոյական կերպարը կամ կրթությունը,

2. աշխատանքի ընդունման համար որպես նվազագույն տարիք ապահովել 18 տարեկանը՝ այն ընդունված աշխատանքների առնչությամբ, որոնք համարվում են վտանգավոր կամ վնասակար են առողջությանը,

3. ապահովել, որ դեռևս պարտադիր կրթության ենթակա անձինք չզբաղվեն այնպիսի աշխատանքով, որի պատճառով կզրկվեն իրենց կրթությունից լրիվ օգտվելու հնարավորությունից,

4. ապահովել, որ 18 տարեկանից ցածր անձանց աշխատաժամերը սահմանափակվեն՝ ելնելով նրանց զարգացման անհրաժեշտությունից և, մասնավորապես, նրանց մասնագիտական ուսման նկատառումներից,

5. ճանաչել երիտասարդ աշխատողների և աշակերտների՝ արդար աշխատավարձի կամ այլ համապատասխան նպաստների իրավունքը,

6. ապահովել, որ սովորական աշխատաժամանակի ընթացքում գործատուի համաձայնությամբ մասնագիտական ուսման համար երիտասարդների ծախսած ժամանակը համարվի որպես աշխատանքային օրվա բաղկացուցիչ մաս,

7. ապահովել, որ 18 տարեկանից ցածր աշխատող անձինք տարեկան նվազագույնը չորսշաբաթյա վճարովի արձակուրդի իրավունք ունենան,

8. ապահովել, որ 18 տարեկանից ցածր աշխատող անձինք չկատարեն գիշերային աշխատանք, բացառությամբ ազգային օրենքներով կամ կանոնակարգերով սահմանված որոշակի աշխատանքների,

9. ապահովել, որ ազգային օրենքներով կամ կանոնակարգերով նախատեսված աշխատանքով զբաղված 18 տարեկանից ցածր տարիքի աշխատող անձինք ենթարկվեն կանոնավոր բժշկական ստուգումների,

10. երաշխավորել հատուկ պաշտպանություն ֆիզիկական և բարոյական վտանգներից, որոնց ենթակա են երեխաները և երիտասարդները և, մասնավորապես, նրանց աշխատանքից ուղղակիորեն կամ անուղղակիորեն ծագող վտանգների դեմ:



## **Հոդված 8. Աշխատող կանանց մայրության պաշտպանվածության իրավունքը**

Աշխատող կանանց մայրության պաշտպանվածության իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են՝

1. աշխատող կանանց ապահովել առնվազն մինչև տասնչորսշաբաթյա արձակուրդով երեխայի ծննդից առաջ և հետո՝ միասին վերցրած՝ վարձատրվող արձակուրդի, սոցիալական ապահովության համապատասխան նպաստների կամ հասարակական ֆոնդերից ստացվող նպաստների հիման վրա,
2. համարել անօրինական գործատուի՝ կնոջը աշխատանքից ազատման ծանուցում տալը այն ժամանակաշրջանից սկսած, երբ կինը ծանուցում է իր գործատուին իր հղիության մասին, մինչև իր մայրությանը հատկացված արձակուրդի վերջը, կամ՝ նրան աշխատանքից ազատման ծանուցում տալը այնպիսի ժամանակ, որ ծանուցման ժամկետը կվերջանա վերոնշյալ ժամանակաշրջանում,
3. ապահովել, որ իրենց երեխաներին կերակրող մայրերը այդ նպատակով բավարար չափով լրացուցիչ ժամանակի իրավունք ունենան,
4. կանոնակարգել գիշերային ժամերին աշխատող հղի, նոր ծննդաբերած կանանց կամ իրենց երեխաներին կերակրող կանանց աշխատանքը,
5. արգելել ստորերկրյա հանքային արդյունաբերությունում վտանգավորության, առողջության վնասակարության կամ դժվար բնույթի պատճառով անհամապատասխան ցանկացած այլ աշխատանքում հղի կանանց, նոր ծննդաբերած կամ իրենց երեխաներին կերակրող կանանց աշխատանքը, ինչպես նաև համապատասխան միջոցներ ձեռնարկել այդ կանանց աշխատանքի իրավունքները պաշտպանելու համար:

## **Հոդված 12. Սոցիալական ապահովության իրավունքը**

Սոցիալական ապահովության իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են՝ 1. հաստատել սոցիալական ապահովության համակարգ կամ այն պահպանել

3. փորձել սոցիալական ապահովության համակարգը աստիճանաբար բարձրացնել ավելի բարձր մակարդակի:

## **Հոդված 13. Բժշկական և սոցիալական օգնության իրավունքը**

Սոցիալական և բժշկական օգնության իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են՝

1. երաշխավորել, որ ցանկացած անձի, որը չունի համապատասխան ռեսուրսներ և ի վիճակի չէ ապահովելու նման ռեսուրսներ իր սեփական ջանքերով կամ այլ աղբյուրներից, մասնավորապես՝ սոցիալական ապահովության ծրագրով տրվող նպաստներով, կցուցաբերվի համապատասխան օգնություն, իսկ հիվանդության դեպքում՝ նրա վիճակով պայմանավորված խնամք,
2. երաշխավորել, որ նման օգնություն ստացող անձինք այդ պատճառով իրենց քաղաքական կամ սոցիալական իրավունքների նվազման արդյունքում չտառապեն:

## **Հոդված 14. Սոցիալական ապահովության ծառայություններից օգտվելու իրավունքը**

Սոցիալական ապահովության ծառայություններից օգտվելու իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են՝

2. խրախուսել անհատների և կամավորների կամ այլ կազմակերպությունների մասնակցությունը նման ծառայությունների ստեղծման և պահպանման գործին:

## **Հոդված 15. Հաշմանդամների անկախության, սոցիալական ինտեգրացման և համայնքի կյանքում մասնակցության իրավունքը**

Հաշմանդամների անկախության, սոցիալական ինտեգրացման և հասարակական կյանքում մասնակցության իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով, անկախ տարիքից, նրանց հաշմանդամության առաջացման պատճառներից և բնույթից, Կողմերը պարտավորվում են, մասնավորապես՝

2. նպաստել նրանց աշխատանքի տեղավորմանը բոլոր միջոցներով, որոնք ուղղված կլինեն խրախուսելու գործատուներին վարձելու և աշխատեցնելու, հաշմանդամներին աշխատանքային սովորական միջավայրում և հարմարեցնելու աշխատանքային պայմանները հաշմանդամների կարիքներին կամ, եթե դա հնարավոր չէ հաշմանդամության պատճառով. ապա, հաշմանդամության մակարդակի համաձայն՝ մշակել կամ ստեղծել պաշտպանված աշխատանքային պայմաններ: Առանձնահատուկ դեպքերում նման միջոցառումների համար կարելի է դիմել մասնագիտացված կամ օժանդակող ծառայությունների օգնությանը,

3. ապահովել նրանց լրիվ սոցիալական ինտեգրացումը և համայնքի կյանքում մասնակցությունը այնպիսի միջոցներով, ներառյալ տեխնիկական օգնությունը, որոնք նպատակաուղղված են հաղթահարելու հաղորդակցության և շարժունակության արգելքները և հնարավորություն տալու մատչելի դարձնել տրանսպորտը, բնակատեղին, մշակության գործունեությունները և ազատ ժամանցը:

## **Հոդված 17. Երեխաների և երիտասարդների սոցիալական, իրավական և տնտեսական պաշտպանվածության իրավունքը**

Երեխաների և երիտասարդների՝ նրանց անձնավորությունը և ֆիզիկական ու մտավոր ընդունակությունների ամբողջական զարգացումը խրախուսող միջավայրի ստեղծման իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են ուղղակիորեն կամ, համագործակցելով պետական և մասնավոր կազմակերպությունների հետ, ձեռնարկել բոլոր համապատասխան և անհրաժեշտ միջոցները, որոնք ուղղված կլինեն՝

1. ա. երաշխավորելու, որ երեխաները և երիտասարդները, հաշվի առնելով նրանց ծնողների իրավունքները և պարտականությունները, ունեն իրենց համար անհրաժեշտ խնամքի, օգնության, կրթության և ուսման իրավունք, մասնավորապես՝ ապահովելով այս նպատակի համար բավարար և համապատասխան հաստատությունների և ծառայությունների ստեղծումը կամ պահպանումը,

բ. պաշտպանելու երեխաներին և երիտասարդներին արհամարհանքից, բռնությունից կամ շահա-գործումից,

գ. ապահովելու պետական հատուկ պաշտպանություն և օգնություն ժամանակավորապես կամ մշտապես ընտանեկան աջակցությունից զրկված երեխաների և երիտասարդների համար,

2. ապահովելու երեխաների և երիտասարդների՝ տարրական և միջնակարգ դպրոցներում անվճար կրթությունը, ինչպես նաև խրախուսել դպրոցներ կանոնավոր հաճախելը:

### **Հոդված 18. Մյուս Կողմերի տարածքներում վճարովի աշխատանքով զբաղվելու իրավունքը**

Մյուս Կողմերի տարածքներում շահավետ աշխատանքով զբաղվելու իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են՝

1. կիրառել գործող կանոնակարգերը ազատական ոգով,
2. պարզեցնել գործող ձևականությունները և կրճատել կամ վերացնել օտարերկրյա աշխատողներից կամ նրանց գործատուներից գանձվող պետական տուրքերը և այլ վճարումները,
3. անհատական կամ կոլեկտիվ հիմունքով ազատականացնել օտարերկրյա աշխատողների աշխատանքը կարգավորող կանոնակարգերը, և ճանաչել՝
4. երկիրը թողնելու իրենց քաղաքացիների իրավունքը՝ մյուս Կողմերի տարածքներում շահավետ աշխատանքով զբաղվելու համար:

### **Հոդված 19. Միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների պաշտպանվածության և օգնություն ստանալու իրավունքը**

Ցանկացած մյուս Կողմի տարածքում միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների պաշտպանվածության և օգնություն ստանալու իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են՝

1. պահել կամ համոզվել, որ կան համապատասխան և անվճար ծառայություններ նման աշխատողներին օգնություն ցուցաբերելու, հատկապես, ճշգրիտ տեղեկատվություն ձեռք բերելու համար և ձեռնարկել ազգային օրենքներով ու կանոնակարգերով թույլատրելի բոլոր համա-պատասխան քայլերը արտագաղթին և ներգաղթին վերաբերող ապակողմնորոշիչ պրոպագանդայի դեմ,
2. իրենց իրավասության սահմաններում ձեռնարկել համապատասխան միջոցներ, որոնք կհեշտացնեն նման աշխատողների և նրանց ընտանիքների մեկնումը, ուղևորությունը և դիմավորումը, և իրենց իրավասության սահմաններում ապահովել համապատասխան ծառայություններ՝ ուղևորության ընթացքում առողջության, բժշկական խնամքի և հիգիենիկ բավարար պայմանների ապահովման նպատակով,
3. անհրաժեշտության դեպքում խթանել պետական և մասնավոր սոցիալական ծառայությունների համագործակցությունը ներգաղթման և արտագաղթման երկրներում,
4. իրենց տարածքներում օրինականորեն գտնվող այսպիսի աշխատողների համար ապահովել ոչ պակաս բարենպաստ վերաբերմունք, քան իրենց քաղաքացիների նկատմամբ կիրառվող վերաբերմունքն է հետևյալ հարցերի կապակցությամբ, այնքանով, որքանով տվյալ հարցերը կարգավորվում են օրենքով կամ կանոնակարգերով կամ ենթակա են վարչական մարմինների վերահսկողությանը.

ա. վարձատրությունը և աշխատանքի վերցնելու և աշխատանքային այլ պայմանները,

բ. արհմիություններին անդամակցությունը և կոլեկտիվ գործարքներից ստացվող եկամուտներից օգտվելը,

գ. բնակատեղը,

5. իրենց տարածքներում օրինականորեն գտնվող այսպիսի աշխատողների համար ապահովել ոչ պակաս բարենպաստ վերաբերմունք, քան իրենց քաղաքացիների նկատմամբ կիրառվող վերաբերմունքն է աշխատանքային հարկերի, աշխատող անձանց կողմից վճարվող տուրքերի կամ վճարումների առնչությամբ,

6. հնարավորին չափ դյուրացնել այդ տարածքում հաստատվելու՝ թույլտվություն ստացած օտարերկրյա աշխատողի ընտանիքի վերամիավորումը,

7. իրենց տարածքներում օրինականորեն գտնվող այսպիսի աշխատողների համար ապահովել ոչ պակաս բարենպաստ վերաբերմունք, քան իրենց քաղաքացիների նկատմամբ կիրառվող վերաբերմունքն է՝ սույն հոդվածում նշված հարցերին վերաբերող իրավական վարույթների առնչությամբ,

8. ապահովել, որ իրենց տարածքներում օրինականորեն բնակվող այսպիսի աշխատողները չարտաքսվեն, եթե նրանք չեն վտանգում երկրի ազգային անվտանգությունը կամ չեն կատարում հասարակական շահերին կամ բարոյականությանը հակասող հանցագործություններ,

9. օրենքով հաստատված սահմաններում թույլատրել այդպիսի աշխատողների վաստակած գումարների և տնտեսումների որևէ մասի փոխանցումը՝ իրենց ցանկությամբ,

10. տարածել սույն հոդվածով նախատեսված պաշտպանությունը և աջակցությունը ինքնուրույն աշխատող միգրանտների վրա այնքանով, որքանով կիրառվում են նման միջոցառումները,

11. նպաստել և դյուրացնել ընդունող պետության ազգային լեզվի կամ, եթե դրանք մի քանիսն են, այդ լեզուներից մեկի ուսուցումը միգրանտ աշխատողներին և նրանց ընտանիքների անդամներին,

12. իրագործելիության սահմաններում նպաստել և դյուրացնել միգրանտ աշխատողի երեխաներին միգրանտ աշխատողի մայրենի լեզվի ուսուցումը:

**Հոդված 20. Առանց սեռական խտրականության՝ աշխատանքի և մասնագիտական հարցերում հավասար հնարավորությունների և հավասար վերաբերմունքի իրավունքը**

Առանց սեռական խտրականության՝ աշխատանքի և մասնագիտական հարցերում հավասար հնարավորությունների և հավասար վերաբերմունքի իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են՝

ճանաչել այդ իրավունքը և համապատասխան միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու կամ խթանելու դրա կիրառումը հետևյալ ոլորտներում՝

ա. աշխատանքի մատչելիությունը, աշխատանքի ազատումից և մասնագիտական վերամիավորումից պաշտպանվածությունը,

բ. մասնագիտական ուղղվածությունը, ուսուցումը, վերուսուցումը և վերականգնումը,

գ. աշխատանքի պայմանները և աշխատանքային պայմանները, ներառյալ վարձատրությունը,

դ. աշխատանքային զարգացումը, ներառյալ պաշտոնեական առաջխաղացումը:

### **Հոդված 22. Աշխատանքային պայմանների և աշխատանքային միջավայրի սահմանմանը և բարելավմանը մասնակցելու իրավունքը**

Աշխատողներին աշխատանքային պայմանների և աշխատանքային միջավայրի սահմանմանը և բարելավմանը մասնակցելու իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են, ազգային օրենսդրության համաձայն և գործնականորեն, ընդունել կամ խրախուսել այնպիսի միջոցներ, որոնք հնարավորություն կտան աշխատողներին կամ նրանց ներկայացուցիչներին աջակցելու՝

ա. աշխատանքային պայմանների, աշխատանքի կազմակերպման և աշխատանքային միջավայրի սահմանմանը և բարելավմանը,

բ. ձեռնարկության շրջանակներում առողջության և անվտանգության պաշտպանությանը,

գ. ձեռնարկության շրջանակներում սոցիալական և սոցիալ-մշակութային ծառայությունների և մեխանիզմների կազմակերպմանը,

դ. նշված հարցերի վերաբերյալ կանոնակարգերի պահպանման նկատմամբ վերահսկողությանը:

### **Հոդված 24 Աշխատանքից ազատելու դեպքերում պաշտպանվածության իրավունքը**

Աշխատանքից ազատելու դեպքերում աշխատողների պաշտպանվածության իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են ճանաչել՝

ա. բոլոր աշխատողների իրավունքը այն մասին, որ նրանց աշխատանքից ազատելու դեպքում չպետք է դադարի առանց նման ազատման համար հիմնավորված պատճառների, որոնք կապված են նրանց ընդունակության կամ վարքի հետ կամ հիմնված են ձեռնարկության, հաստատության կամ ծառայության գործնական պահանջների վրա,

բ. պատշաճ փոխհատուցման կամ այլ համապատասխան օգնության նկատմամբ աշխատողների իրավունքը, որոնք աշխատանքից ազատվել են առանց հիմնավորված պատճառի:

Այս նպատակով Կողմերը պարտավորվում են երաշխավորել, որ աշխատողը, որը պնդում է իրեն աշխատանքից ազատելու անհիմն լինելը, իրավունք կունենա բողոքարկելու որևէ անկողմնակալ մարմնի:

## **Հոդված 27. Ընտանեկան պարտավորություններով աշխատողների հավասար հնարավորությունների և հավասար վերաբերմունքի իրավունքը**

Ընտանեկան պարտավորություններով տղամարդկանց և կանանց համար, ինչպես նաև նման աշխատողների և այլ աշխատողների միջև հնարավորության և վերաբերմունքի հավասարության իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են՝

1. համապատասխան միջոցներ ձեռնարկել՝

ա. հնարավորություն տալու ընտանեկան պարտավորություններով աշխատողներին՝ ընդունվելու աշխատանքի և մնալու աշխատանքում, ինչպես նաև վերադառնալ աշխատանքի ընտանեկան պարտավորությունների կատարման հետևանքով բացակայությունից հետո, ներառյալ միջոցառումները մասնագիտական ուղղվածության և ուսուցման բնագավառում,

բ. հաշվի առնելու իրենց կարիքները աշխատանքի պայմանների և սոցիալական ապահովության շրջանակներում,

գ. մշակել կամ ապահովել պետական կամ մասնավոր ծառայություններ, մասնավորապես՝ ցերեկային ժամերին երեխաների խնամքի ծառայություններ կամ երեխաների խնամքի համար այլ միջոցառումներ,

2. մայրության արձակուրդից հետո ընկած ժամանակաշրջանում երեխայի խնամքի համար ծնողներից մեկին ապահովել արձակուրդ ստանալու հնարավորությամբ, ընդ որում, արձակուրդի տևողությունը և պայմանները պետք է որոշվեն ազգային օրենսդրությամբ, կոլեկտիվ համաձայնագրերով կամ գործնականորեն,

3. ապահովել, որ ընտանեկան պարտավորությունները, որպես այդպիսին, հիմնավորված պատճառ չհանդիսանան աշխատանքի դադարեցման համար:

## **Հոդված 28. Ձեռնարկությունում և նրանց տրամադրվելիք մեխանիզմներում աշխատողների ներկայացուցիչների պաշտպանվածության իրավունքը**

Աշխատողների ներկայացուցիչների գործառույթների իրականացման իրավունքի արդյունավետ կիրառումը ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են երաշխավորել, որ ձեռնարկությունում՝

ա. նրանք կօգտվեն հուսալի պաշտպանությունից իրենց վնասող գործողություններից, ներառյալ ձեռնարկությունում որպես աշխատողների ներկայացուցիչներ նրանց կարգավիճակի կամ գործունեությունների հիման վրա աշխատանքից ազատումը,

բ. նրանց կտրվեն այնպիսի հնարավորություններ, որոնք կարող են հնարավորության տալ նրանց արագ և արդյունավետ ձևով իրականացնելու իրենց գործառույթները՝ հաշվի առնելով երկրի արդյունաբերական հարաբերությունների համակարգը և համապատասխան ձեռնարկության կարիքները, ծավալները և հնարավորությունները:

Համաձայն Եվրոպական սոցիալական խարտիայի /ոչ վերանայված խարտիայի / 21-րդ հոդվածի, այն վավերացրած պետությունները պարտավոր են յուրաքանչյուր երկու տարին մեկ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին հաշվետվություն ներկայացնել իրենց ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի մասին:

Հայաստանի Հանրապետությունն իր ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի վերաբերյալ արդեն ներկայացրել է երկու զեկույց՝ 2001-2004, 2004-2006 թվականների համար:

Հայաստանի Հանրապետության հաշվետվություններով, ի կատարումը Խարտիայի հոդվածներով ստանձնած պարտավորությունների, վկայակոչվել են ՀՀ Սահմանադրությունը, «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, «Պետական սոցիալական ապահովության մասին», «Աշխատանքի վարձատրության մասին», «Աշխատանքի պետական տեսչության մասին», «Արհեստակցական միությունների մասին», «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքները, Աշխատանքային, Քրեակատարողական օրենսգրքերը, զբաղվածության ամենամյա պետական ծրագրերը:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված են Խարտիայով պաշտպանվող հետևյալ իրավունքները՝ աշխատանքի ազատ ընտրության, հարկադիր աշխատանքից ազատ լինելու, աշխատանքի դիմաց արդարացի և օրենքով սահմանված նվազագույնից ոչ ցածր վարձատրության, անվտանգության ու հիգենիայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների, գործադուլի, հանգստի, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, սոցիալական ապահովության, բնակարանային պայմանների բարելավման իրավունքները, ինչպես նաև մինչև 16 տարեկան երեխաների, մայրության պաշտպանության պետության պարտավորությունները:

Սահմանդրական նորմերով ամրագրված իրավունքների իրականացումը պետք է երաշխավորվեն համապատասխան օրենքներով և իրավական այլ ակտերով:

Օրինակ, որպես Խարտիայի 1-ին հոդվածով նախատեսված աշխատանքի իրավունքի իրականացումն ապահովող լիազոր մարմին «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքով ձանաչված է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, որը պարտավորություն ունի մշակել և կառավարության հաստատմանը ներկայացնել զբաղվածության ամենամյա պետական ծրագրերը:

Նախարարության կազմում գործում է Ջբաղվածության պետական ծառայություն գործակալությունը, որը հաշվառում է աշխատանք փնտրող քաղաքացիներին, շնորհում է գործազուրկի կարգավիճակ, տրամադրում է գործազրկության նպաստ, միջոցներ է ձեռնարկում աշխատանքի տեղավորման ուղղությամբ, կազմակերպում է մասնագիտական ուսուցումն և վերապատրաստման համապատասխան կուրսեր:

Այս միջոցառումներն իրականացվում են սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի և պետական բյուջեի միջոցների հաշվին:

Կառավարության տնտեսական ծրագրերը հիմքում պետք է ունենան փոքր և միջին բիզնեսի զարգացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը, աշխատուժի և աշխատատեղերի ողջամիտ համամասնության ապահովմանն ուղղված նպատակներ:

Այս ձանաչարհով է, որ պետք է հասնել լիակատար զբաղվածության ձեռքբերմանը, ազատորեն աշխատանք ընտրելու և արդյունավետ կերպով ազատորեն ընտրած աշխատանքի միջոցով իր ապրուստը վաստակելու աշխատողի իրավունքների ապահովմանը:

Այսօրվա դրությամբ գործազրկությունը Հանրապետությունում մեծ չափերի է հասնում, աշխատուժի և աշխատատեղերի ողջամիտ համամասնության մասին առայժմ խոսք լինել չի կարող:

Չնայած դրան, չի կարող արձանագրվել, որ Հայաստանի Հանրապետությունը չի կատարում Խարտիայով ստանձնած իր պարտավորությունները, քանի որ լիակատար զբաղվածության հասնելը պայմանավորված է տնտեսական զարգացման բարձր մակարդակի ապահովմամբ, նպատակ, որը նախատեսված է կառավարության տնտեսական զարգացման ծրագրերով:

Խարտիայով ստանձնած պարտավորությունների կատարման գնահատականները տրվում են ըստ իրականացվող ծրագրերի:

Իրենց տնտեսական և սոցիալական շահերը պաշտպանելու նպատակով միավորվելու, կազմակերպություններ ստեղծելու և դրանց միանալու աշխատողների իրավունքն ամրագրված է Սահմանադրությամբ, Աշխատանքային օրենսգրքով, «Արհեստակցական միությունների մասին» օրենքով:

Աշխատանքային օրենսգրքով մեկ ամբողջական գլուխ նվիրված է սոցիալական գործընկերությանը:

Չնայած օրենսդրական հիմքերի առկայությանը, այնուամենայնիվ ներկա դրությամբ արհեստակցական միությունները կայացված համարվել չեն կարող: Այդպիսիք ձևավորված են խոշոր արտադրական ձեռնարկություններում, սակայն Խորհրդային ժամանակների ինտրոդուկցիայով դրանք հիմնականում կառավարվում են գործատուների կողմից, պասիվ են աշխատողների շահերի պաշտպանության հարցերում: Սա այն դեպքում, երբ արհեստակցական կազմակերպությունների ջանքերով է, որ կոլեկտիվ պայմանագրերով պետք է սահմանվեին գործատուի պարտականությունները՝ շահույթի մեծացմանը զուգընթաց աշխատանքի վարձատրության ավելացումը, աշխատողների բնակկենցաղային պայմանների բարելավման նպատակներին ուղղված ներդրումներ կատարելը, նրանց սոցիալական պայմանների բարելավմանն աջակցելը: Կադրերի ընտրության, աշխատողին գործատուի նախաձեռնությամբ աշխատանքից ազատման, արտադրական պլանների կազմման, արտադրության վերազինման և այլ գործընթացներին արհեստակցական կազմակերպության մասնակցության ապահովումը նույնպես ենթակա է նախատեսման կոլեկտիվ պայմանագրերով, ինչը կնշանակեր, որ ապիովված է աշխատողների մասնակցությունն արտադրության կազմակերպման մասին Խարտիայի պահանջը:

Եթե այսօր կա անհամաչափություն գործատուի շահույթի և աշխատանքի վարձատրության միջև, ապա դա հետևանք է արհեստակցական կազմակերպությունների կայացած չլինելու, քանի որ չկա աշխատողների այն միավորումը, որը կարող է ներկայացնել նման պահանջներ և հասնել գործատուի կողմից դրանց ընդունմանը: Աշխատողների կազմակերպության օրինական և հիմնավորված պահանջները գործատուի կողմից չընդունելը գործադուլի օրինական հիմքերից է:

«Սահմանադրությամբ ամրագրված Գործադուլի իրավունքի իրականացման կարգն ու պայմանները սահմանված են Աշխատանքային օրենսգրքով: Գործադուլ հայտարարելու, գործատուին համապատասխան պահանջներ ներկայացնելու խնդիրները դարձյալ կապվում են արհեստակցական կազմակերպությունների կայացած լինելու հետ, հակառակ դեպքում գործադուլը կարող է կրել տարրերային բնույթ և դիտվել որպես անօրինական:

Քանի դեռ աշխատողներն իրենց սոցիալական շահերը պաշտպանելու նպատակով չեն կազմակերպվել, չեն ստեղծել իրենց միավորումները, նրանց աշխատանքային իրավունքների պաշտպանվածությունը պայմանավորված է լինելու գործատուի բարի կամքով:

Այս տեսակետից է, որ պետության կողմից Խարտիայի 2-րդ հոդվածի 1-6 կետերի, 4-րդ հոդվածի 2-5 կետերի, 6-րդ հոդվածի պահանջների կատարումը դիտարկվում է Խարտիայի 5-րդ հոդվածի կոնտեքստում:

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել որ Խարտիայով ստանձնած պետության պարտավորություններն օրենսդրորեն ամրագրված են՝ հավասար աշխատանքի դիմաց հավասար վարձատրություն, աշխատանքի և հանգստի ժամերի օրենսդրորեն ամրագրում, արտաժամյա աշխատանքի սահմանափակում, մինչև 16 տարեկան երեխաների աշխատանքի արգելում, անվտանգ աշխատանքային պայմանների ապահովում և այլն: Խնդիր է օրենսդրական նորմերի կիրառումն ապահովող մեխանիզմների ներդրումը:

Օրինակ, որպես աշխատանքային իրավունքների պաշտպանության մեխանիզմ ստեղծված է աշխատանքի պետական տեսչություն, որը պարտավոր է և իրավասու է արձանագրել ու կանխել տվյալ բնագավառի ցանկացած խախտում: Սակայն այս կառույցն առ այսօր իրեն զգալ չի տալիս այն ծավալով, ինչ ծավալ անհրաժեշտ է աշխատանքային



իրավունքների խախտումները բացառելու նպատակով: Որքան էլ նոր է կառույցը, այնուամենայնիվ արդեն իսկ խոսք է գնում կառույցում կոռուպցիայի տարածում ստացած լինելու մասին:

Օրենսդրությամբ ամրագրված է սեռական խտրականության անթույլատրելիությունն աշխատանքի ընդունման, աշխատանքի վարձատրության և ընդհանրապես աշխատանքի ընտրության հավասար հնարավորությունների ապահովման հարցերում: Չնայած դրան, նման խտրականությունն առկա է աշխատանքի ընդունման, պաշտոնում առաջխաղացման, աշխատանքի վարձատրության և նման այլ հարաբերություններում:

Երբ գործ ունենք հատկապես մասնավոր գործատուների հետ, կարևոր է, որ իրենց խտրականության զոհեր համարող աշխատողները կամ աշխատանք փնտրողները մինչև վերջ օգտվեն իրավունքի պաշտպանության օրենքի ընձեռնած հնարավորությունից՝ ընդհուպ դատարան դիմելը: Կարևոր չպետք է համարել այն, որ դրական արդյունքը չի երաշխավորված, կարևորը խնդիրը հրապայնականացնելն է, առկա խնդիրների վրա ուշադրություն հրավիրելը, ինչը կնպաստի գործատուների զգաստացմանը, կամայականության զսպմանը:

Չվիճարկելով այն հանգամանքը, որ կա օրենսդրության կատարելագործման, օրենքի կիրառումն ապահովող առավել գործուն մեխանիզմների սահմանման, այնուամենայնիվ առաջնային խնդիր ենք համարում իրավունքի պաշտպանության անհրաժեշտության հարցերում քաղաքացիների հետևողականության և ակտիվության բարձրացումը:

Այստեղ անդրադարձ չի կատարվում Աշխատանքային օրենսգրքում և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ օրենսդրական ակտերում տեղ գտած, մեր կարծիքով, վիճարկելի կամ անընդունելի նորմերին, նկատի ունենալով, որ այդ հարցերը լուսաբանված են մեկ այլ ձեռնարկում: Այստեղ կարևորվել է խարտիայով պետության ստանձնած պարտավորություններին ծանոթացումը:

## **ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՎ ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Երեւանների և կանանց աշխատանքային իրավունքների առանձնահատկությունները պայմանավորված են առաջին հերթին նրանց ֆիզիոլոգիական առանձնահատկություններով: Երեւանյի դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար պայմաններ ապահովելու, մայրության նկատմամբ առանձնակի հոգածություն դրսևորելու անհրաժեշտությամբ:

«Երեւանների իրավունքների մասին», «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիաները և հատկապես «Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան», կանանց և երեւանների իրավունքները առանձնացնելով որպես հատուկ ուշադրության արժանի բնագավառ, հատկապես կարևորել են նրանց աշխատանքային իրավունքների պաշտպանության առանձնահատկությունները:

Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի 7 հոդվածը նվիրված է աշատանքի բնագավառում երեւանների և երիտասարդների պաշտպանվածության իրավունքին, իսկ 8 հոդվածն անվանված է «Աշխատող կանանց մայրության պաշտպանվածության իրավունքը»:

Միջազգային այս փաստաթղթերով ամրագրված սկզբունքները, որոնք վերաբերում են կանանց և երեւանների աշխատանքային իրավունքների պաշտպանությանը՝ որպես հիմնարար սկզբունքներ, ամրագրվել են նաև ՀՀ Սահնադրության, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի և աշխատանքային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի համապատասխան նորմերով:

Այս ձեռնարկում փորձ է արված հարց ու պատասխանի կարգով ներկայացնել կանանց և երեւանների աշխատանքային իրավունքներին վերաբերող այն առանձնահատկությունները, որոնք նախատեսված են ՀՀ գործող օրենսդրությամբ:

### **Ա. Երեւանների աշխատանքային իրավունքներ**

#### **Հարց 1. - Ո՞վ է համարվում երեւան և ո՞ր տարիքից է թույլատրվում երեւանյի հետ կնքել աշխատանքային պայմանագիր**

Երեւան է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր ոք, բացառությամբ այն դեպքերի, երբ նա օրենքով սահմանված կարգով գործունակություն է ձեռք բերում կամ գործունակ է ճանաչվում ավելի վաղ («Երեւանյի իրավունքների մասին» օրենք, հոդված1):

«Երեւան» հասկացությունն անմիջական առնչություն ունի քաղաքացու գործունակություն» հասկացության հետ այն առումով, որ եթե քաղաքացու իրավունակությունը ծագում է նրա ծննդյան պահին և դադարում է մահվան պահին, ապա գործունակության ծագումը պայմանավորվում է քաղաքացու որոշակի տարիքի հասնելով:

Համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 24 հոդվածի, «իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը /քաղաքացիական գործունակություն/ լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ 18 տարեկան դառնալու պահից :

16 տարին լրացած անչափահասը կարող է լրիվ գործունակ ճանաչվել, եթե նա աշխատում է աշխատանքային պայմանագրով կամ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ :

Այն դեպքում, երբ օրենքով թույլատրվում է ամուսնանալ մինչև 18 տարեկան դառնալը, քաղաքացին լրիվ ծավալով գործունակություն է ձեռք բերում ամուսնանալու պահից :

Ամուսնանալու պահից ձեռք բերված գործունակությունը լրիվ ծավալով պահպանվում է նաև մինչև 18 տարեկան դառնալն ամուսնալուծվելուց հետո» :

Քաղաքացու գործունակությանը վերաբերող այս սկզբունքների հիման վրա է, որ «Երեխայի մասին» օրենքով և Աշխատանքային օրենսգրքով սահմանվել են երեխաների աշխատանքային իրավունքների առանձնահատկությունները :

«Յուրաքանչյուր երեխա ունի իր տարիքային հնարավորություններին, զարգացման առանձնահատկություններին և ունակություններին համապատասխան մասնագիտություն ստանալու, օրենքով չարգելված աշխատանքային գործունեություն ծավալելու իրավունք:

Երեխայի հետ աշխատանքային պայմանագիր կարող է կնքվել նրա 16 տարին լրանալուց հետո, բացառությամբ ժամկետային աշխատանքային պայմանագրերի («Երեխայի իրավունքների մասին» օրենք, հոդված 19):

«Աշխատանքային օրենսգիրքն ավելի մանրամասն է անդրադարձել երեխայի՝ աշխատանքային իրավահարաբերությունների մասնակցելու հարցին, մասնավորապես 15 հոդվածում նշվում է «Աշխատանքային իրավունակությունը և իր գործողություններով աշխատանքային իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար աշխատանքային պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը (աշխատանքային գործունակություն) լրիվ ծավալով ծագում է տասնվեց տարեկան դառնալու պահից, բացառությամբ սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերի»:

Աշխատող են համարվում նաև ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ աշխատանքային պայմանագրով աշխատող տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անչափահաս քաղաքացիները :

Մինչև տասնչորս տարեկան քաղաքացիների հետ աշխատանքային պայմանագիր կնքելը կամ նրանց աշխատանքի ներգրավելը արգելվում է («Աշխատանքային օրենսգրք, հոդված 17) :

## **Հարց 2. - Որո՞նք են այն լրացուցիչ փաստաթղթերը, որ պահանջվում են երեխային աշխատանքի ընդունելիս**

- Երեխայի հետ աշխատանքային պայմանագիր կնքելիս գործատուն պարտավոր է պահանջել տեղեկանք առողջական վիճակի մասին («Աշխատանքային օրենսգիրք հոդված 89).
- ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությունը, եթե աշխատանքի է ընդունվում տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անչափահաս քաղաքացին («Աշխատանքային օրենսգիրք հոդված 89):

## **Հարց 3. - Որքա՞ն է կազմում աշխատաժամանակի տևողությունը աշխատող երեխաների համար**

Տասնչորսից մինչև տասնվեց տարեկան աշխատողների համար սահմանվում է աշխատաժամանակի կրճատ տևողություն՝ շաբաթական 24 ժամ, տասնվեցից մինչև տասնութ տարեկանների համար՝ շաբաթական 36 ժամ (ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, հոդված 140):

Մինչև 18 տարեկան աշխատողներին արտաժամյա աշխատանքներում ներգրավելն արգելվում է (ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, հոդված 144):

#### **Հարց 4. - Ի՞նչ աշխատանքների կատարմանը չեն կարող ներգրավվել երեխաները**

Երեխաները չեն կարող ներգրավվել կատարելու

1) ծանր աշխատանքներ.

2) թունավոր, քաղցկեղածին կամ առողջության համար վտանգավոր գործոնների ազդեցությամբ արտադրություններում աշխատանքներ.

3) աշխատանքներ, որոնց կատարման ժամանակ հնարավոր է իոնացած ռադիացիայի ազդեցությունը.

4) աշխատանքներ, որոնց կատարման ժամանակ առկա է դժբախտ պատահարների կամ մասնագիտական հիվանդություններով հիվանդանալու մեծ հավանականություն, ինչպես նաև աշխատանքներ, որոնց անվտանգ իրականացումը պահանջում է բարձր զգոնություն կամ փորձառություն (ՀՀ Աշխատանքային օրենսգիրք հոդված 257):

Վնասակար համարվող աշխատանքների ցանկը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Մինչև 18 տարեկան անձանց, հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար ծանր և վնասակար համարվող աշխատանքների ցանկը հաստատելու մասին» N2308 որոշմամբ:

#### **Հարց 5. - Արդյո՞ք թույլատրվում է երեխաներին ներգրավվել արտաժամյա և գիշերային աշխատանքների**

- Մինչև 18 տարեկան աշխատողները արտաժամյա աշխատանքներին չեն ներգրավվում (ՀՀ Աշխատանքային օրենսգիրք հոդված, 144):
- Մինչև 18 տարեկան անձանց գիշերային աշխատանքի ներգրավվել չի թույլատրվում (ՀՀ Աշխատանքային օրենսգիրք հոդված 148), (գիշերային ժամանակ է համարվում ժամը 22-ից մինչ 6-ը):
- Մինչև 18 տարեկան աշխատողները տոնական և հիշատակի օրերին կարող են աշխատանքի ներգրավվել միայն իրենց համաձայնությամբ /Աշխատանքային օրենսգիրք, հոդված 156/ :

Կարևոր է նաև այն, որ համաձայն Աշխատանքային օրենսգիրք 149 հոդվածի, մինչև տասնութ տարեկան աշխատողներին չի թույլատրվում ներգրավվել հերթապահության տանը կամ կազմակերպությունում:

Բացի այդ, ըստ Աշխատանքային օրենսգիրք 164 հոդվածի, արգելվում է մինչև 18 տարեկան աշխատողին ծառայողական գործուղման ուղարկելը :

## Հարց 6. - Կարող է երեխային աշխատանքի ընդունելիս նախատեսվել փորձաշրջան

Փորձաշրջան չի կարող նախատեսվել, եթե աշխատանքի են ընդունվում՝ տասնութ տարին չլրացած անձինք (ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, հոդված 91):

## Հարց 7.- Որո՞նք են երեխաների աշխատանքային հանգստի առանձնահատկությունները

- Մինչև տասնութ տարեկան աշխատողներին, որոնց աշխատաժամանակի տևողությունը գերազանցում է 4 ժամը, աշխատաժամանակի ընթացքում պետք է տրվի հանգստի համար լրացուցիչ ընդմիջում՝ նվազագույնը 30 րոպե (ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, հոդված 153):
- Ամենօրյա անընդմեջ հանգստի տևողությունը տասնչորսից մինչև տասնվեց տարեկան աշխատողների համար չի կարող պակաս լինել 14 ժամից, իսկ տասնվեցից մինչև տասնութ տարեկան աշխատողների համար՝ ոչ պակաս 12 ժամից, և պետք է ներառի ժամը 22-ից մինչև 6-ը (ՀՀ Աշխատանքային օրենսգիրք, հոդված 154):
- Մինչև տասնութ տարեկան աշխատողներին շաբաթվա ընթացքում տրվում է ոչ պակաս, քան երկու հանգստյան օր (ՀՀ Աշխատանքային օրենսգրք, հոդված 155):

## Հարց 8. - Ի՞նչ կարգով է տրամադրվում երեխաների ամենամյա աշխատանքային արձակուրդը

Մինչ տասնութ տարեկան աշխատողի համար, եթե լրացել է նրա անընդմեջ աշխատանքի վեց ամիսը, նախատեսվում է արձակուրդի ժամանակի ընտրության իրավունք: Մինչդեռ 18 տարին լրացած աշխատողներին արձակուրդ տրվում է ըստ գործատուի կազմած ժամանակացույցի:

Միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվելու նպատակով քննություններին նախապատրաստվելու համար աշխատողներին, անկախ տարիքից, յուրաքանչյուր քննության համար տրամադրվում է եռօրյա արձակուրդ:

Հանրակրթական, միջնակարգ-մասնագիտական կամ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող աշխատողներին ուսումնական հաստատության միջնորդությամբ տրամադրվում է ուսումնական արձակուրդ՝

1/ ընթացիկ քննություններին նախապատրաստվելու և հանձնելու համար յուրաքանչյուր քննության համար՝ 3 օր.

2/ ստուգարքներին նախապատրաստվելու և հանձնելու համար՝ յուրաքանչյուր ստուգարքի համար՝ 2 օր.

3/ լաբորատոր աշխատանքների կատարման համար ուսումնական պլանով նախատեսված օրերի քանակով.

4/ դիպլոմային աշխատանքի նախապատրաստման և պաշտպանության համար՝ 30 օր:

Ուսումնական արձակուրդում չի հաշվարկվում ուսումնական հաստատության վայր մեկնելու և վերադառնալու ժամանակը:

Այս հարցերը կարգավորվում են Աշխատանքային օրենսգրքի 174 հոդվածով:

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 200 հոդվածի, գործատուն ուսումնական արձակուրդի համար վճարում է, եթե աշխատողին ինքն է գործուղել սովորելու:

Ընդունելության քննություններ հանձնող կամ անձնական նախաձեռնությամբ սովորող աշխատողների ուսումնական արձակուրդի վճարման հարցը կարող է կարգավորվել կողեկտիվ պայմանագրով կամ կողմերի համաձայնությամբ, ինչից հետևում է, որ ուսումնական արձակուրդը կարող է նաև չվճարվել, եթե աշխատողն ուսման չի գործուղված գործատուի կողմից:

Կոլեկտիվ պայմանագրով կարող են աշխատող երեխաների համար նախատեսվել նաև այլ արտոնություններ՝ լրացուցիչ արձակուրդի տրամադրում, եռամսյակային, տարեկան կամ այլ հավելյալ վճարումներ, հատուկ ուսուցումների կազմակերպում և իրականացում և այլն :

#### **Բ. Կանանց աշխատանքային իրավունքների առանձնահատկությունները /արտոնությունները/**

Կանանց աշխատանքային իրավունքների առանձնահատկությունները պայմանավորվում են նրանց համար նախատեսվող որոշակի արտոնություններով՝ կապված հղիության, ծննդաբերության, երեխայի խնամքի, ինչպես նաև ծանր և առողջության համար վտանգավոր աշխատանքներում ներգրավելու անթույլատրելիության հետ, որոնք և ներկայացվում են հաց ու պատասխանի ձևով:

#### **Հարց 9. - Որքա՞ն է կանանց մայրության վարձատրվող արձակուրդի տևողությունը ծննդաբերությունից առաջ և հետո**

Համաձայն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 172 հոդվածի, աշխատող կանանց տրամադրվում է հղիության և ծննդաբերության արձակուրդ՝ վճարելով լրիվ աշխատավարձը՝

1) 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության).

2) 155 օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության)՝ բարդ ծննդաբերության դեպքում.

3) 180 օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում:

Այդ արձակուրդը հաշվարկվում է միասին և կնոջը տրամադրվում է ամբողջությամբ: Ժամանակից շուտ ծննդաբերելու դեպքում հղիության արձակուրդի չօգտագործված օրերը գումարվում են ծննդաբերության արձակուրդի օրերին:

Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված աշխատողին տրամադրվում է արձակուրդ՝ որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչև նորածնի 70 օրական դառնալը:

#### **Հարց 10. - Կանանց մայրության դեպքում սոցիալական ապահովության համակարգում ի՞նչ նպաստներ են տրամադրվում**

ՀՀ կառավարության «Մինչև երկու տարեկան երեխա խնամող՝ մասնակի վճարովի արձակուրդում գտնվող անձանց, երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող միանվագ և գործազրկության բազային նպաստների չափերը սահմանելու մասին» ապրիլի 19-ի 1999թ. թիվ 235 որոշմամբ նախատեսված է, որ մինչև երկու տարեկան երեխա խնամող՝ մասնակի վճարովի արձակուրդում գտնվող անձանց տրվող ամենամսյա նպաստի չափը սահմանվում է 3000 դրամ, իսկ երեխայի ծննդյան կապակցությամբ տրվող միանվագ նպաստի չափը, անկախ անձի աշխատելու հանգամանքից, 35000 դրամ: Մոր աշխատանքի անցնելու դեպքում երեխայի խնամքի համար տրվող 3000 դրամ նպաստը դադարեցվում է:

Ընտանիքի անապահովությունից ելնելով ընտանեկան նպաստ ստացող՝ կամ երեխայի ծնունդով նպաստի իրավունք ձեռք բերած ընտանիքում երեխա ծնվելու դեպքում ընտանիքը ստանում է ևս 35000 դրամ միանվագ նպաստ:

ՀՀ Աշխատանքային օրենսգրքի համաձայն /հոդված 173/ երեխային փաստացի խնամող ընտանիքի մոր (խորթ մոր), հոր (խորթ հոր), տատի, պապի կամ այլ հարազատի (այդ թվում՝ երեխային խնամակալ նշանակված անձի) ցանկությամբ նրան տրամադրվում է երեխայի խնամքի արձակուրդ մինչև երեխայի երեք տարեկան դառնալը: Արձակուրդը վերցվում է ամբողջությամբ կամ մաս առ մաս: Նման իրավունք ունեցող աշխատողը այն կարող է ստանալ արտահերթ: Արձակուրդի ընթացքում պահպանվում է աշխատողի

աշխատատեղը (պաշտոնը), բացառությամբ այն դեպքերի, երբ կազմակերպությունը լուծարվում է (անհատ ձեռնարկատիրոջ գործունեության դադարման պատճառով) կամ գործատուն սնանկ է ճանաչվում:

**Հարց 11. - Ի՞նչ կարգով և ի՞նչ ժամկետում է կատարվում աշխատանքային պայմանագրի լուծումը հղի կանանց պարագայում**

«Աշխատանքային օրենսգրքի համաձայն /հոդված 117/ աշխատանքային պայմանագիրը չի կարող լուծվել հղի կանանց հետ՝ հղիության մասին գործատուին տեղեկանք ներկայացնելու օրվանից մինչև հղիության ու ծննդաբերության արձակուրդի ավարտման օրվանից հետո մեկ ամիսը լրանալը :

Եթե գործատուն խախտում է սույն դրույթի պահանջը, ապա Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի համաձայն գործատուն ենթարկվում է վարչական պատասխանատվության՝ վճարելով տուգանք: Աշխատանքից ազատված աշխատողը դատական կարգով կարող է վիճարկել իր իրավունքը: Այդ կարգի խախտումով աշխատանքից ազատված աշխատողը ենթակա է վերականգնման նախկին աշխատանքում՝ պարագուրդի ամբողջ ժամանակաընթացքի համար աշխատողի միջին աշխատավարձի վճարումով :

**Հարց 12. - Արդյո՞ք երեխաներին կերակրող աշխատող մայրերը բավարար չափով լրացուցիչ ժամանակի իրավունք ունեն կերակրելու համար**

Կրծքով կերակրող կնոջը, բացի հանգստի և սնվելու համար տրամադրվող ընդհանուր ընդմիջման ժամերից, նորածնին կերակրելու համար ոչ պակաս, քան յուրաքանչյուր երեք ժամը մեկ, տրամադրվում են լրացուցիչ ընդմիջումներ՝ կես ժամից ոչ պակաս տևողությամբ: Կնոջ ցանկությամբ նորածնին կերակրելու համար ընդմիջումները կարելի է միավորել եւ միացնել ընդհանուր ընդմիջմանը կամ տեղափոխել աշխատանքային օրվա վերջ՝ աշխատանքային օրվա տևողության համապատասխան կրճատումով: Նորածնին կերակրելու համար նախատեսված ընդմիջումների ժամանակահատվածում աշխատողը վճարվում է միջին աշխատավարձի չափով, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով միջին ժամային աշխատավարձի չափը:

«Աշխատանքային օրենսգրքի համաձայն /258 հոդված/ եթե հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կնոջն անհրաժեշտ է աշխատաժամանակի ընթացքում բժշկական հետազոտություն անցնել, ապա գործատուն պարտավոր է նրան ազատել աշխատանքից՝ պահպանելով միջին աշխատավարձը, որը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով միջին ժամային աշխատավարձի չափը:

**Հարց 13. - Ինչպե՞ս են կանոնակարգվում գիշերային ժամերին աշխատող հղի, նոր ծննդաբերած կանանց կամ իրենց երեխաներին կերակրող կանանց աշխատանքի հետ կապված հարցերը**

- Հղի կանայք, մինչև մեկ տարեկան երեխա խնամող և մինչև տասնութ տարեկան աշխատողները կարող են ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին աշխատանքի ներգրավվել միայն իրենց համաձայնությամբ («Աշխատանքային օրենսգրք, հոդված 155):

Հղի կանայք և մինչև երեք տարեկան երեխա խնամող աշխատողները կարող են գիշերային աշխատանքի ներգրավվել միայն իրենց համաձայնությամբ:

Եթե հաստատվում է, որ գիշերային աշխատանքը վտանգել է կամ կարող է վտանգել աշխատողի առողջությունը, ապա գործատուն պարտավոր է աշխատողին փոխադրել միայն ցերեկային աշխատանքի:

**Հարց 14. - Ինչպե՞ս են կանոնակարգվում աշխատող հղի, նոր ծննդաբերած կանանց կամ իրենց երեխաներին կերակրող կանանց աշխատանքային հարցերը բացասական ազդեցություն ունեցող վնասակար պայմաններով և վտանգավոր գործոններով աշխատանքների կատարման դեպքում:**

«Աշխատանքային օրենսգրքի համաձայն /հոդված 258/ հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց չի թույլատրվում ներգրավել մոր և մանկան առողջության վրա բացասական ազդեցություն ունեցող վնասակար պայմաններով և վտանգավոր գործոններով աշխատանքների կատարմանը: Հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց համար աշխատանքի վնասակար պայմանների և վտանգավոր գործոնների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Գործատուն պարտավոր է միջոցներ ձեռնարկել բարելավելու հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց աշխատանքային պայմանները, որպեսզի նրանք չենթարկվեն վտանգավոր գործոնների ազդեցությանը: Եթե աշխատանքային պայմանների փոփոխությամբ նման ազդեցությունը հնարավոր չէ վերացնել, ապա գործատուն պարտավոր է կնոջը (նրա համաձայնությամբ) փոխադրել այլ աշխատանքի նույն կազմակերպությունում: Սույն դրույթը տարածվում է հղի և մինչև մեկ տարեկան երեխա ունեցող կանանց վրա:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքին համապատասխան խախտում թույլ տված գործատուն ենթարկվում է վարչական պատասխանատվության՝ տուգանքի: Կարգի կիրառման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի պետական տեսչությունը՝ այլ պետական և ոչ պետական մարմինների հետ համագործակցությամբ:

**Հարց 15.- Արդյո՞ք աշխատող կանանց համար որոշակի արտոնություններ նախատեսվել են չի համարվում խտրականություն այլ աշխատողների նկատմամբ:**

Արդեն ասվել է, որ աշխատող կանանց և երեխաների համար որոշակի արտոնություններ սահմանելը պայմանավորված է մայրության և երեխայի առողջության պաշտպանության, երեխայի ֆիզիկական և մտավոր զարգացման համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու անհրաժեշտությամբ: Ղա ոչ միայն անհատական, այլ նաև հասարակական շահերով պայմանավորված անհրաժեշտություն է և չի կարող գնահատվել որպես խտրականություն: Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին Կոնվենցիայի 4 հոդվածում ասված է. «Մասնակից պետությունների կողմից մայրության պաշտպանությանը նպատակաուղղված հատուկ, ներառյալ սույն կոնվենցիայով նախատեսված միջոցառումների ընդունումը չի համարվում խտրական»:

Նույնը վերաբերում է նաև երեխաների պաշտպանությանն ուղղված հատուկ միջոցառումների ընդունմանը:

Մայրության և մանկության պաշտպանությանն ուղղված հատուկ միջոցառումների ընդունման պարտականությունը մասնակից պետությունների համար նախատեսված է նաև Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայով:



## ԱՇԽԱՏԱՎԱՐՁ ՎՃարման կարգը և պայմանները

Աշխատանքային իրավունքների շարքում հատկապես կարևելով աշխատանքի դիմաց արդարացի վարձատրություն ստանալու իրավունքը, այս ձեռնարկում ներկայացվում են այդ իրավունքի պաշտպանության և իրականացման օրենսդրական առանձնահատկությունները:

Տրվող պարզաբանումների հիմքում դրված են այնպիսի իրավական ակտեր, ինչպիսիք են՝ Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիան, «Նվազագույն աշխատավարձի սահմանման մասին» կոնվենցիան, ՀՀ Սահմանադրությունը, «Նվազագույն աշխատավարձի մասին» և «Աշխատանքի վարձատրության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ Քաղաքացիական և Աշխատանքային օրենսգիրքերը:

Որպես հիմնարար փաստաթուղթ է ընդունվում Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի 4-րդ հոդվածը, ըստ որի՝ պետությունը պարտավոր է՝

- ճանաչել աշխատողների վարձատրման իրավունքը, որը նրանց և նրանց ընտանիքներին կապահովի պատշաճ կենսամակարդակ.
- ճանաչել աշխատողների վարձատրման դրույքաչափերի ավելացման իրավունքը արտաժամյա աշխատանքի համար, բացառությամբ առանձնահատուկ դեպքերի.
- ճանաչել կին և տղամարդ աշխատողների նույնարժեք աշխատանքի համար հավասար վճարման իրավունքը:

ՀՀ Աշխատանքային օրենսգրքում ներառված են այն հիմնարար սկզբունքները, որոնք ամրագրված են Հայաստանի Հանրապետության ստորագրած միջազգային փաստաթղթերում:

ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 3 հոդվածը, նվիրված լինելով աշխատանքային օրենսդրության հիմնական սկզբունքներին, 6-րդ կետով ամրագրում է. «Յուրաքանչյուր աշխատողի համար ժամանակին և ամբողջությամբ պետք է ապահովվի նրա աշխատանքի վարձատրությունը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձից ոչ ցածր:

Արգելվում է աշխատանքի վարձատրության բնագավառում խտրականությունը՝ անկախ ազգությունից, քաղաքացիությունից, ռասայից, սեռից, տարիքից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից»:

«Աշխատանքի վարձատրության մասին» օրենքը, անդրադառնալով աշխատողների դասակարգման ըստ գործատուների տեսակների, 4 հոդվածով սահմանում է հետևյալ դասակարգումը՝

- ա) պետական պաշտոնյաներ.
- բ) պետական ծառայողներ.
- գ) բյուջետային հիմնարկների աշխատողներ.
- դ) այլ վարձու աշխատողներ:

Օրենքի իմաստով վարձու աշխատողներ են համարվում քաղաքացիներն ու քաղաքացիություն չունեցող անձինք, որոնք կազմակերպություններում աշխատում են գործատուների հետ կնքված կոլեկտիվ եւ (կամ) անհատական աշխատանքային պայմանագրերի հիման վրա:

Այս ձեռնարկում հիմնականում ներկայացվում են վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության կարգը և առանձնահատկությունները: Մյուս կատեգորիաների աշխատողների վարձատրության առանձնահատկություններին անդրադարձ կկատարվի այլ ձեռնարկով:

### **Հարց 1. - Ի՞նչ է աշխատավարձը**

Համաձայն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 178 հոդվածի.

«Աշխատավարձն աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու դիմաց աշխատողին վճարվող հատուցումն է:

Տղամարդկանց եւ կանանց միեւնույն կամ համարժեք աշխատանքի դիմաց վճարվում է նույն չափով աշխատավարձ: Աշխատավարձը ներառում է հիմնական աշխատավարձը եւ գործատուի կողմից աշխատողին իր կատարած աշխատանքի դիմաց ցանկացած եղանակով տրված լրացուցիչ վարձատրությունը: Աշխատավարձի վճարումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության փողով՝ Հայաստանի Հանրապետության դրամով»:

Պետք է նշել, որ աշխատանքի վարձատրության մի մասը, բայց ոչ ավելի, քան տարիֆային աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի) քսան տոկոսը, աշխատողի գրավոր համաձայնությամբ կարող է վճարվել գործատուի սեփական արտադրանքով՝ դրա բացթողման գներով: Ծխախոտի, ալկոհոլային խմիչքների, դեղերի, ինչպես նաեւ մարդու առողջության եւ շրջակա միջավայրի համար վնասակար, թունավոր, ռադիոակտիվ եւ ուժեղ ներգործության նյութերի ու այդպիսի նյութեր պարունակող ապրանքների օգտագործումը որպես աշխատանքի վարձատրության միջոց, արգելվում է:

Աշխատանքը վարձատրվում է ժամավարձային (ժամավաճային վարձատրության դեպքում սահմանված է վարձատրության ամսական չափ), գործավարձային (գործավարձային վարձատրության դեպքում վարձատրությունը կատարվում է ըստ միավոր արտադրանքի քանակի, այսինքն հաշվի առնելով կոնկրետ քանակի աշխատանքը) կամ աշխատանքի վարձատրության իրավական հիմքերով սահմանված այլ ձեւերով:

Վարձու աշխատողի աշխատանքի վարձատրության չափը որոշվում է ելնելով՝

- աշխատանքի վարձատրության նվազագույն չափից.
- աշխատանքի շուկայում աշխատուժի նկատմամբ առաջարկի եւ պահանջարկի հարաբերակցությունից.
- կատարված աշխատանքի քանակից եւ որակից.
- կազմակերպության տնտեսական գործունեության արդյունքներից, բացառությամբ տարիֆային աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի):

Աշխատողի աշխատավարձի առավելագույն չափը սահմանափակման ենթակա չէ:

## ***Հարց 2. - Ո՞րն է այն իրավական փաստաթուղթը որի հիման վրա կատարվում է աշխատանքի վարձատրությունը***

Իրավական փաստաթուղթը, որի հիման վրա կատարվում է աշխատանքի վարձատրությունը, աշխատողների բոլոր կատեգորիաների համար աշխատանքային պայմանագիրն է:

Գործատուն վարձու աշխատողի հետ պարտավոր է կնքել գրավոր պայմանագիր, որտեղ նշվում են՝

- աշխատանքի վարձատրության պայմանները.
- աշխատանքի վարձատրության ժամային դրույքաչափերը կամ ամսական աշխատավարձի (հավելումների, փոխհատուցումների) չափն ու վճարման պարբերականությունը.
- կազմակերպություններում աշխատավարձի վճարման ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար տույժի չափը.
- աշխատողի մեղքով առաջացած պարապուրդի եւ գործադուլի հայտարարման դեպքում աշխատանքի ներկայանալու մյուս պայմանները.
- ոչ գործատուի մեղքով առաջացած պարապուրդի վճարման առանձնահատկությունները:

## ***Հարց 3. - Ի՞նչ ժամանակում պետք է վճարվի աշխատավարձը***

Համաձայն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 192 հոդվածի աշխատավարձը յուրաքանչյուր ամիս հաշվարկվում և աշխատանքային օրերին վճարվում է աշխատողին ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչեւ հաջորդ ամսվա 15-ը:

Գործատուն կարող է ամսական աշխատավարձ վճարել մեկ անգամից ավելի պարբերականությամբ:

Աշխատավարձի վճարումը պարտավորագրերով եւ արժեթղթերով արգելվում է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Աշխատավարձը կարող է վճարվել բանկային վկայագրով, չեկերով կամ աշխատողի նշած բանկային հաշվին դրամական փոխանցումով:

Նշենք նաև այն հանգամանքը, որ ժամանակավոր կամ միանվագ աշխատանքների դիմաց, որոնց տեսողությունը չի գերազանցում տասնհինգ աշխատանքային օրը, աշխատավարձը վճարվում է ամբողջությամբ՝ աշխատանքների ավարտմանը հաջորդող երեք օրվա ընթացքում, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

**Հարց 4. - Ի՞նչ ժամկետում պետք է աշխատողը ծանուցվի աշխատանքի վարձատրության նոր պայմանների մասին:**

Համաձայն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 105 հոդվածի աշխատանքի վարձատրության նոր պայմաններ սահմանելիս, գործատուն այդ մասին գրավոր ձևով պետք է ծանուցի աշխատողին ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ մինչեւ նոր պայմանների ուժի մեջ մտնելը:

**Հարց 5. - Ինչպե՞ս է վարձատրվում աշխատանքը ոչ աշխատանքային, հանգստյան, տոնական և հիշատակի օրերին:**

Համաձայն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 185 հոդվածի ոչ աշխատանքային, հանգստյան, տոնական և հիշատակի օրերին կատարված աշխատանքը, եթե դա նախատեսված չէ աշխատանքի ժամանակացույցով, վճարվում է ժամային (օրական) դրույքաչափի կամ գործավարձի կրկնակի չափից ոչ պակաս չափով, կամ աշխատողի ցանկությամբ նրան մեկ ամսվա ընթացքում տրամադրվում է այլ հանգստյան օր, կամ այդ օրը ավելացվում է ամենամյա արձակուրդին:

Աշխատանքի ժամանակացույցով հանգստյան օրը կատարված աշխատանքը վճարվում է ժամային (օրական) դրույքաչափի կամ գործավարձի կրկնակի չափով:

**Հարց 6. - Ինչպե՞ս է վարձատրվում արտաժամյա և գիշերային աշխատանքը:**

Համաձայն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 184 հոդվածի արտաժամյա աշխատանքի եւ գիշերային աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար սահմանվում է հավելում՝ ժամային դրույքաչափի մեկուկես անգամից ոչ պակաս չափով:

Կողմերի համաձայնությամբ արտաժամյա աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար վճարվում է ոչ պակաս, քան աշխատողի համար սահմանված ժամային դրույքաչափը:

Պետք է նշել, որ «Աշխատանքի Վարձատրության մասին» օրենքի 9 հոդվածի 4-րդ կետում նշված է, որ գիշերային (երեկոյան ժամը 23-ից մինչեւ առավոտյան ժամը 8-ը) եւ արտաժամյա աշխատանքի յուրաքանչյուր ժամի համար սահմանվում է հավելում՝ ժամային դրույքաչափի կրկնակի չափով:

Ինչպես երևում է՝ հակասություն է առաջացել «Աշխատանքի Վարձատրության մասին» օրենքի 9 հոդվածի 4 կետի և ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 184 հոդվածի դրույթների միջև:

Այս պարագայում պետք է առաջնորդվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով, ուր մասավորապես ասված է.

«Հավասար իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերի կամ նույն իրավական ակտի տարբեր մասերի միջև հակասության դեպքում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինները ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ հարաբերություններում պետք է կիրառեն ֆիզիկական եւ իրավաբանական անձանց համար նախընտրելի նորմատիվ իրավական ակտը կամ դրա մասը»:

Հետևաբար, հիմք ընդունելով վերը նշված դրույթը, նման իրավական հակասություններ առաջանալու դեպքում գործատուն պետք է առաջնորդվի այն սկզբունքով, որ առաջնայինը աշխատողի շահերն են:

**Հարց 7. - Ինչպե՞ս է վարձատրվում աշխատողը հարկադիր պարապուրդի ժամանակ:**

Համաձայն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 186 հոդվածի, եթե ոչ աշխատողի մեղքով պարապուրդի ժամանակ աշխատողին չի առաջարկվում նրա մասնագիտությանը, որակավորմանը համապատասխանող այլ աշխատանք, որը նա կարող էր կատարել առանց իր առողջությանը վնաս պատճառելու, ապա աշխատողին պարապուրդի յուրաքանչյուր ժամվա համար վճարվում է մինչև պարապուրդը նրա միջին ժամային աշխատավարձի երկու երրորդի չափով, սակայն ոչ պակաս, քան օրենսդրությամբ սահմանված նվազագույն ժամային դրույքաչափը:

Պարապուրդի ժամանակ գործատուի պահանջով աշխատավայրում գտնվելու համար աշխատողին վճարվում է երկու երրորդի չափով աշխատավարձ:

Անհաղթահարելի ուժ (արտակարգ եւ տվյալ պայմաններում անկանխելի հանգամանք, օրինակ՝ երկրաշարժ, ջրհեղեղ) համարվող պատճառներով առաջացած, ինչպես նաև աշխատողի մեղքով առաջացած պարապուրդի համար գործատուն իրավունք ունի աշխատավարձ չվճարել:

**Հարց 8. - Արդյո՞ք վճարվում է աշխատավարձ գործադուլի դեպքում**

Համաձայն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 79 հոդվածի երկրորդ կետի.

«Գործադուլին մասնակցող աշխատողներն ազատվում են իրենց աշխատանքային գործառույթները կատարելու պարտականություններից: Գործադուլի ընթացքում պահպանվում է գործադուլին մասնակցող աշխատողների աշխատատեղը (պաշտոնը):

Գործադուլին մասնակցող աշխատողներին գործատուն կարող է աշխատավարձ չվճարել: Գործադուլը դադարեցնելու վերաբերյալ կողմերի բանակցությունների ընթացքում կողմերը կարող են համաձայնություն ձեռք բերել գործադուլավորներին լրիվ չափով կամ մասնակիորեն աշխատավարձ վճարելու վերաբերյալ»:

**Հարց 9. Պետական ո՞ր մարմինն է հսկողություն իրականացում գործուտուի կողմից աշխատավարձի հաշվարկման և վճարման գործընթացի նկատմամբ**

Նման լիազորությամբ օժտված է Աշխատանքի պետական տեսչությունը, համաձայն «Աշխատանքի պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 10 հոդվածի 10-րդ կետի:

Աշխատանքի պետական տեսչությունն ունի առանձնացված ստորաբաժանումներ, այնպես որ աշխատանքային իրավունքների խախտման դեպքերում կարող եք դիմել աշխատանքի պետական տեսչություն՝ Ձեր տարածքային ստորաբաժանման տեսուչին:

**Հարց 10. - Աշխատավարձի ուշացման դեպքում ի՞նչ տուգանք է վճարում գործատուն**

Համաձայն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 198 հոդվածի եթե գործատուի մեղքով աշխատավարձը եւ դրան հավասարեցված այլ վճարումները կատարվում են սահմանված ժամկետների խախտումով, ապա գործատուն աշխատողին օրենքով սահմանված չափերով եւ կարգով վճարում է տուժանք:

Համաձայն ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169.8. հոդվածի գործատուի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կամ ժամկետներում աշխատավարձ չհաշվարկելը կամ չվճարելը կամ ոչ աշխատողի մեղքով առաջացած պարապուրդի ժամանակ վճարում չկատարելը կամ "Նվազագույն ամսական աշխատավարձի մասին" ՀՀ օրենքի 1 հոդվածով նախատեսված չափից պակաս աշխատավարձ սահմանելը կամ այդ մեծությունը գերազանցող չափով աշխատավարձը սխալ հաշվարկելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տված անձի նկատմամբ՝ յուրաքանչյուր աշխատողի մասով չհաշվարկված կամ չվճարված աշխատավարձի մեկ քառորդի չափով:

Նույն խախտումը, որը կատարվել է վարչական տույժի միջոցներ կիրառելուց հետո՝ կրկին անգամ, մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում խախտում թույլ տված անձի նկատմամբ՝ յուրաքանչյուր չհաշվարկված կամ չվճարված աշխատավարձի մեկ երկրորդի չափով:

Գործատուն ազատվում է նախատեսված՝ աշխատավարձ չվճարելու համար սահմանված պատասխանատվությունից, եթե աշխատավարձ ստացողը գործատուին օրենսդրությամբ սահմանված կարգով չի ներկայացրել իր սոցիալական ապահովության քարտը կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքը:

**Հարց 11. - Որքա՞ն է կազմում նվազագույն աշխատավարձը:**

Համաձայն «Նվազագույն ամսեկան աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 2008 թվականի հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում նվազագույն ամսական աշխատավարձը սահմանվել է 25 000 դրամ:

Նշենք, որ նվազագույն աշխատավարձը 1999 թվականից ենթարկվել է փոփոխությունների՝

1999 թվականի հունվարի 1-ից	5000 դրամ
2005 թվականի հունվարի 1-ից	13000 դրամ
2006 թվականի հունվարի 1-ից	15000 դրամ
2007 թվականի հունվարի 1-ից	20000 դրամ

Նշենք նաև, որ գոյություն ունի հաշվարկային նվազագույն աշխատավարձ հասկացությունը և Հայաստանի Հանրապետության օրենսգրքերի, օրենքների, Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրերի, կառավարության եւ վարչապետի որոշումների, նախարարությունների եւ գերատեսչությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, առանձին իրավաբանական անձանց ակտերի իմաստով որպես հաշվարկային հիմք հիմք գործում է 1000 դրամը:

**Հարց 12. - Ի՞նչ է միջին աշխատավարձը**

Աշխատանքի վարձատրության տարրերն են՝

- աշխատավարձը.
- աշխատավարձի նկատմամբ հաշվարկվող հավելումները եւ պարգևավճարները.
- փոխհատուցումները:

Աշխատավարձի, աշխատավարձի հավելումների, պարգևավճարների ու փոխհատուցումների հանրագումարը բաժանվում է աշխատած ամիսների թվի վրա և ստացված գումարից էլ ստացվում է միջին աշխատավարձը:

**Հարց 13. - Արդյո՞ք հայցային վաղեմություն տարածվում է աշխատավարձի հատուցման պահանջով վեճերի նկատմամբ:**

Հայցային վաղեմությունը իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի պաշտպանության ժամանակահատվածն է:

Համաձայն «Աշխատանքային օրենսգրքի» 30 հոդվածի հայցային վաղեմություն չի տարածվում աշխատողի պատվի եւ արժանապատվության պաշտպանության, աշխատավարձի, ինչպես նաեւ աշխատողի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման պահանջներով: Այսինքն աշխատավարձի հետ կապված վեճերով, անկախ այն հանգամանքից, թե որքան ժամանակ է անցել այն օրանից, երբ վեճը տեղի է ունեցել, քաղաքացին ցանկացած պահի կարող է դիմել դատարան իր խախտված իրավունքները վերականգնելու նպատակով:

Միաժամանակ պետք է նշել, որ Քաղաքացիական օրենսգրքի 344 հոդվածում, ուր թվարկված է այն պահանջների ցանկը, որոնց վրա հայցային վաղեմությունը չի տարածվում, հոդվածում նշված չէ այն կետը, ըստ որի հայցային վաղեմություն չի տարածվում աշխատավարձի հետ կապված վեճերի վրա: Հոդվածի 6-րդ կետում նշված է, որ հայցային վաղեմությունը չի տարածվում օրենքով սահմանված այլ պահանջների վրա: Աշխատավարձի հետ կապված վաղեմության հարցը դասվում է այդ պահանջների շարքին:

**Հարց 14. - Գործատուի սնանկանալու դեպքում ո՞ր հերթով են բավարարվում աշխատողների աշխատավարձի հետ կապված ծախսերը:**

Գործատուի սնանկ ճանաչվելու դեպքում համաձայն «Սնանկության մասին» (ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 25-ին) օրենքի 82 հոդվածի, որտեղ թվարկված են սնանկության դեպքում պարտատերերի պահանջների բավարարման հերթականությունը նշված է, որ աշխատանքային պայմանագրից բխող պահանջները գտնվում են երրորդ հերթում՝ կառավարչի վարձատրության և վարչական ծախսերից (առաջին հերթ) և քաղաքացիների կյանքին և առողջությանը վնաս պատճառելու համար նախատեսված պարտավորություններից հետո (երկրորդ հերթ):

Սնանկ ճանաչված գործատուի կողմից բավարարվում են աշխատանքային պայմանագրերից բխող պահանջները (ներառյալ՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից մինչև վերջնական լուծարումը), բայց ոչ ավելի, քան պարտապանին սնանկ ճանաչելու պահին նախորդող 6 ամիսը:

Նախկին «Անվճարունակության մասին» օրենքով (ընդունված 2003 թվականի դեկտեմբերի 17-ին) աշխատանքային պայմանագրերից բխող պահանջները բավարարվում էին յոթերորդ հերթով: Կարծում ենք՝ յոթերորդից երրորդ հերթի անցումը խոսում է այն մասին, որ աշխատողների գույքային իրավունքների պաշպանություն հարցում կա առաջընթաց:

**Հարց 15. - Ի՞նչ պարտադիր պահումներ են արվում աշխատավարձից**

Գործատուի կողմից աշխատավարձից կատարվում են օրենքով սահմանված պարտադիր պահումներ՝ մասնավորապես եկամտահարկ և սոցվճարումներ, եթե գործատուն համարվում է հարկային գործակալ: Նշենք, որ նվազագույն աշխատավարձից որևէ պահում չի կատարվում:

- «Եկամտահարկի մասին» օրենքով կարգավորվում է աշխատանքային պայմանագրերի կատարումից ստացված եկամուտների հարկման կարգը: Համաձայն օրենքի 6 հոդվածի, որպես հարկվող եկամուտ են դիտվում աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները:

Հարկային գործակալը՝ մասնավորապես գործատուն, եկամտահարկը հաշվարկում է հետևյալ կերպ՝ առաջին 20,000 դրամից եկամտահարկ չի գանձվում, մնացած գումարից եկամտահարկը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

Ամսական հարկվող եկամտի չափը	Հարկի գումարը
ինչեւ 80,000 դրամ	հարկվող եկամտի 10 տոկոսը
0,000 դրամից ավելի	3,000 դրամին գումարած 80,000 դրամը գերազանցող գումարի 20 տոկոսը

- «Պարտադիր սոցիալական ապահովության մասին» օրենքով սահմանված են սոցիալական վճարների դրույքաչափերը: Գործատուն յուրաքանչյուր վարձու աշխատողի համար ոչ թե հաշվարկված աշխատավարձից, այլ իր միջոցներից, ելնելով վճարվող աշխատավարձի չափերից, սոցիալական վճարները կատարում է հետևյալ դրույքաչափերով.

"Սոցիալական վճարի հաշվարկման օբյեկտի ամսական չափը	Սոցիալական վճարի չափը
մինչեւ 20,000 դրամ	7,000 դրամ

20,000-ից մինչև 100,000 դրամ	7,000 դրամ գումարած 20,000 դրամը գերազանցող գումարի 15 տոկոսը
100,000 դրամից ավելի	19,000 դրամ գումարած 100,000 դրամը գերազանցող գումարի 5 տոկոսը

Նշենք, որ սոցիալական վճարները հաշվարկում է յուրաքանչյուր գործատու, առանց հաշվի առնելու այլ գործատուի (գործատուների) կողմից վարձու աշխատողի համար կատարված պարտադիր սոցիալական ապահովության վճարները:

Վարձու աշխատողները սոցիալական վճարումներ են կատարում աշխատավարձի եւ դրան հավասարեցված եկամուտների 3 տոկոսի չափով, որոնց պահումները կատարում եւ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե են փոխանցում գործատուները:

**Հարց 16. - Բացի օրենքով նախատեսված պարտադիր պահումներից, ուրիշ ո՞ր դեպքերում աշատավարձից կարող են կատարվել պահումներ**

Ինչպես արդեն նշել ենք, աշխատավարձից պահումները կարող են կատարվել օրենքով սահմանված կարգով եւ նախատեսված դեպքերում /Աշխատանքային Օրենսգրքի 213 հոդված/:

Գործատուին ունեցած աշխատողի պարտքերը մարելու համար աշխատավարձից պահվում կամ գանձվում են՝

- 1) աշխատավարձի հաշվին աշխատողին տրված կանխավճարը.
- 2) հաշվարկային մեխանիկական սխալների հետեւանքով ավելի կատարված վճարումները.

3) ծառայողական գործուղման կամ աշխատանքի այլ վայր փոխադրվելու կամ այլ վայրում աշխատանքի ընդունվելու կամ առանձին գործողությունների կատարման համար աշխատողին տրված կանխավճարի չծախսված եւ ժամանակին չվերադարձված գումարը.

4) աշխատողի մեղքով գործատուին պատճառված վնասի հատուցման գումարը: Այս դեպքերում, եթե աշխատողի պարտքը չի գերազանցում նրա մեկ ամսվա միջին աշխատավարձը, ապա գործատուն իրավունք ունի կատարելու պահումներ, եթե կանխավճարի վերադարձման համար սահմանված ժամկետը լրանալու, հաշվարկային մեխանիկական սխալների հետեւանքով ավելի կատարված վճարումը կատարելու, կանխավճարի չծախսված եւ ժամանակին չվերադարձված գումարը վերադարձնելու եւ աշխատողի հասցրած վնասը հայտնաբերվելու օրվանից ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում, պահումներ կատարելու մասին հրապարակել է համապատասխան իրավական ակտ: Գործատուի պարտքերը մարելու համար աշխատողների աշխատավարձից պահումներ կամ գանձումներ կարող են կատարվել նաեւ, երբ աշխատողն ազատվում է աշխատանքից մինչեւ այն աշխատանքային տարվա ավարտը, որի համար նրան տրամադրվել էր արձակուրդ: Այդ դեպքում գանձվում է չաշխատած օրերի համար վճարված գումարը: Այդ օրերի համար գանձումներ չեն կատարվում, եթե աշխատողը աշխատանքից ազատվում է ոչ իր մեղքով:

Չի թույլատրվում աշխատողից պահել կամ գանձել օրենքի սխալ կիրառմամբ հաշվարկված եւ ավելի վճարված աշխատավարձը, բացառությամբ հաշվարկային մեխանիկական սխալների դեպքերի:

**Հարց 17. - Ինչպե՞ս է կատարվում աշխատավրածից ալիմենտի վճարումը**

Ալիմենտի վճարելու վերաբերյալ համաձայնության կամ դատարանի վճռի կատարողական թերթի հիման վրա ալիմենտ վճարելու պարտավոր անձի աշխատավայրի վարչակազմը պարտավոր է յուրաքանչյուր ամիս ալիմենտ պահել այդ անձի աշխատավարձից և վճարել կամ այն փոխանցել ալիմենտ ստացողին աշխատավրձի վճարման պահից ոչ ուշ, քան երեք օրվա ընթացքում:

Ալիմենտի պահում կատարող գործատուի վրաչակագմը պարտավոր է եռօրյա ժամկետում ալիմենտ բռնագանձելու մասին վճռի կատարման վայրի դատական ակտերի հարկադիր կատարողին և ալիմենտ ստացողին հաղորդել ալիմենտ վճարելու պարտավոր անձի աշխատանքից ազատվելու, ինչպես նաև նրա աշխատանքի նոր վայրի կամ բնակության վայրի մասին, եթե դրանք իրեն հայտնի են:

**Հարց 18. - Արդյո՞ք նախատեսված են աշխատավարձից պահումների չափերի սահմանափակումներ**

Աշխատանքային օրենսգրքի 214 հոդվածում նշված է, որ աշխատավարձը վճարելիս պահումների եւ գանձումների ընդհանուր չափը հաշվարկվում է օրենքով սահմանված կարգով, որը չի կարող գերազանցել աշխատողի մեկ ամսվա աշխատավարձի հիսուն տոկոսը:

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 1058 հոդվածի 1-ին կետի «Քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաեւ իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից»:

Աշխատողը պարտավոր է հատուցել գործատուին պատճառած վնասը լրիվ ծավալով, բայց ոչ ավելի նրա երեք ամսվա միջին աշխատավարձի չափից, (Աշխատանքային օրենսգիրք, հոդված 238 )

Աշխատողը պարտավոր է հատուցել գործատուին պատճառած վնասը լրիվ ծավալով, եթե՝

- վնասը պատճառվել է դիտավորությամբ.
- վնասը պատճառվել է աշխատողի հանցավոր գործունեության հետեւանքով.
- աշխատողի հետ կնքվել էր լիակատար նյութական պատասխանատվության մասին պայմանագիր. (լիակատար նյութական պատասխանատվության պայմանագիր կնքած աշխատողի աշխատանքն անմիջականորեն կապված է նյութական արժեքների պահպանության, ընդունման, դուրսգրման, առուվաճառքի, տեղափոխման և օգտագործման հետ) .
- վնասը պատճառվել է աշխատանքի համար նրան տրված անհրաժեշտ գործիքների, սարքավորումների, հատուկ հագուստի եւ անհատական ու կոլեկտիվ պաշտպանության այլ միջոցների, ինչպես նաեւ նյութերի, կիսաֆաբրիկատների կամ արտադրանքի կորստի հետեւանքով.
- վնասը պատճառվել է այնպիսի եղանակով կամ այնպիսի գույքի, որի դեպքում օրենքով սահմանված է լիակատար գույքային պատասխանատվություն.
- վնասը պատճառվել է ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ:

Նշենք, որ եթե աշխատողն ու գործատուն համաձայնության չեն գալիս գանձվող պահումների չափի հարցում, նրանք կարող են վիճարկել այն դատական կազմով՝ անկախ գանձվող գումարի չափից:

**Հարց 19. - Ո՞ր դեպքում գործատուն իրավունք ունի հրաժարվել աշխատավարձի վճարումից**

Համաձայն Աշխատանքային Օրենսգրքի 108 հոդվածի գործատուն իրավունք ունի աշխատողին չթույլատրել կատարել իր աշխատանքային պարտականությունները եւ չվճարել աշխատավարձ, եթե աշխատողը գտնվում է ոգելից խմիչքների, թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ազդեցության տակ:

**Հարց 20. - Աշխատողի մահվան դեպքում ինչպե՞ս է կատարվում նրա աշխատավարձի վճարումը**

Համաձայն ՀՀ Աշխատանքային Օրենսգրքի 197 հոդվածի.  
«Աշխատողի մահվան դեպքում նրան հասանելիք աշխատավարձը եւ դրան հավասարեցված այլ վճարումներ վճարվում են մահացածի ընտանիքի անդամին՝ մահվան



վկայականը եւ ընտանիքի անդամ լինելու փաստը հավաստող անհրաժեշտ այլ փաստաթղթեր անձի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, ներկայացնելու դեպքում:  
Վճարումները կատարվում են նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ աշխատանքային երեք օրվա ընթացքում: Սահմանված ժամկետում չստացված աշխատավարձը եւ դրան հավասարեցված այլ վճարումներ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա են ժառանգման»:

**Հարց 21. - Ինչպիսի՞ն է աշխատանքի վարձատրության կարգը նորմալ պայմաններից շեղումների դեպքում**

Աշխատանքի նորմալ պայմաններից շեղումների առկայության դեպքում գործատուների կողմից աշխատողներին տրվում են հավելումներ, մասնավորապես՝

- առողջության համար վնասակար աշխատանքի կատարման դեպքում աշխատողին վճարվում է հավելում՝ նրա տարիֆային աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի) 50 տոկոսի չափով.
- առողջության համար առանձնապես վնասակար, առանձնապես ծանր աշխատանքի կատարման դեպքում աշխատողին վճարվում է հավելում՝ նրա տարիֆային աշխատավարձի (պաշտոնային դրույքաչափի) 100 տոկոսի չափով:

Հանգստյան եւ տոնական օրերին աշխատանքի համար (եթե դա նախատեսված չէ աշխատանքային գրաֆիկով) սահմանվում է հավելում՝ ժամային (օրական) դրույքաչափի կրկնակի չափով, կամ աշխատողի ցանկությամբ հավելման փոխարեն նրան տրամադրվում են համապատասխան քանակի հանգստյան օրեր:

Կազմակերպությունների կողմից եւ իրավական այլ ակտերով սահմանված հավելումների եւ փոխհատուցումների նվազագույն չափերը կարող են գերազանցվել, ինչպես նաեւ կարող են սահմանվել լրացուցիչ այլ հավելումներ եւ փոխհատուցումներ՝ աշխատանքի վարձատրության իրավական հիմքերով, ինչպես նաեւ աշխատանքային պայմանագրերով սահմանված կարգով:

Նշենք, որ առողջության համար վնասակար և առանձնապես վնասակար աշխատանքների և մասնագիտությունների ցանկը հաստատված է ՀՀ կառավարության 2003 թվականի 11 դեկտեմբերի թիվ 1907-Ն որոշմամբ:

**ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ՀԱՐԿԵՐԻ, ՏՈՒՐՔԵՐԻ  
ՁԵՎՈՎ ԵՎ ԳԱՆՁՈՒՄՆԵՐ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԴԻՄԱՑ**

Սույն ձեռնարկը նպատակ ունի ամփոփ ձևով տեղեկություններ տրամադրել այն պարտադիր վճարումների մասին, որոնք քաղաքացիները պարտավոր են կատարել դատարան դիմելիս, գործարքներ կատարելիս, գույք տնօրինելիս, այս կամ այն ծառայությունն ստանալիս: Այդպիսի պարտադիր վճարումներ օրենքով նախատեսված են հարկերի, տուրքերի և ծառայության դիմաց վճարների ձևով:

Նման պարտադիր վճարների չափերը, այդպիսի գանձումներ կատարելու իրավունք ունեցող մարմինները սահմանված են օրենքներով, որոնց իմացությունը այդ բնագավառում ծագող իրավահարաբերություններում սեփական իրավունքների պաշտպանության լավագույն երաշխիքներից մեկն է:

Այստեղ չեն ներկայացվում բոլոր տեսակի հարկերը և տուրքերը, բոլոր տեսակի ծառայությունների դիմաց տրվող վճարումները, առանձնացվել և ներկայացվում են միայն սեփականության պաշտպանության, սեփականության հետ կապված գործարքներն, սեփականության տիրապետման և տնօրինման կապակցությամբ տրվող հարկերն և տուրքերին, սեփականության իրավունքի իրականացման հետ կապված պարտադիր վճարումներին և եկամտահարկին վերաբերող հարցերը:

Ներկայացվող տեղեկություններն առավել պարզ և հասանելի դարձնելու նպատակով դրանք պարզաբանվում են ըստ բնագավառների և հարց ու պատասխանի ձևով:

**1. Պետական տուրքեր**

**1.1 Հարց.- Ի՞նչ է պետական տուրքը, ի՞նչ օրենքով է այն կարգավորվում:**

- Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից ՀՀ պետական բյուջի կամ համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է:

Պետական տուրք վճարողները, տուրքի չափերը, գանձող մարմինները և պետական տուրքի գանձման, վճարման, պետական տուրքի գծով արտոնությունների սահմանման և ընդհանրապես պետական տուրքի հետ կապված այլ խնդիրները կարգավորվում են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով /այսուհետ՝ Պ/Տ օրենք/, որն ընդունվել է 27.12.1997 թվականին:

**1.2 Հարց.- Ովքեր են համարվում պետական տուրք վճարողներ:**

- Համաձայն Պ/Տ մասին օրենքի 3 հոդվածի, պետական տուրք վճարողներ են համարվում օրենքի 7 հոդվածում թվարկված ծառայություններից կամ գործողություններից օգտվող ֆիզիկական և իրավաբանական անձիք:

Օրենքի 7 հոդվածում թվարկված են այն ծառայությունները կամ գործողությունները, որոնցից օգտվող ֆիզիկական և իրավաբանական անձիք վճարում են պետական տուրք: Դրանք անվանված են «Պետական տուրքի գանձման օբյեկտներ», այդպիսի տուրքեր վճարվում են.

ա/ դատարանին տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի վճիռների ու որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև

դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճենների /կրկնօրինակների/ տրամադրելու համար.

բ/ նոտարի կողմից նոտարական գործողություններ կատարելու համար.

գ/ քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումների փոփոխությունների, լրացումների, ուղղումների և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար.

դ/ ՀՀ քաղաքացիություն ստանալու և քաղաքացիությունը փոխելու համար.

ե/ հյուպատոսական ծառայություններ կամ գործողություններ իրականացնելու համար.

զ/ պետական գրանցման համար.

է/ մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տալու համար.

ը/ գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքների և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների /արդյունաբերական սեփականության օբյեկտների/, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար.

թ/ ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար.

ժ/ լիցենզավորման ենթակա գործողություններ իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար.

ժա/ 19.1 և 20 հոդվածներում թվարկված գործողությունների համար, որոնք վերաբերում են զենքի հետ կապված լիցենզիաներ և թույլտվություններ տրամադրելուն, ինչպես նաև այլ ծառայությունների համար, մասնավորապես վարորդական իրավունքի վկայական, ավտոմեքենայի պետհամարանիշ տալու և այլ ծառայությունների համար:

Օրենքում թվարկված օբյեկտների ցանկը սպառիչ է, թվարկվածներից դուրս այլ գործողությունների, ծառայությունների համար պետական տուրք գանձելն անթույլատրելի է:

**Հարց 1.3 .- Ինչպիսի դրույքաչափերով է գանձվում պետական տուրքը դատարանին ներկայցվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների և ընդհանրապես դատական պաշտպանությունից օգտվելու համար:**

- Դատական պաշտպանության իրավունքի իրականացման հետ կապված գործողությունների համար պետական տուրքի դրույքաչափերը սահմանված են Պ/Տ մասին օրենքի 9-րդ հոդվածով: Այս հոդվածում օգտագործվում է «Բազային տուրք» հասկացությունը, որը հավասար է հազար դրամի:

Դատական գործողությունների համար նախատեսված են պետական տուրքի հետևյալ դրույքաչափերը.

ա. հայցադիմումների և վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձի՝ գործին մասնակցելու մասին դիմումի համար՝

ա.1/ գույքային պահանջով- հայցագնի 2 տոկոսի չափով, բայց բազային

- տուրքի 150 տոկոսից ոչ պակաս /1500 դրամից ոչ պակաս/,  
 ա.2/ ոչ գույքային պահանջով- բազային տուրքի քառապատիկի չափով /4000 դր/:
- գ. իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու դիմումների համար- բազային տուրքի 500-պատիկի չափով / 500.000 դր/:
- դ. քաղաքացիներին սնանկ ճանաչելու դիմումների համար- բազային տուրքի 100-պատիկի չափով /100.000 դրամ/:

ե. հատուկ վարույթի գործերի վերաբերյալ դիմումների համար`

- ե.1/ անչափահասին լրիվ գործունակ ճանաչելու համար-բազային տուրքի չափով /1000 դր/
- ե.2/ այլ դիմումների համար-բազային տուրքի եռապատիկի չափով /3000 դր/
- ե.3/ իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի հաստատման մասին դիմումների համար-բազային տուրքի կրկնապատիկի չափով /2000 դր/
- ե.4/ ըստ ներկայացնողի և օրդերային կորցրած արժեթղթով հավաստված իրավունքները վերականգնելու մասին դիմումների համար բազային տուրքի չափով /1000 դր/:

զ. Ղատարանների վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ բողոքների համար`

- զ.1/ գույքային պահանջի գործերով- վերաքննիչ բողոքում նշված վիճարկվող գումարի 3 տոկոսի չափով, իսկ եթե վիճարկվում են առաջին ատյանի դատարանի կողմից բավարարված կամ չբավարարված պահանջներն ամբողջությամբ կամ չբավարարված պահանջները չեն վիճարկվում, ապա առաջին ատյանում հարուցված և բողոքարկվող հայցի 3 տոկոսի չափով.

- զ.2/ ոչ գույքային պահանջի գործերով- բազային տուրքի տասնապատիկի չափով / 10.000 դրամ/,

- զ.3/ հատուկ վարույթի գործերով- բազային տուրքի ութապատիկի չափով / 8.000 դր/:

է. Վճռաբեկ բողոքների համար`

- է.1/ գույքային պահանջի գործերով- հայցագնի 3 տոկոսի չափով, բայց ոչ պակաս բազային տուրքի տասնապատիկից և ոչ ավելի հազարապատիկից,
- է.2/ ոչ գույքային բնույթի գործերով- բազային տուրքի 20-պատիկի չափով /20.000 դր/,
- է.3/ հատուկ վարույթի գործերով- բազային տուրքի 10-պատիկի չափով / 10.000 դր./:

ը. Ղատարանի վճռի, դատավճռի դատարանի

որոշման պատճենը գործի քննությանը մասնակցող կողմերի կամ

այլ անձանց դիմումի համաձայն տալու համար- բազային տուրքի 50 տոկոսի / 500դ./ և պատրաստված յուրաքանչյուր էջի համար բազային տուրքի 15 տոկոսի չափով /150 դր/

Պետք է նկատի ունենալ, որ դատավարության մասնակից հանդիսացող հայցվորը, պատասխանողը, երրորդ անձինք, ամբաստանյալը, տուժողը, քաղ. հայցվորը, քաղ. պատասխանողը, մեղադրողը ստանում են այդ փաստաթղթերն անվճար: Հոդվածում նշված այս վճարումը վերաբերում է այն դեպքերին, երբ դրանց պատճենները ցանկանում են անվճար ստանալուց հետո կրկին ստանալ: Ղա չի վերաբերում դատավարության մասնակից չհանդիսացած այլ անձանց: Այլ անձինք պատճեններ անվճար չեն ստանում:

թ. Գործին մասնակցող անձանց հայցադիմումին կից փաստաթղթերի պատճենները գործի քննությանը մասնակցող կողմերի կամ այլ անձանց գրավոր դիմումներ տրամադրելու համար- բազային տուրքի 20 տոկոսի և պատրաստված յուր. էջի 10 տոկոսը:

ժ. Ղատակն նիստի համակարգչային ձայնագրման կրիչի բնօրինակից պատճենահանված կրիչ տալու համար յուրաքանչյուր կրիչի համար- բազային տուրքի չափով /1000 դր/:

**Հարց 1.4 .- Ինչպե՞ս է հաշվարկվում պետական տուրքի չափը, եթե մեկ հայցում միացված են մեկից ավելի պահանջներ:**

Եթե հայցադիմումում կամ դիմումում միացված են մեկից ավելի պահանջներ, ապա պետական տուրքը ենթակա է վճարման յուրաքանչյուր պահանջով նախատեսված դրույքաչափին համապատասժան: Եթե օրինակ հայցադիմումը պարունակում է գույքային և ոչ գույքային պահանջ, ապա գույքային պահանջով վճարվում է հայցագնի սահմանված տոկոսը, ոչ գույքային պահանջով՝ 4000 դրամ:

**Հարց 1.5 .-Ղատական ծառայություններից օգտվելիս պետական տուրքի գծով ինչպիսի՞ արտոնություններ են նախատեսված, ինչպես օգտվել դրանցից:**

Համաձայն Պ/Տ մասին օրենքի 21 հոդվածի, պետական տուրքի գծով կարող են կիրառվել հետևյալ արտոնությունները՝  
ա/ պետական տուրքի վճարումից ազատում.

բ/ պ/տ նվազեցում.

գ/ պ/տ դրույքաչափի նվազեցում.

դ/ պ/տ վճարման ժամկետի հետաժգում.

ե/ պ/տ սահմանված ժամկետում բյուջե չմուծելու համար հաշվարկված տյուժերի վճարումից ազատում, նվազեցում, դրանց վճարման ժամկետի հետաժգում:

Համաձայն օրենքի 22-րդ հոդվածի, դատարանում պետական տուրքի վճարումից ազատվում են.

ա/ հայցվորները՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հետ կապված այլ գումարների գանձման և աշխատանքային վեճերի վերաբերյալ հայցերով.

բ/ հայցվորները՝ ալիմենտի գանձման վերաբերյալ հայցերով.

գ/ հայցվորները՝ խեղճան կամ առողջության այլ վնասման, ինչպես նաև կերակրողի մահվան հետևանքով ծագած վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.

դ/ հայցվորները՝ հանցագործության հետևանքով պատճառված նյութական վնասի փոխհատուցման վերաբերյալ հայցերով.

ե/ հայցվորները՝ օրենքով նախատեսված դեպքերում այլ անձանց՝ օրենքով պաշտպանվող իրավունքների և շահերի պաշտպանության հարցերով դատարան տրվող դիմումների գծով.

զ/ ոչ առևտրային կազմակերպությունները և ֆիզիկական անձինք՝

-գործը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու մասին դատարանի որոշումը բեկանելու, վճիռների կատարումը հետաժգելու կամ տարաժամկետելու, վճիռների կատարման եղանակը և կարգը փոխելու, հայցերի ապահովման կամ ապահովման մի տեսակը մեկ այլ տեսակով փոխարինելու վերաբերյալ.

-երևան եկած հանգամանքների հետևանքով դատարանի վճիռը կամ որոշումը վերանայելու վերաբերյալ.

- դատարանների որոշումներով նշանակված տուգանքների զիջման կամ նվազեցման վերաբերյալ.

- դատարանների վճիռների կատարումը շրջադարձելու դիմումներով, բացթողնված ժամկետները վերականգնելու, ինչպես նաև դատական կատարածությունների գործողությունները գանգատարկելու վերաբերյալ.
- տուգանքների զիջումը կամ նվազեցումը մերժելու մասին դատարանների որոշումների դեմ գանգատներով, դատարանների որոշումների դեմ մյուս գանգատներով.
- վարչական իրավախախտումների վերաբերյալ համապատասխան լիազորված մարմինների ընդունված որոշման դեմ գանգատներով.
- մշակույթային արժեքները ապօրինի տիրապետողից հետ պահանջելու մասին հայց ներկայացնելիս.

գա/ վճռաբեկ գանգատ տվող անձի կողմից դատավարության ընթացքում հանդես եկած դատավարության մասնակիցները և երրորդ անձինք՝ գանգատին միանալու հայցերով.

ժգ/ դիմողները՝ ընտրելու և ընտրվելու իրենց իրավունքների խախտման վերաբերյալ դիմումներով.

ժդ/ դիմողները՝ քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումներով.

ժե/ փախստականի կարգավիճակ հայցողները՝ փախստականի կարգավիճակ ստանալու մասին դիմումի մերժումը բողոքարկելու վերաբերյալ հայցերով և բողոքներով.

ժզ/ փախստականի կարգավիճակ ունեցող անձինք՝ իրենց բնակարանային իրավունքները վերականգնելու վերաբերյալ հայցերով և բողոքներով.

ժէ/ պարտապանը՝ սեփական անվճարունակությունը ճանաչելու համար ներկայացվող հայցադիմումներով.

ժը/ դիմողները՝ վճարման կարգադրություն արձակելու մասին դիմումներով:

Այստեղ թվարկված են միայն այն այն դեպքերը, որոնք վերաբերում են ֆիզիկական անձանց արտոնություններին, պետական մարմինների արտոնությունները թվարկված չեն:

Թվարկված անձիք տուրքի վճարումից ազատվում են նաև վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ բերելիս:

Քրեական գործով հարուցված քաղաքացիական հայցի համար պետական տուրք չի գանձվում:

Պետական տուրք չի գանձվում նաև քրեական գործով վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

**Հարց 1.6 .-Արդյո՞ք առանձին անձանց համար, որոնք չեն թվարկված օրենքի 22 հոդվածում, չեն կարող տուրքի գծով արտոնություններ սահմանվել դատարանի որոշմամբ:**

- Համաձայն Պ/Տ մասին օրենքի 31 հոդվածի, դատարանը կարող է օրենքի 9 հոդվածում թվարկված առանձին գործերով մասնակիցների համար սահմանել արտոնություններ տուրքի վճարումից ազատում, վճարման հետաձգում, տուրքի նվազեցում՝ ելնելով կողմերի գույքային դրությունից:

Նման արտոնություն հայցող հայցվորը կամ դիմողը, համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 70, 87 հոդվածների, պետք է ներկայացնի այդ մասին միջնորդություն և այն հիմնավորող փաստաթղթեր: Միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին դատարանը կայացնում է որոշում:

**Հարց 1.7 .-Ղատարան դիմելիս ե՞րբ է վճարվում պետական տուրքը և այն չմուծելն ի՞նչ հետևանքներ կարող է առաջացնել դիմողի համար:**

- Պետական տուրքն ինքնուրույն հաշվարկում և վճարում է հայցվորը՝ հայցը կամ դիմումը դատարան ներկայացնելուց առաջ: Հայցադիմումին կամ դիմումին պետք է կցված լինի պետական տուրքի վճարումը հավաստող անդորրագիրը: Եթե չկա պետական տուրքի

վճարումը հավաստող փաստաթուղթ և հայցվորը կամ դիմողը միջնորդություն չի ներկայացրել պետ տուրքի վճարումից ազատելու կամ այն հետաձգելու մասին ապա դատարանը վերադարձնում է հայցադիմումը կամ դիմումը:

Հայցվորի միջնորդությունը մերժելու դեպքում նույնպես դատարանը վերադարձնում է հայցադիմումը կամ դիմումը /Քաղ. դատ. օր, հոդ. 92/:

Սահմանված պետական տուրքը մուծելուց հետո հայցադիմումը կարող է կրկին ներկայացվել դատարան:

#### **Հարց 1.8 .-Հարց- Ե՞րբ է հայցվորին վերադարձվում վճարված պետական տուրքը:**

Նախ նկատի պետք է ունենալ, որ հայցը բավարարվելիս, հայցվորի վճարած տուրքի գումարը նրան վերադարձվում է պատասխանողի հաշվին: Հայցը մասնակի բավարարվելիս տուրքի գումարը բախշվում է կողմերի միջև:

Հայցվորին վերադարձվում է նաև գործող օրենսդրությամբ նախատեսվածից ավելի վճարված տուրքի գումարը: Վճարված պետական տուրքը վերադարձվում է նաև դիմումների, բողոքների ընդունումը մերժելու, վերադարձնելու դեպքերում, տվյալ գործով վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու դեպքում, եթե գործը ենթակա չէ դատարանում քննության, կամ հայցվորը չի պահպանել տվյալ կատեգորիայի գործի վեճը լուծելու համար սահմանված նախնական արտադատարանական կարգը, կամ հայցը ներկայացրել է անգործունակ անձը:

Գույքն արգելանքից ազատելու մասին հայցի բավարարման դեպքում նույնպես վճարված տուրքի գումարը վերադարձվում է /Պ/Տ մասին օրենքի հոդ. 38/:

Վճարված պետական տուրքը հետ ստանալու համար, ՀՀ Ֆինանսների նախարարության գանձապետական մարմնին ներկայացվում է տուրքի մուծման անդորրագիրը և դատարանի այն որոշումը, որը հիմք է հետ ստանալու տալիս վճարված տուրքը: Ֆինանսական մարմինը պարտավոր է այն վերադարձնել 30 օրվա ընթացքում /Պ/Տ մասին օրենքի հոդ. 39/:

#### **Հարց 1.9 . - Ինչպե՞ս է գանձվում տուրքը դատավարության այն մասնակցից, որը դատարանի վճռով պետք է վճարի տուրքը:**

- Պետական տուրքի հարկադիր գանձման խնդիր առաջանում է, երբ հայցվորն ազատված է պետ տուրքից կամ դատարանի որոշմամբ տուրքի վճարումը հետաձգվել է: Վճռի կայացման հետ միաժամանակ նույն վճռով լուծվում է նաև պետական տուրքի գանձման հարցը՝ դատարանը որոշում է, թե դատավարության կողմերից ով պետք է վճարի տուրքը և ինչ չափով: Վճռի ուժի մեջ մտնելուց հետո, վճռով սահմանված տուրքը պետական բյուջե գանձելու համար, դատարանը կատարողական թերթ է ուղարկում հարկադիր կատարման ծառայություն:

Եթե հայցը բավարարվել է և պատասխանողից հօգուտ հայցվորի պետք է բռնագանձվի նաև հայցվորի վճարած պետական տուրքը, ապա այն միացվում է բավարարված հայցապահանջին:

#### **Հարց 1.10.- Դատարան դիմելու դեպքում բացի պետական տուրքից, դատավարության կողմերից ուրիշ ինչպիսի՞ գանձումներ կարող են կատարվել:**

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը /հոդ.68, 73/ և Վարչական դատավարության օրենսգիրքը /հոդ. 55-59 / օգտագործում են «դատական ծախսեր» հասկացությունը:

Համաձայն Քաղաքացիական և Վարչական դատավարության օրենսգրքերի, դատական ծախսերը բաղկացած են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Այլ ծախսերի շարքին են դասվում փորձագետներին, վկաներին կանչելու, ապացույցները դրանց գտնվելու վայրում զննելու, ինչպես նաև գործի քննության հետ կապված այլ գործողությունների համար վճարման ենթակա գումարները:

Դատարան կանչվող վկաների ծախսերը վճարվում են պետական բյուջեով հատկացված միջոցներից՝ դատական դեպարտամենտի միջոցով:

Համաձայն Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 57 հոդվածի, իրեղեն ապացույցների պահպանման ծախսերը բախշվում է կողմերի միջև:

Համաձայն 60 հոդվածի, կողմի միջնորդությամբ նշանակված փորձաքննության հետ կապված ծախսերի համար վճարում է այդ կողմը:

Վարչական դատավարության օրենսգրքի 58 և 59 հոդվածներով առավել մանրամասն է լուծվել դատական ծախսերի բաշխման հարցը: Այստեղ կարևորվում է հատկապես այն, որ եթե գործը լուծվել է հօգուտ հայցվորի, ապա ներկայացուցիչներին վճարվող գումարների փոխհատուցման պարտականությունը դրվում է համապատասխանաբար Հայաստանի հանրապետության կամ համայնքի վրա՝ պայմանավորված նրանով, թե ում դեմ է ներկայացված եղել հայցը:

## **2. Պետական տուրքը նոտարական գործողությունների կատարման համար**

Քաղաքացիաիրավական գործարքներից ծագող իրավունքների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից է գործարքի նոտարական վավերացումը: Անշարժ գույքի հետ կատարվող գործարքների վավերականությունը պայմանավորվում է դրանց նոտարական հաստատմամբ:

Գործարքի նոտարական վավերացումը նաև դրա օրինականության ապահովման երաշխիքներից է այն առումով, որ նոտարը մերժում է այնպիսի պայմանագրի վավերացումը, որը պարունակում է օրենքին հակասող պայմաններ:

### **Հարց - 2.1 Պետական տուրքի ինչպիսի դրույքաչափեր են նախատեսված նոտարական գործողությունների կատարման համար:**

- Համաձայն «Պետական տուրքի մասին» օրենքի 11 հոդվածի, նոտարական գրասենյակները նոտարական գործողությունների կատարման համար պետական տուրքը գանձում են հետևյալ դրույքաչափերով՝

ա. անշարժ գույքի յուրաքանչյուր միավորի օտարման /բացառությամբ նվիրատվության/ պայմանագրերը վավերացնելու համար՝

ա.1/ գյուղատնտեսական նշանակության ոչ պետական հողամասերի կամ տնամերձերի կամ պետական կամ համայնքային սեփականության հողամասերի-  
բազային տուրքի 50 տոկոսի չափով  
/500 դր/,

ա.2/ այլ անշարժ գույքի համար-  
բազային տուրքի  
հնգապատիկի չափով  
/5000 դրամ/.

բ. անշարժ գույքի օգտագործման /վարձակալության,  
անհատույց օգտագործման, ռենտայի և այլն/  
պայմանագիրը վավերացնելու համար

բ.1/ գյուղատնտեսական նշանակության ոչ պետական  
հողամասերի կամ տնամերձ հողամասերի, պետական  
կամ համայնքային սեփականություն համարվող



- հողամասերի, ինչպես նաև հանրակացարանների համար- բազային տուրքի 50 տոկ. չափով /500 դր./
- բ.2/ բնակարանների համար- բազային տուրքի չափով /1000 դր/
- բ.3/ այլ անշարժ գույքի համար- բազային տուրքի հնգապատիկի չափով /5000 դր./
- գ.ավտոտրանսպորտային միջոցների օտարման /բացի նվիրատվությունից/ պայմանագրերը վավերացնելու համար`
- գ.1/ առաջին հերթի ժառանգներին- բազային տուրքի կրկնապատիկի չափով /2000 դր/
- գ.2/ 2-րդ և 3-րդ հերթի ժառանգներին- բ.տ. եռապատիկի չափով /3000 դր/
- գ.3/ այլ անձանց - բ.տ. հնգապատիկի չափով /5000 դր./
- դ. գրավի / բացառությամբ անշարժ գույքի հիփոթեքի կամ շարժական գույքի կոշտ գրավի պայմանագրերի վավերացման համար- բազային տուրքի կրկնապատիկի չափով /2000 դր/
- ե. անշարժ գույքի հիփոթեքի կամ շարժական գույքի կոշտ գրավի պայմանագրերի վավերացման / բացառությամբ գյուղատնտեսական նշանակության ոչ պետական հողամասերի, տնամերձերի և այգեգործական հողամասերի յուրաքանչյուր միավորի և բնակելի նշանակության գույքի/ համար- բազային տուրքի չափով /1000 դր/
- զ. գյուղատնտեսական նշանակության ոչ պետական հողամասերի, տնամերձերի և այգեգործական հողամասերի յուրաքանչյուր միավորի և բնակելի նշանակության գույքի պայմանագրերի վավերացման- բազային տուրքի 50 տոկոսի չափով / 500 դր/
- զբ. գյուղատնտեսական նշանակության հողերի, տնամերձերի, այգեգործական հողերի միավորման, բաժանման պայմանագրերի վավերացման համար-բ.տ. 50 տոկոսի չափով / 500 դրամ/
- զգ. այլ պայմանագրերի վավերացման համար-բազային տուրքի կրկնապատիկի չափով / 2000 դր/
- զդ. կտակների վավերացման համար- բազային տուրքի կրկնապատիկի չափով / 2000դր/
- է. ժառանգության իրավունքի վկայագրեր տալու եւ նվիրատվության պայմանագրերի վավերացման համար`
- է.1) առաջին հերթի ժառանգներին բազային տուրքի կրկնապատիկի չափով

/2000դր/

- է.2) երկրորդ եւ երրորդ հերթի ժառանգներին բազային տուրքի եռապատիկի չափով /3000 դր/
- է.3) այլ անձանց բազային տուրքի հնգապատիկի չափով /5000 դր/
- ը. անշարժ գույքի տիրապետման, օգտագործման եւ տնօրինման իրավունքի լիազորագրեր վավերացնելու համար բազային տուրքի եռապատիկի չափով /3000դր/
- թ. շարժական գույքի տիրապետման, օգտագործման եւ տնօրինման (բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցների) լիազորագրեր վավերացնելու համար բազային տուրքի կրկնապատիկի չափով /2000դր/
- ժ. գույքային իրավունքների կառավարման լիազորագրերի վավերացման համար բազային տուրքի չափով /1000 դր/
- ի. ավտոտրանսպորտային միջոցները տնօրինելու իրավունքի լիազորագրերը վավերացնելու համար`
- ի 1) առաջին հերթի ժառանգներին բազային տուրքի չափով /1000 դր
- ի2) երկրորդ եւ երրորդ հերթի ժառանգներին բազային տուրքի հնգապատիկի չափով /5000 դր/
- ի 3) այլ անձանց քսանապատիկի չափով /20.000 դր/
- լ. ավտոտրանսպորտային միջոցները տնօրինելու իրավունքի վերալիազորման իրավունքով լիազորագրերի վավերացման համար`
- լ.1) առաջին հերթի ժառանգներին բազային տուրքի չափով /1000 դր/
- լ. 2) այլ անձանց բազային տուրքի երեսնապատիկի չափով /30.000 դր/
- խ. այլ լիազորագրերի վավերացման համար բազային տուրքի հիսուն տոկոսի չափով /500 դր/
- ծ. ժառանգական գույքի պահպանմանն ուղղված միջոցառումների իրականացման համար բազային տուրքի կրկնապատիկի չափով

/ 2000 դր/

կ. փաստաթղթերի թարգմանության յուրաքանչյուր էջի իսկության վավերացման համար

բազային տուրքի  
հիսուն տոկոսի չափով  
/500 դր/

հ. փաստաթղթերի պատճենների եւ դրանցից քաղվածքների յուրաքանչյուր էջի իսկության վավերացման համար

բազային տուրքի  
երեսուն տոկոսի չափով  
  
/ 300 դր/

ծ. փաստաթղթերի ստորագրությունների, այդ թվում՝ թարգմանչի ստորագրության յուրաքանչյուր փաստաթղթի իսկության վավերացման համար

բազային տուրքի  
հիսուն տոկոսի չափով  
/500 դր/

դ. առանց դատարան դիմելու՝ գրավ դրված գույքի հաշվին գրավառուի պահանջները բավարարելու վերաբերյալ գրավառուի եւ գրավատուի միջեւ կնքված համաձայնության վավերացման համար

բազային տուրքի  
հնգապատիկի չափով  
/5000 դր/

ձ. նոտարական այլ գործողությունների համար

բազային տուրքի  
կրկնապատիկի չափով  
/2000 դր/

**Հարց .- 2.2 Նոտարական գործողություններ կատարող մարմիններում պետական տուրքի գծով ինչպիսի՞ արտոնություններ են սահմանված:**

- Համաձայն «Պետական տուրքի մասին» օրենքի 24 հոդվածի, նոտարական գործողություններ իրականացնող մարմիններում պետական տուրքի վճարումից ազատվում են՝

ա) ֆիզիկական անձինք՝ պետության կամ համայնքի օգտին կտակի կամ գույքի նվիրատվության պայմանագիրը վավերացնելու համար.

բ) պետությանը կամ համայնքին ժառանգության իրավունքով անցած գույքի մասին նրանց վկայագիր, ինչպես նաեւ դրանց ստացման անհրաժեշտ փաստաթղթեր տալու համար.

գ) ֆիզիկական անձինք՝ ժառանգության իրավունքի մասին նրանց վկայագիր տալու համար, եթե՝

- բնակելի տունը՝ հողամասով բնակարանը կամ բնակարանային-շինարարական կոոպերատիվում փայն անցնում է ժառանգատուի հետ համատեղ բնակվող այնպիսի անձանց, ովքեր ժառանգատուի մահվան օրվա դրությամբ եղել են հաշվառված նույն տանը եւ նրա մահից հետո շարունակում են բնակվել այնտեղ,

- ժառանգության իրավունքի օբյեկտ են համարվում բանկերում եղածավանդները, անձնական եւ գույքային ապահովագրության գծով ապահովագրական գումարները, պետական փոխառության պարտատոմսերը, աշխատավարձի գումարները, կենսաթոշակները.

դ) ֆիզիկական անձինք՝ թոշակների եւ նպաստների ստանալու վերաբերյալ լիազորագրերը վավերացնելու համար.

ե) մայրերը՝ բազմազավակության շքանշաններով եւ մեդալներով պարգևատրելու մասին փաստաթղթերի պատճենների իսկությունը վավերացնելու համար.

զ) այն քաղաքացիների ժառանգները, ովքեր իրենց աշխատանքի (ծառայության) վայրում կազմակերպությունների հաշվին ապահովագրված են եղել դժբախտ պատահարի հետեւանքով մահվան կամ զոհվելու դեպքերից՝ ապահովագրական վարձատրության ժառանգման իրավունքը հաստատող վկայագիր տալու համար.

է) երկրորդ աշխարհամարտի հաշմանդամները եւ այն անձինք, ովքեր հաշմանդամ են դարձել Հայաստանի Հանրապետությունը, նախկին ԽՍՀՄ-ը պաշտպանելիս կամ զինվորական այլ պարտականություններ կատարելիս վիրավորվելու, կոնտուզիայի, խեղճան կամ ռազմաձակատում գտնվելու հետ կապված հիվանդության հետեւանքով, նախկին պարտիզան հաշմանդամները, ինչպես նաեւ կենսաթոշակային օրենսդրությանը համապատասխան զինծառայողների՝ վերը նշված խմբերին հավասարեցված մյուս հաշմանդամները, երկրորդ աշխարհամարտում Հայաստանի Հանրապետությունը, նախկին ԽՍՀՄ-ը պաշտպանելիս կամ զինվորական այլ պարտականություններ կատարելիս զոհված կամ անհայտ կորած անձանց ընտանիքի անդամները՝ վերոհիշյալ հիմքերով արտոնություններ վերապահելու համար անհրաժեշտ փաստաթղթերի պատճենների իսկությունը վավերացնելու համար.

ը) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը.

թ) սեփականատերերն ու օգտագործողները՝ կադաստրային քարտեզագրումն ավարտված տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման գործընթացի ժամանակ պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի օտարման պայմանագրերը վավերացնելու համար.

ժ) ֆիզիկական անձինք՝ պետական սեփականություն համարվող բնակարանների անհատույց մասնավորեցման (նվիրատվության) պայմանագրի վավերացման համար.

ժա) սեփականատերը՝ օրենքով նախատեսված դեպքերում սեփականության իրավունքով անհատույց տրամադրված պետական սեփականություն համարվող հողամասերի օտարման պայմանագրերը վավերացնելու համար.

ժբ) 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած անձինք՝ իրենց զբաղեցրած համայնքային բնակարանային ֆոնդի բնակելի տարածքների վարձակալության պայմանագրերը վավերացնելու համար.

ժգ) սեփականատերերը եւ օգտագործողները՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 225 հոդվածով սահմանված բնակելի տարածության օգտագործման պայմանագրերը վավերացնելու համար.

ժդ) Հայաստանի Հանրապետության պետական ծրագրերի շրջանակներում հողերի միավորման (կոնսոլիդացիա) պայմանագրերը վավերացնելու համար:

**Հարց. 2.3 - Քաղաքի պետական տուրքից, ուրիշ ինչ գանձումներ են նախատեսվում նոտարական գործողությունների համար:**

- Համաձայն «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի, նոտարական գործողությունների իրականացումը և նոտարի մատուցած ծառայությունները վճարովի են:

Նույն հոդվածի 4-րդ մասում ասված է, որ նոտարական գործողությունների սակագները սահմանում է ՀՀ կառավարությունը:

ՀՀ կառավարության 25.04.02 թ. թիվ 919-Ն «Նոտարի կողմից մատուցվող վճարովի ծառայությունների սակագները հաստատելու մասին» որոշմամբ սահմանվել են սակագներ ըստ կնքվող գործարքների բնույթի և բարդության: Բոլոր դեպքերում նախատեսվող վճարն անվանված է «Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման և պարզաբանման համար» և դրույքները սահմանված են ընտրանքային տարբերակով՝ նվազագույն աշխատավարձի 0,5-5, 0,5-1, 1-5, 0,3-3 և այլ գործակիցների կիրառմամբ: Դա նշանակում է, որ նոտարն ինքն է գնահատում իր ծառայությունը՝ կառավարության որոշմամբ սահմանված գործակիցների շրջանակներում: Օրինակ, լիազորագրի հաստատման համար պետական տուրքը նախատեսված է 500 դրամ, ծառայության վճարի սակագինը սահմանված է նվազագույն աշխատավարձի 0,5-3-պատիկի չափով՝ 500-3000 դրամ, ինչն էլ օգտագործելով՝ նոտարները պահանջում և գանձում են առավելագույնը: Մինչդեռ, կառավարության որոշման 2-րդ կետից հետևում է, որ սահմանված առավելագույն սակագնի չափով գանձում կարող է կատարվել այն դեպքում, երբ տվյալ գործարքն ունի որոշակի բարդություններ՝ անհրաժեշտություն կա փաստաթղթերն ուղարկել փորձաքննության, կազմակերպություններից պահանջել համապատասխան տեղեկություններ կամ փաստաթղթեր և այլն: Մնացած դեպքերում նոտարը պարտավոր է ծառայության դիմաց գանձումը կատարել սահմանված սակագների նվազագույնի չափով:

ՀՀ կառավարության 25.04.02թ. թիվ 919-Ն որոշումը կցվում է որպես հավելված 1:

**3.Քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար պետական տուրքի դրույքաչափերը**

**3.1 Հարց-Պետական տուրքի ինչպիսի դրույքաչափեր են նախատեսված քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար:**

- Համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի, քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

- |  |  |
|--|--|
| 1. ծննդյան գրանցման համար, ներառյալ՝ վկայական տալը   | բազային տուրքի տասը տոկոսի չափով /100 դր/    |
| 2. ամուսնության գրանցման համար, ներառյալ վկայական տալը   | բազային տուրքի չափով /1000 դր/               |
| 3. ամուսնալուծության գրանցման համար, ներառյալ՝ վկայական տալը   | բազային տուրքի տասնապատիկի չափով /10.000 դր/ |
| 4. ազգանվան, անվան եւ հայրանվան փոփոխություն, լրացում եւ ուղղում գրանցելու համար, ներառյալ՝ վկայականի տալը | բազային տուրքի հնգապատիկի չափով /5000 դր/    |

5. քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին վկայականների կրկնօրինակը տալու համար	բազային տուրքի կրկնապատիկի չափով /2000 դր/
6. հայրություն (մայրություն) ճանաչելու համար	բազային տուրքի չափով /1000 դր/
7. որդեգրում գրանցելու համար	բազային տուրքի չափով /1000 դր/
8. ծննդյան, ամուսնության, ամուսնալուծության եւ մահվան փաստերը վերականգնելու վկայականները տալու համար	բազային տուրքի չափով /1000 դր/
9. քաղաքացիական կացության ակտերի գրանցման առկայության կամ բացակայության մասին տեղեկանք տալու համար	բազային տուրքի կրկնապատիկի չափով /2000 դր/
10. պետական տուրք վճարողի դիմումի հիման վրա քաղաքացիական կացության ակտերի գրանցման վկայականի կրկնօրինակ ստանալու ծանուցում ուղարկելու համար	բազային տուրքի չափով /1000դր/

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի աշխատավայրից (բաժնից) դուրս կատարվող քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար պետական տուրքը գանձվում է կրկնակի չափով:

**Հարց. - 3.2 Պետտուրքի գծով ինչպիսի օ արտոնություններ են նախատեսված քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում:**

- Համաձայն «Պետական տուրքի մասին օրենքի 25 հոդվածի քաղաքացիական կացության ակտերի գրանցում իրականացնող մարմիններում պետական տուրքի վճարումից ազատվում են`

ա) կրթության համակարգի մարմինները, անչափահասների գործերով հանձնաժողովները` ծնողազուրկ եւ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին բոլոր տեսակի գիշերօթիկ հիմնարկներ եւ ուսումնական հաստատություններ ուղարկելու կապակցությամբ ծննդյան վկայականների կրկնօրինակների տալու համար.

բ) քաղաքացիները` քաղաքացիական կացության ակտերի գրանցման ժամանակ, գրանցող մարմնի աշխատակցի թույլ տված սխալների հետ կապված, գրանցումներում փոփոխություններ, լրացումներ եւ ուղղումներ կատարելու դեպքերում` նոր վկայականներ տալու համար.

գ) ամուսինները` ամուսնության գրանցման ժամանակ իրենցից մեկի ազգանունը որպես ամուսնական ընդհանուր ազգանուն ընտրելու դեպքում.

դ) անչափահաս երեխաների ակտային գրանցումներում ծնողի ազգանունը կամ անունը փոփոխելու կապակցությամբ կատարվող ուղղումների համար:

**4. Պետական գրանցման համար /բացի իրավաբանական անձանց/  
պետական տուրքի դրույքաչափերը**

**Հարց.- 4.1 իրավունքների պետական գրանցման համար պետական տուրքի ինչպիսի դրույքաչափեր են նախատեսված ըստ գրանցող մարմինների:**

- Իրավունքների պետական գրանցում իրականացվում է պետական ռեգիստրի, անշարժ գույքի կադաստրի մարմիններում, իսկ տրանսպորտային միջոցների մասով՝ ոստիկանության ավտոտեսչության մարմիններում:

Այդպիսի պետական գրանցումների համար, համաձայն «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի, նախատեսված են պետական տուրքի հետևյալ դրույքաչափերը՝

**Ա. Պետական ռեգիստր**

Պետական ռեգիստրում ենթակա են պետական գրանցման իրավաբանական անձինք, դրանց ստորաբաժանումները, հիմնարկները, դրանց կանոնադրություններում կատարվող փոփոխությունները, անհատ ձեռնարկատերերը: Այդ բոլոր գրանցումների համար նախատեսվում է պետական տուրք: Այստեղ բերվում են միայն անհատ ձեռնարկատերի գրանցման համար գանձվող պետական տուրքի դրույքաչափերը.

- |   |                                 |
|---|---------------------------------|
| 1. անհատ ձեռնարկատերերի պետական գրանցման համար-                           | բ.տ եռապատիկի չափով /3000 դր/   |
| 2. անհատ ձեռնարկատերի տվյալների փոփոխության գրանցման համար                | բ.տ 150 տոկոսի չափով /1500 դր/  |
| 3. անհատ ձեռնարկատերի պետական գրանցման վկայականի փոխարեն նորը տալու համար | բ.տ. վեցապատիկի չափով /6000 դր/ |

**Բ. Պետական ավտոտեսչություն**

- |  |  |
|--|--|
| 1. ավտոմեքենայի պետական համարանիշ տալու համար  | բազային տուրքի 12-պատիկի չափով /12.000 դր/   |
| 2. ավտոմեքենայի կորցրած պետական համարանիշը վերականգնելու համար                         | բազային տուրքի 24-պատիկի չափով /24. 000 դր/  |
| 3. գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրանցման և պետական համարանիշներ տալու համար    | բազային տուրքի հնգապատիկի չափով /5000 դր/    |
| 4. գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների կորցրած պետական համարանիշը վերականգնելու համար | բազային տուրքի տասնապատիկի չափով /10.000 դր/ |
| 5. տրակտորային կցանքների պետական համարանիշեր տալու համար                               | բազային տուրքի եռապատիկի չափով               |

/3000 դր/

6. տրակտորային կցանքների պետական համարանիշեր վերականգնելու համար

բազային տուրքի վեցապատիկի չափով /6000 դր/

7. ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) տալու համար

բազային տուրքի վեցապատիկի չափով /6000դր/

8. ավտոմեքենայի (մոտոցիկլետի) կորցրած տեխնիկական անձնագրի (գրանցման վկայականի) կրկնօրինակ տալու համար

բազային տուրքի 12-պատիկի չափով /12.000 դր/

9. տրանսպորտային միջոցների տարեկան տեխնիկական զննությունը ճանապարհային ոստիկանության մարմինների կողմից անցկացնելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ տալու համար

բազային տուրքի 6-պատիկի չափով /6000 դր/

10. գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների տարեկան զննությունն անցնելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ տալու համար

բազային տուրքի 150 տոկոսի չափով /1500 դր/

11. գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաները գրանցելու, վերագրանցելու, հաշվառումից հանելու, ինչպես նաև դրանց գրանցման տվյալների փոփոխության հետ կապված որեւէ գործողություն կատարելու համար

բազային տուրքի 50 տոկոսի չափով /500 դր/

12. վարորդական իրավունքի վկայական տալու համար

բազային տուրքի 12-պատիկի չափով /12.000 դր/

13. վարորդական իրավունքի կորցրած վկայականի կրկնօրինակը տալու համար

բազային տուրքի 24-պատիկի չափով /24.000 դր/

14. օդային եւ ջրային փոխադրամիջոցների վարման իրավունքի վկայական տալու համար

բազային տուրքի 12-պատիկի չափով /12.000 դր/

15. օդային եւ ջրային փոխադրամիջոցների վարման իրավունքի վկայականի կրկնօրինակ տալու համար

բազային տուրքի 24-պատիկի չափով /24.000 դր/

16. գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների վարման իրավունքի վկայական տալու համար

բազային տուրքի եռապատիկի չափով /3000 դր/

17. գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների վարման իրավունքի վկայականի կրկնօրինակ տալու համար

բազային տուրքի վեցապատիկի չափով



/6000 դր/

18. տարանցիկ համարանիշ տալու համար

բազային տուրքի  
եռապատիկի չափով  
/3000 դր/

### Գ. Անշարժ գույքի կադաստր

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար նախատեսվում են պետական տուրքի հետևյալ դրույքաչափերը`

- |   |   |
|---|---|
| 1) անշարժ գույքի պետական գրանցում կատարելու (բացառությամբ սեփականաշնորհվող պետական, հանրային եւ համայնքային բնակարանային ֆոնդի բնակարանների)  | բազային տուրքի չափով<br>/1000դր/                |
| 2) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին տնամերձ, այգեգործական (ամառանոցային) եւ բնակելի տան շինարարության եւ դրա սպասարկման համար հատկացված եւ որպես սեփականություն նրանց անցած հողերի եւ ամրակայված գույքի պետական գրանցում կատարելու (բացառությամբ սահմանամերձ, լեռնային եւ ծայրամասային բնակավայրերի)  | բազային տուրքի հնգապատիկի չափով<br>/5000 դր/    |
| 3) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված չափով սահմանամերձ, լեռնային եւ ծայրամասային բնակավայրերում տնամերձ, այգեգործական (ամառանոցային) եւ բնակելի տան շինարարության եւ դրա սպասարկման համար հատկացված եւ որպես սեփականություն նրանց անցած հողերի եւ ամրակայված գույքի պետական գրանցում կատարելու | բազային տուրքի 30 տոկոսի<br>/300 դր/            |
| 4) հասարակական եւ արտադրական նշանակության անշարժ գույքի օտարման /վաճառք, փոխանակություն, նվիրատվություն/ պայմանագրերի պետական գրանցում կատարելու համար`   |   |
| 4.1) "փոքր" օբյեկտների, բացառությամբ "դբ" կետով նշված անշարժ գույքի /համաձայն "Պետական գույքի մասնավորեցման/ սեփականաշնորհման/ մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 2 հոդվածի/ պետական գրանցում կատարելու համար   | բազային տուրքի քսանապատիկի չափով<br>/20.000 դր/ |
| 4.2) գյուղատնտեսական նշանակության անշարժ գույքի եւ մինչեւ 30 քառակուսի մետր կրպակների, տաղավարների, ավտոտնակների եւ այլ անշարժ գույքի պետական գրանցում կատարելու համար  | բազային տուրքի տասնապատիկի չափով<br>/10.000 դր/ |
| 4.3) հասարակական եւ արտադրական նշանակության այլ անշարժ գույքի քառասնապատիկի չափով   | բազային տուրքի<br>/4000 դր/                     |

պետական գրանցում կատարելու համար

- |   |   |
|---|---|
| 4.4) անհատական բնակելի տների, այգետնակների պետական գրանցում կատարելու համար   | բազային տուրքի<br>չափով<br>/1000 դր/                  |
| 4.5) անշարժ գույքի առանձին միավորների (ավտոտնակ, հացատուն, գոմ եւ այլ կառույցներ) պետական գրանցում կատարելու համար  | բազային տուրքի<br>չափով<br>/1000 դր/                  |
| 4.6) բնակելի նշանակության անշարժ գույքի՝ հողի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողերի) եւ ամրակայված գույքի օտարման (ձեռքբերման) պայմանագրի պետական գրանցում կատարելու համար   | բազային տուրքի<br>քսանապատիկի<br>չափով<br>/20.000 դր/ |
| 4.7) գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողամասերի յուրաքանչյուր միավորի օտարման /ձեռքբերման/ պայմանագրի պետական գրանցում կատարելու համար  | բազային տուրքի<br>չափով<br>/1000 դր/                  |
| 4.8) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային, ծայրամասային բնակավայրերում գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողամասերի յուրաքանչյուր միավորի (բացառությամբ տնամերձ հողամասերի) օտարման (ձեռքբերման) պայմանագրի պետական գրանցում կատարելու համար | բազային տուրքի<br>30 տոկոսի չափով<br>/300 դր/         |
| 4.9) կտակի կամ ժառանգման միջոցով ձեռք բերված անշարժ գույքի պետական գրանցում կատարելու   | բազային տուրքի<br>չափով<br>/1000 դր/                  |
| 4.10) պետական եւ համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության եւ ենթավարձակալության պայմանագրի պետական գրանցում կատարելու   | բազային տուրքի<br>չափով<br>/1000 դր/                  |
| 4.11) պետական եւ համայնքային սեփականություն համարվող հողերի օտարման, վարձակալության եւ ենթավարձակալության պայմանագրի պետական գրանցում կատարելու   | բազային տուրքի<br>չափով<br>/1000 դր/                  |
| 4.12) շենքերի եւ շինությունների վարձակալության եւ ենթավարձակալության պայմանագրի պետական գրանցում կատարելու  | բազային տուրքի<br>չափով<br>/1000 դր/                  |
| 4.13) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ սեփականություն համարվող անշարժ գույքի վարձակալության պայմանագրի պետական գրանցում կատարելու  | բազային տուրքի<br>չափով<br>/1000 դր/                  |

4.14) Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողամասերի յուրաքանչյուր միավորի վարձակալության պայմանագրի պետական գրանցում կատարելու համար	բազային տուրքի չափով /1000 դր/
4.15) անշարժ գույքի օգտագործման իրավունքի պայմանագրերի պետական գրանցում կատարելու	բազային տուրքի չափով /1000 դր/
4.16) անշարժ գույքի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողերի) եւ բնակելի նշանակության անշարժ գույքի գրավի /հիփոթեքի/ պայմանագրերի գրանցում կատարելու եւ նշված գույքի հիփոթեքի առարկայի օտարման վրա սահմանափակում /արգելադրում/ կիրառելու համար	բազային տուրքի չափով /1000 դր/
4.17) գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողամասերի յուրաքանչյուր միավորի, ինչպես նաեւ բնակելի նշանակության անշարժ գույքի գրավի /հիփոթեքի/ պայմանագրի պետական գրանցում կատարելու եւ նշված հողամասերի գրավի /հիփոթեքի/ առարկայի օտարման վրա սահմանափակում /արգելադրում/ կիրառելու համար	բազային տուրքի չափով /1000 դր/
4.18) շարժական գույքի (բացառությամբ գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների) գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցում կատարելու համար	բազային տուրքի կրկնապատիկի չափով /2000 դր/
4.19) գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի գրանցում կատարելու համար	բազային տուրքի չափով /1000 դր/
4.20) անշարժ գույքի փոխանակման պայմանագրերի ն պետակա գրանցում կատարելու	բազային տուրքի չափով /1000 դր/
4.21) հողը նշտական օգտագործման հանձնելու որոշումների պետական գրանցում կատարելու համար	բազային տուրքի չափով /1000 դր/
4.22) հողամասերի սահմանները փոփոխելու, միավորելու եւ բաժանելու մասին պայմանագրերի պետական գրանցում կատարելու	բազային տուրքի չափով
4.23) անշարժ գույքի նկատմամբ իրավունքի սահմանափակման, այդ թվում՝ սերվիտուտի պայմանագրի պետական գրանցում կատարելու համար	բազային տուրքի չափով /1000 դր/
4.24) անշարժ գույքի արտոնված օգտագործման իրավունքի	բազային տուրքի

արտոնագրի պետական գրանցում կատարելու համար	չափով /1000 դր/
4.25) անշարժ գույքի նկատմամբ ժամկետային, հայեցողական, անժամկետ, ցմահ իրավագործության պետական գրանցում կատարելու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով /5000 դր/
4.26) անշարժ գույքի սեփականության իրավունքի առանձին իրավագործությունների պետական գրանցում կատարելու	բազային տուրքի չափով /1000 դր/
4.27) անշարժ գույքի նկատմամբ այլ իրավունքների պետական գրանցման համար	բազային տուրքի չափով /1000 դր/
4.28) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի դադարման մասին որոշումների, վճիռների եւ հիման վրա դատավճիռների պետական գրանցում կատարելու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով /5000 դր/
4.29) հողի մշտական օգտագործման եւ հողի ու շենքերի, շինությունների վարձակալության իրավունքի դադարման մասին որոշումների, վճիռների եւ դատավճիռների պետական գրանցում կատարելու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով /5000 դր
4.30) անշարժ գույքից կամ նրա մի մասից սեփականատիրոջ, օգտագործողի հրաժարվելու մասին որոշումների պետական գրանցում կատարելու համար	բազային տուրքի հնգապատիկի չափով /5000 դր/

**4.3 Հարց- Կադաստրի մարմինները, բացի պետական տուրքից, գանձում են նաև ծառայության վարձ: Ի՞նչ չափերով է գանձվում ծառայության վարձը և ի՞նչ փաստաթղթերով է է այն կարգավորվում:**

- «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածից հետևում է, որ անշարժ գույքի կադաստրային քարտեզագրման ոչ սկզբնական /բազային/ աշխատանքները վճարովի են և նման ծառայությունների համար վճարում է սեփականատերը կամ օգտագործողը:

Նույն օրենքի 45 հոդվածի համաձայն, անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը վճարովի է:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 12.02.02թ. թիվ 89-Կ հրամանով հաստատվել է պետական գրանցման, գույքի և դրա նկատմամբ իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման վճարների ցանկը:

Այդ ցանկով հաստատված են շենքերի և շինությունների, հողերի չափագրման, տեղազննությունների, կամերալ աշխատանքների և գնահատումների համար գանձվող վճարների չափերը:

Ելնելով Օրենքի 18 հոդվածի իմաստից, այս աշխատանքները վճարովի են, եթե կատարվում են որպես պատվեր կամ սկզբնական քարտեզագրման թարմացման կարգով:

Օրինակ, հրամանով սահմանվում է՝ շենքերի և շինությունների չափագրում՝ 1 քմ համար 20 դրամ, հողամասերի չափագրում /բացառությամբ գյուղ. նշանակության, հատուկ պահպանվող տարածքների հողերի, անտառային հողերի/ յուրաքանչյուր 100քմ-ի համար 300 դրամ և այլն:

Առանձին աղյուսակով ներկայացված են անշարժ գույքի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման համար վճարումների չափերը: Ըստ այդ աղյուսակի, գրանցված իրավունքի յուրաքանչյուր միավորի համար նախատեսվում է հիմնականում 500 դրամ, միասնական տեղեկությունների տրամադրման համար ավելի բարձր գումարներ են և պայմանավորվում են տեղեկատվության բնույթով:

Այլ վճարումներ են նախատեսվում իրավունքների ծագման, փոփոխման, փոխանցման և դադարման պետական գրանցման համար: Նկատի է ունեցվում օտարումը, կտակով կամ ըստ օրենքի ժառանգումը վարձակալությունը, անհատույց օգտագործումը, գրավը, հիփոթեքը և այլն: Այստեղ էլ տարբերակված են հողերն ըստ գործառնական նշանակության, շինությունները և գործարքի բնույթը:

Ըստ այդմ էլ նախատեսվող վճարի չափը տատանվում է 500-5000 դրամի սահմաններում:

Կադաստրի պետական կոմիտեի վերոհիշյալ հրամանը կցվում է որպես հավելված 2:

#### **4.4 Հարց. - Պետական տուրքի գծով արդյո՞ք այլ ծառայությունների գծով արտոնություններ չեն նախատեսված:**

- Այլ ծառայությունների համար Պետական տուրքի գծով արտոնություններ նախատեսված են նաև «Պետական տուրքի մասին» օրենքի 26 և 29 հոդվածներով:

Համաձայն օրենքի 26 հոդվածի, Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի եւ մատուցվող ծառայություններ համար պետական տուրքի գծով նախատեսված են հետևյալ արտոնությունները.

3/. Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր տալու համար պետական տուրքի վճարումից ազատվում են 16 տարին լրանալուց հետո առաջին անգամ անձնագիր ստացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները եւ աղքատության ընտանեկան նպաստ ստացող ընտանիքի անդամ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները:

4/. Հայաստանի Հանրապետության ոստիկանության մարմինների կողմից ֆիզիկական անձանց հաշվառման հասցեների վերաբերյալ տեղեկանք տալու համար պետական տուրքի վճարումից ազատվում են՝

ա) միայնակ կենսաթոշակառուները.

բ) առաջին եւ երկրորդ խմբի հաշմանդամները.

գ) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառվող անձինք:

Համաձայն օրենքի 29 հոդվածի, այլ ծառայությունների կամ գործողությունների համար նախատեսվում են պետական տուրքի գծով հետևյալ արտոնությունները.

Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցով ֆիզիկական անձանց (օդային ուղեւորների) ելքի համար պետական տուրքի վճարումից ազատվում են՝

ա) մինչեւ 12 տարեկան երեխաները.

բ) տարանցիկ ուղեւորները.

գ) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունում հավատարմագրված միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչները.

դ) դիվանագիտական անձնագրերով Հայաստանի Հանրապետությունից դուրս եկող անձինք.

ե) Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների

դիվանագիտական ներկայացուցչությունների եւ հյուպատոսական հիմնարկների աշխատակիցներն ու նրանց ընտանիքների անդամները.

գ) Հայաստանի Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի նախագահի, Սահմանադրական դատարանի նախագահի, վարչապետի, կենտրոնական բանկի նախագահի կամ արտաքին գործերի նախարարի հրավերով Հայաստանի Հանրապետություն այցելող պաշտոնական անձինք եւ պատվիրակությունների անդամները.

է) Հայրենական մեծ պատերազմի մասնակիցները եւ նրանց հավասարեցված անձինք, Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամները եւ նրանց հավասարեցված անձինք, Հայրենական մեծ պատերազմի 1-ին խմբի հաշմանդամներին ուղեկցող անձը, Հայրենական մեծ պատերազմում զոհվածների ծնողները եւ այրիները, Խորհրդային Միության հերոսները եւ Փառքի երեք աստիճանների շքանշաններով պարգևատրված անձինք, Հայաստանի Հանրապետության ազգային հերոսները:

Հայաստանի Հանրապետության պետական ռեզիստրում պահվող տեղեկությունների տրամադրման համար պետական տուրքի վճարումից ազատվում են՝

օրենսդիր եւ գործադիր իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության կենսաթոշակային եւ զբաղվածության հիմնադրամը, մարդու իրավունքների պաշտպանը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Տրանսպորտային միջոցների տարեկան տեխնիկական զննության համար պետական տուրքի վճարումից ազատվում են սոցիալական ապահովության մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ ստացած հաշմանդամները՝ այդ ավտոմեքենաների մասով:

Պետական իրավասու մարմինները կալանք եւ (կամ) արգելանք դնելու միջոցով անշարժ գույքի նկատմամբ իրավունքի սահմանափակման պետական գրանցման համար ազատվում են պետական տուրքի վճարումից:

Ավարտված կադաստրային քարտեզագրում ունեցող տարածքներում անշարժ գույքի նկատմամբ իրավունքների առաջին պետական գրանցման գործընթացի ժամանակ պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման պայմանագրերի պետական գրանցման համար սեփականատերերը (օգտագործողները) ազատվում են պետական տուրքի վճարումից:

Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար պետական տուրքի վճարումից ազատվում են՝

պետական սեփականություն համարվող բնակարաններն անհատույց մասնավորեցրած քաղաքացիները՝ այդ բնակարանների նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման համար:

Օրենքով նախատեսված դեպքերում սեփականության իրավունքով անհատույց տրամադրված պետական սեփականություն համարվող հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցելիս սեփականատերերն ազատվում են պետական տուրքի վճարումից:

1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած՝ պետական բյուջետային հիմնարկների տնօրինության տակ գտնվող հանրակացարանային բնակելի տարածքները սեփականաշնոհած, ինչպես նաեւ իրենց զբաղեցրած համայնքային բնակարանային ֆոնդի բնակելի տարածքների նկատմամբ սահմանված կարգով վարձակալ ձանաչված անձինք ազատվում են այդ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար պետական տուրքի վճարումից:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 225 հոդվածով սահմանված դեպքերում բնակելի տարածության օգտագործման իրավունքը գրանցելու համար սեփականատերերը եւ օգտագործողներն ազատվում են պետական տուրքի վճարումից:

Հայաստանի Հանրապետության պետական ծրագրերի շրջանակներում հողերի միավորման (կոնսոլիդացիա) պայմանագրերով սեփականության իրավունքը գրանցելու համար սեփականատերերն ազատվում են պետական տուրքի վճարումից:

Համաձայն օրենքի 30 հոդվածի, նոտարական կարգով վավերացվող այն գործարքներով, որոնցով մի կողմը ազատվում է պետական տուրքի վճարումից, պետական տուրքը լրիվ չափով վճարում է մյուս կողմը:

Համաձայն Օրենքի 31 հոդվածի, առանձին վճարողների կամ վճարողների խմբերի համար պետական տուրքի գծով արտոնություններ կարող են սահմանել՝

ա) Հայաստանի Հանրապետության նախագահը՝ սույն օրենքի 14 հոդվածի 8-րդ կետի „գ,, ենթակետով նախատեսված դեպքում.

բ) Հայաստանի Հանրապետության կառավարությունը եւ տեղական ինքնակառավարման մարմինները՝ պետական տուրքերի բոլոր տեսակների գծով՝ վճարողի փոխարեն պետականտուրքը վճարելու միջոցով.

գ) դատարանները կամ դատավորները՝ սույն օրենքի 9 հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով կողմերի գույքային դրությունից.

դ) Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարը, դեսպանը կամ հյուպատոսական հիմնարկի ղեկավարը՝ սույն օրենքի 15 հոդվածում նշված առանձին գործերով՝ ելնելով վճարողի գույքային դրությունից.

ե) պետական տուրքի վճարման գծով այլ արտոնությունները սահմանվում են օրենքով:

#### **4.5 Հարց. - Ընդհանուր առմամբ, վճարված պետական տուրքը ե՞րբ է վերադարձվում:**

- Համաձայն օրենքի 38 հոդվածի, վճարված պետական տուրքը ենթակա է վերադարձման մասնակի կամ լրիվ՝

ա) եթե պետական տուրքը վճարվել է ավելի, քան պահանջվում է գործող օրենսդրությամբ.

բ) դատարանների կողմից դիմումները (բողոքները) վերադարձնելու կամ դրանց ընդունումը մերժելու, ինչպես նաեւ նոտարի կողմից նոտարական գործողությունների կատարումը մերժելու, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կողմից քաղաքացիական կացության ակտերի գրանցումը եւ ուրիշ գործողությունների ու ծառայությունների կատարումը մերժելու դեպքում.

գ) տվյալ գործով վարույթը կարճելու կամ հայցն առանց քննության թողնելու դեպքում, եթե գործը ենթակա չէ դատարանում քննության, կամ հայցվորը չի պահպանել տվյալ կատեգորիայի գործի համար վեճը լուծելու սահմանված նախնական արտադատարանական կարգը, կամ հայցը ներկայացրել է անգործունակ անձը.

դ) եթե հայցի ենթադրական գինը, որից դատարանը գանձել է պետական տուրքը, գործի քննության ընթացքում ճշտվել է, որի հետեւանքով պակասել է հայցի ընդհանուր գինը.

ե) գույքն արգելանքից ազատելու մասին հայցը բավարարելու դեպքում.

զ) պետական տուրք գանձող պետական մարմնի կողմից այս կամ այն գործողության կատարումը մերժելու դեպքում, եթե օրենքով այլ բան սահմանված չէ.

է) մինչեւ համապատասխան գործողությունների կատարման կամ ծառայությունների մատուցման ավարտման պահը, պետական տուրքը վճարողի կողմից համապատասխան ծառայություններ ստանալուց կամ գործողություններ կատարելուց հրաժարվելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ պետական տուրք գանձող մարմնի կողմից, սահմանված կարգով, արդեն սկսվել է տեւական բնույթ կրող համապատասխան գործողության կատարումը կամ ծառայության մատուցումը.

ը) անչափահաս երեխաներ չունեցող ամուսինների փոխադարձ համաձայնությամբ ամուսնալուծության ակտի գրանցման համար մուծված պետական տուրքը, եթե գրանցումը

չի կատարվել ամուսինների հաշտվելու կամ նրանցից որեւէ մեկի չներկայանալու պատճառով.

թ) քաղաքացիական կացության ակտերը կամ նոտարական կարգով վավերացված պայմանագրերը, ժառանգության իրավունքի մասին վկայականները եւ այլ փաստաթղթերը դատական կարգով անվավեր ճանաչվելու դեպքում.

ժ) արդյունաբերական սեփականության օբյեկտների գրանցման հայտերով փորձաքննության կայացրած որոշումների դեմ գանգատարկողի օգտին գանգատարկման խորհրդի կամ դատարանի որոշում ընդունելու դեպքում տվյալ մարմիններին գանգատ ներկայացնելու համար վճարված պետական տուրքը, եթե այդ մարմինների կողմից փորձաքննության որոշումը չեղյալ կամ անվավեր է ճանաչվե.

ժա) Հայաստանի Հանրապետությունից մեկնելու փաստաթղթեր ստանալու համար քաղաքացիների վճարած պետական տուրքերը՝ մինչեւ մեկնելու թույլտվություն ստանալը արտասահման մեկնելուց հրաժարվելու դեպքում:

Սույն օրենքի 18 հոդվածով նախատեսված եւ վերադարձման ենթակա պետական տուրքի գումարները վճարողի կողմից, պետական տուրք գանձող մարմնի սահմանած կարգով, կարող են օգտագործվել նույն մարմնի կողմից այլ գործողություն կատարելու կամ ծառայություն մատուցելու համար, եթե վերադարձման ենթակա պետական տուրքի գումարները վճարված են այն հաշվին, որին վճարվում են տվյալ գործողության կատարման կամ ծառայության մատուցման համար սահմանված պետական տուրքի գումարները:

## **5. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ**

Կարևոր է իմանալ, որ եթե պետական տուրքը գանձվում է պետական մարմինների կողմից մատուցվող ծառայությունների և կատարվող գործողությունների համար և վճարվում է պետական բյուջե, ապա տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների և գործողությունների համար գանձվում են տեղական տուրքեր և վճարներ, որոնք վճարվում են տեղական բյուջեներ:

### **5.1 Հարց. – Ո՞րն է տեղական տուրքերի և վճարների հասկացությունը, ինչով է այն կարգավորվում:**

Նախ ասենք, որ տեղական տուրքերին և վճարներին վերաբերող հարաբերությունները կարգավորվում են «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 26.12.1997թ.:

Օրենքի 2 և 3 հոդվածները նվիրված են տեղական տուրքերի և վճարների հասկացություններին, ըստ որոնց.

«Տեղական տուրքը տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացման դիմաց սույն օրենքով սահմանված կարգով եւ չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է»:

«Տեղական վճարը տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով սահմանված լիազորությունների իրականացմամբ պայմանավորված գործողությունների համար սույն օրենքով սահմանված կարգով եւ չափով համայնքի բյուջե գանձվող պարտադիր գանձույթ է»:

### **5.2 Հարց. – Ինչպիսի՞ ծառայությունների, գործողությունների համար կատող են սահմանվել տեղական տուրքեր և վճարներ, արդյո՞ք դա կարգավորված է օրենքով:**

- Օրենքի 7 հոդվածով սահմանված են այն թույլտվությունների տեսակները, որոնց տրման համար կարող է սահմանվել տեղական տուրք, այն է.



ա) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների (այդ թվում՝ ոչ հիմնական) շինարարության, վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, բարեկարգման աշխատանքները (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) իրականացնելու նպատակով շինարարության թույլտվության, իսկ ոչ հիմնական շինությունների մասով՝ տեղադրման թույլտվության համար.

բ) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար.

գ) համայնքի տարածքում ոգելից խմիչքների եւ (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների եւ (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար.

դ) համայնքի տարածքում բացօթյա առեւտուր կազմակերպելու թույլտվության համար.

ե) համայնքի տարածքում՝ առեւտրի, հանրային սննդի, գվարձանքի, շահումով խաղերի եւ վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին) եւ խաղատներին ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար.

զ) համայնքային կանոններին համապատասխան Երեւան քաղաքի եւ քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար.

է) համայնքային կանոններին (Երեւանում՝ համաքաղաքային կանոններին) համապատասխան համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար.

ը) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ եւ կրկնօրինակներ տրամադրելու համար.

թ) համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար.

ժ) "Թանկարժեք մետաղների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 8 հոդվածի առաջին մասին համապատասխան՝ համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար.

Ճ) համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առեւտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար:

Օրենքի 8-րդ հոդվածը վերաբերում է տեղական վճարների տեսակներին, այն է.

ա) համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններնշակելու եւ հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

բ) տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության եւ օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու եւ վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական եւ այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

գ) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ եւ աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար:

**Հարց. – 5.3 ի՞նչ չափանիշներով և ո՞վ է սահմանում տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:**

- Օրենքի 9 հոդվածով սահմանված է.

«1. Տեղական տուրքերի դրույքաչափերը, սույն օրենքով նախատեսված դրույքաչափերի սահմաններում, սահմանում է համայնքի ավագանին՝ համայնքի ղեկավարի ներկայացմամբ՝ համայնքի տարեկան բյուջեն հաստատելուց առաջ: Թաղային համայնքներում տեղական տուրքի դրույքաչափերի սահմանման վերաբերյալ առաջարկությունը համայնքի ղեկավարը համայնքի ավագանուն ներկայացնում է՝ խորհրդակցելով Երեւանի քաղաքապետի հետ:

2. Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանվում են տեղական տուրքերի միասնական դրույքաչափեր:

3. Ընթացիկ տարվա համար տեղական տուրքի դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել»:

Օրենքի 10 հոդվածով նախատեսվում է տեղական տուրքերի թույլատրելի սահմանը, դրանք առանձնացնելով ըստ թույլտվությունների տեսակների, այն է՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ հիմնական օբյեկտների համար՝

ա) մինչեւ 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաեւ մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական եւ արտադրական նշանակության օբյեկտների համար՝ մինչեւ 15000 դրամ.

բ) սույն կետի "ա" ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա) 201-ից մինչեւ 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչեւ 30000 դրամ,

բբ) 501-ից մինչեւ 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչեւ 50000 դրամ,

բգ) 1001 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչեւ 70000 դրամ. ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ) մինչեւ 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչեւ 3000 դրամ.

դ) 20 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչեւ 5000 դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետեւանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մինչեւ 3000 դրամ.

բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաեւ կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետեւանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի "ա" ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաեւ նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում

է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված

նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչեւ 5000 դրամ:

4. Համայնքի տարածքում ոգելից խմիչքների եւ (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների եւ (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

ա) հիմնական շինությունների ներսում վաճառքի (իրացման) կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 0-ից 12,500 դրամ.

բ) ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի (իրացման) կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 0-ից 17,500 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առետուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.

բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առետուրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000 - 200 000 դրամ:

5.1. Սույն օրենքի 7 հոդվածի "ժ" ենթակետով նախատեսված թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50.000 դրամ:

6. Համայնքի տարածքում՝ առետուրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի եւ վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա) առետուրի օբյեկտների համար՝ 25 000 - 50 000 դրամ.

բ) հանրային սննդի եւ զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 - 100 000 դրամ.

գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 - 500 000 դրամ.

դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 - 1 000 000 դրամ.

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 - 500 000 դրամ.

զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 - 150 000 դրամ:

7. Համաքաղաքային կանոններին համապատասխան Երեւան քաղաքի եւ քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 0-5 000 դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչեւ 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000-2000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 եւ ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500-3500 դրամ.

գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500-1500 դրամ.

դ) մինչեւ 2006 թվականի հոկտեմբերի 1-ը՝ ծխախոտի արտաքին գովազդի համար՝ 3000-5000 դրամ.

ե) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ եւ կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0-10 000 դրամ:

10. Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0-10 000 դրամ:

11. Սույն հոդվածով (բացառությամբ 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերի) սահմանված դրույքաչափերի վերին սահմանները քաղաքային համայնքներում կարող են լինել 1.5, իսկ թաղային համայնքներում՝ 1.75 անգամ ավելի:

11.1. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ, լեռնային եւ բարձրլեռնային համայնքներում հաշվարկվում են 0.3, գյուղական այլ համայնքներում՝ 0.5, քաղաքային այլ համայնքներում՝ 1.0, իսկ թաղային համայնքներում՝ 5.0 գործակիցների կիրառմամբ:

1. Տեղական վճարի դրույքաչափը համայնքի ղեկավարի ներկայացմամբ սահմանում է համայնքի ավագանին՝ տվյալ գործողությունն իրականացնելու համար անհրաժեշտ նվազագույն ծախսերի չափով:

2. Համայնքի տարածքում բոլոր վճարողների համար սահմանվում են տեղական վճարների միասնական դրույքաչափեր:

3. Ընթացիկ տարվա համար տեղական վճարի դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:

#### **Հարց. - 5.4 Տեղական տուրքի կամ վճարի արտոնություններ նախատեսվում են թե՞ ոչ:**

- Ի տարբերություն «Պետական տուրքի մասին» օրենքի, որով սահմանվում են նաև պետական տուրքի գծով արտոնություններն ըստ սուբյեկտների և օբյեկտների, «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքով տեղական տուրքերից և վճարներից ազատումը կամ դրանց չափերի փոփոխումը թողնված է համայնքի ավագանու իրավասությանը: Օրենքի 13 հոդվածով սահմանված է. «Տեղական տուրքի եւ (կամ) տեղական վճարի արտոնություններ համայնքի ղեկավարի ներկայացմամբ կարող է սահմանել համայնքի ավագանին՝ տեղական տուրք կամ վճար վճարողի փոխարեն համայնքի բյուջեից վճարելով տեղական տուրքը կամ տեղական վճարը»:

#### **Հարց. - 5.5 Տեղական տուրքեր կամ վճարներ սահմանելու վերաբերյալ ավագանու որոշումներն արդյոք ենթակա են գանգատարկման:**

- Օրենքի 20-րդ հոդվածով ուղղակի է ասված, որ տեղական տուրքեր և վճարներ սահմանելու վերաբերյալ ավագանու որոշումները կարող են գանգատարկվել դատարան:

Նման գանգատ դատարան կարող է ներկայացնել յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե կգտնի, որ ավագանու նման որոշմամբ խախտվել կամ կարող են խախտվել իր իրավունքները: Նման գանգատները կարող են տրվել Վարչական դատարան:

#### **5.6 Հարց. - Համայնքի բնակիչներն ի՞նչ կարգով են տեղեկացվում տեղական տուրքեր և վճարումներ սահմանելու մասին ավագանու որոշումներին:**

- Օրենքի 20.1 հոդվածը վերաբերում է տեղական տուրքերի և վճարների վերաբերյալ համայնքի անդամներին իրազեկմանը: Հոդվածում ամրագրված է.

«1. Համայնքի ղեկավարն ապահովում է տեղական տուրքերի եւ վճարների դրույքաչափերի, վճարման կարգի եւ ժամկետների, ամսվա ընթացքում տեղական տուրքերի եւ վճարների յուրաքանչյուր տեսակի մասով փաստացի ստացված եկամուտների, ինչպես նաեւ համայնքի ավագանու կողմից սահմանված արտոնություններ ստացած անձանց եւ համապատասխան գումարների վերաբերյալ իրազեկումը:

2. Իրազեկման այլ միջոցների թվում համայնքի ղեկավարն ապահովում է իր գտնվելու վարչական շենքում, մուտքից ներս գտնվող առավել տեսանելի վայրում գտնվող ցուցատախտակների վրա իր կողմից հաստատված՝ սույն հոդվածի 1-ին կետով սահմանված տեղեկությունները պարունակող տեղեկանքների հրապարակումը:

3. Համայնքի ղեկավարը տեղական տուրքերի եւ վճարների դրույքաչափերի, դրանց վճարման կարգի եւ ժամկետների վերաբերյալ տեղեկանքը հրապարակում է ոչ ուշ, քան համապատասխան իրավական ակտերն ուժի մեջ մտնելուց տասն աշխատանքային օրվա ընթացքում:

4. Համայնքի ղեկավարն ամսվա ընթացքում ստացված տեղական տուրքերի եւ վճարների գումարների, ինչպես նաեւ համայնքի ավագանու կողմից սահմանված արտոնություններ ստացած անձանց եւ համապատասխան գումարների վերաբերյալ տեղեկանքը հրապարակում է ոչ ուշ, քան տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-ը ներառյալ»:

**5.7 Հարց. - Պետական մարմինների կողմից մատուցվող ծառայությունների, կատարվող գործողությունների համար պետական տուրքի գանձմանը զուգահեռ նաև ծառայության վճար գանձելը որքանով է արդարացված:**

- Իրոք անտրամաբանական է, երբ այս կամ այն փաստաթուղթը նոտարական կարգով հաստատման համար բացի պետական տուրքից, նոտարին պետք է վճարել նաև ծառայության վճար: Տրամաբանական է, երբ նման վճարումը նախատեսվում է հաստատվող փաստաթուղթը նոտարի կողմից կազմելու, խորհրդատվություն տրամադրելու, լրացուցիչ փաստաթղթեր ձեռք բերելու և նման բնույթի այլ ծառայությունների համար:

Կադաստրի և պետական ռեգիստրի մարմինների կողմից տեղեկություններ տրամադրելու համար, եթե նախատեսվում է պետական տուրքի վճարում, անտրամաբանական է դառնում նաև ծառայության դիմաց վճար նախատեսելը:

**5.8 Հարց. - Նախատեսված պետական տուրքը չվճարելու դեպքում դատարան ներկայացված հայցադիմումը վերադարձնելն արդյո՞ք չի սահմանափակում մարդու դատական պաշտպանության իրավունքի իրականացման հնարավորությունը:**

- Իրոք, քիչ չեն դեպքերը, երբ անձինք չեն կարողանում օգագործել դատական պաշտպանության իրենց իրավունքը՝ սահմանված պետական տուրքը վճարելու հնարավորություն չունենալու պատճառով: Օրինակ, պարտապանը չի վերադարձնում երկու միլոն դրամին հասնող պարտքը: Դատարան դիմելու համար պահանջատերը պետք է վճարի 40.000 դրամ, որը չունի, ընդամենը կարողանում է ապահովել ընտանիքի նվազագույն պահանջները:

Պահանջատերը կարող է միջնորդել դատարանին՝ տուրքի վճարումը հետաձգելու մասին, սակայն պետք է ներկայացնի իր նյութապես անապահով լինելը հաստատող փաստաթուղթ:

Եթե պահանջատերը նպաստառու չէ, չի կարող ներկայացնել այնպիսի փաստաթուղթ, որն անառարկելի կլինի դատարանի համար, միջնորդության բավարման հարցը մնում է դատավորի սուբյեկտիվ մոտեցմանը:

Այս առումով վիճարկելի է պետական տուրքը վճարած չլինելու հիմքերով հայցադիմումը վերադարձնելու վերաբերյալ դատավարական նորմը:

**Հ Ա Ր Կ Ե Ր**  
**Ա. Գույքահարկ**

**Ա.1 Հարց. – Ո՞րն է գույքահարկի հասկացությունը, ինչպիսի իրավական ակտերով է կարգավորվում հարկվող օբյեկտի որոշումը, գույքահարկի հաշվարկումը և գանձումը:**

- Գույքահարկի հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Գույքահարկի մասին» 26.12.2002թ. ընդունված ՀՀ օրենքով:

Օրենքի 2 հոդվածով տրված է գույքահարկի հասկացությունը, ըստ որի՝ «Գույքահարկը սեփականության իրավունքով սույն օրենքի 3-րդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով եւ չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Անկախ սույն հոդվածի առաջին պարբերությունում նշված սեփականության իրավունքի առկայությունից՝ գույքահարկ հաշվարկվում եւ վճարվում է նաեւ սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում նշված հարկվող օբյեկտ համարվող գույքի համար»:

Քանի որ հոդվածը հղում է կատարում օրենքի 3 և 4 հոդվածներին, ներկայացվում են նաև այդ հոդվածներն ամբողջապես.

### Հոդ. 3

«1. Գույքահարկ վճարող են համարվում Հայաստանի Հանրապետությունում եւ օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները եւ դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները, Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաեւ քաղաքացիություն չունեցող անձինք, որոնց Հայաստանի Հանրապետության տարածքում պատկանում է սույն օրենքի 4 հոդվածով սահմանված հարկվող օբյեկտ համարվող գույքը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների եւ հիմնարկների:

2. Եթե հարկվող օբյեկտն ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկ վճարողների, ապա գույքահարկի գծով սույն օրենքով սահմանված պարտավորությունների համար նրանք կրում են համապարտ պատասխանատվություն:

Եթե հարկվող օբյեկտն ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանում է մեկից ավելի հարկ վճարողների, ապա գույքահարկի գծով սույն օրենքով սահմանված պարտավորությունների համար նրանք կրում են պատասխանատվություն՝ յուրաքանչյուրն իր բաժնի չափով»:

Օրենքի 4 հոդվածը վերաբերում է գույքահարկով հարկվող օբյեկտներին և հենց այդպես էլ վերնագրված է՝ գույքահարկով հարկվող օբյեկտը, ըստ որի.

«Սույն օրենքի իմաստով գույքահարկով հարկվող օբյեկտ են համարվում.

1. Շենքերը եւ շինությունները (այսուհետ՝ շինություններ)՝

1) բնակելի նշանակության շինությունները, այդ թվում՝

ա) անհատական բնակելի տունը՝ հողամասի վրա կառուցված, իր տնտեսական շինություններով կառույցը,

բ) բնակարանը՝ բազմաբնակարան բնակելի շենքում ֆիզիկական անձանց բնակության համար նախատեսված, իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմնում առանձին ծածկագրով գրանցված եւ համարակալված տարածքը,

գ) այգետնակը (ամառանոցը)՝ այգեգործական զանգվածում հողամասի վրա կառուցված ամառանոցային շինությունը.

2) բազմաբնակարան բնակելի շենքը՝ մեկից ավելի բնակարաններ, ոչ բնակելի եւ ընդհանուր օգտագործման տարածքներ ունեցող շինությունը.

3) բազմաբնակարան շենքի ոչ բնակելի տարածքը՝ բազմաբնակարան շենքում բնակարան, հասարակական, արտադրական նշանակության շինություն չհամարվող, իրավունքների պետական գրանցումն իրականացնող լիազորված մարմնում առանձին ծածկագրով գրանցված եւ համարակալված տարածքը.

4) ավտոտնակը՝ տրանսպորտային միջոցների կայանման համար հողամասի վրա կառուցված առանձին շինությունը.

5) հասարակական նշանակության շինությունը՝ բնակչության սոցիալական սպասարկման, ինչպես նաև վարչական ու հասարակական կազմակերպությունների տեղակայման համար նախատեսված շինությունը.

6) արտադրական նշանակության շինությունը՝ արդյունաբերական եւ գյուղատնտեսական արտադրությունների տեղակայման եւ նրանց մեջ տեխնոլոգիական սարքավորումների շահագործման համար անհրաժեշտ պայմաններն ապահովող շինությունը.

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով բնութագրվող անավարտ (կիսակառույց) շինությունները.

8) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն նոր կառուցված, ձեռք բերված եւ անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից հաշվառված ու գնահատված՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված այն շինությունները, որոնք դեռեւս չեն ստացել իրավունքների պետական գրանցում, ինչպես նաև սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա ինքնակամ կառուցված շենքերը եւ շինությունները, այդ թվում՝ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցները:

2. Փոխադրամիջոցները, այդ թվում՝

- 1) ավտոմոբիլային տրանսպորտի միջոցը.
- 2) ջրային փոխադրամիջոցը.
- 3) մոտոցիկլետը»:

Այս հոդվածում ուշադրության է արժանի հոդվածի 1-ին մասի 8-րդ կետն այն առումով, որ հարկման օբյեկտ են համարվում ոչ միայն այն շենքերն ու շինությունները, որոնց նկատմամբ առկա է իրավունքների պետական գրանցումը, այլև հաշվառված և գնահատված կիսակառույցները, ինչպես նաև հողի սեփականատիրոջ կամ հողօգտագործողի կողմից այդ հողամասի վրա ինքնակամ կառուցած շենքերը և շինությունները, բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցները, այսինքն այն կառույցները, որոնց նկատմամբ դրանք կառուցողների կամ օգտագործողների սեփականության իրավունքը չի ձանաչված:

## **Ա.2 Հարց. – Ի՞նչն է հիմք ընդունվում կոնկրետ գույքի համար գույքահարկը հաշվարկելիս:**

- Հարցի պատասխանը սպառիչ տրված է օրենքի 5 հոդվածով, ըստ որի.

« Գույքահարկով հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտի արժեքային կամ ֆիզիկական մեծությունը կամ այն բնութագրիչը, որի հիման վրա սույն օրենքով սահմանված դրույքաչափերով եւ կարգով հաշվարկվում է գույքահարկի գումարը: Ընդ որում՝

1) շինությունների հարկման բազա է համարվում սույն օրենքի բաղկացուցիչ մասը կազմող հավելվածով սահմանված կարգով գնահատված կադաստրային արժեքը.

2) շինությունների հարկման բազան որոշելիս շինության արժեքի չափման միավորը դրամն է.

3) շինությունների գնահատումը (վերագնահատումը) կատարվում է երեք տարին մեկ անգամ անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից՝ գնահատման (վերագնահատման) տարվա հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված տվյալներով: Գնահատված (վերագնահատված) արժեքը հիմք է ընդունվում տվյալ տարվան հաջորդող երեք տարիների համար հարկման բազան որոշելու նպատակով, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ կետում նշված դեպքերի.

4) նոր առաջացած, ինչպես նաև գնահատման (վերագնահատման) տարվա հուլիսի 1-ից հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սեփականության իրավունքով ձեռք բերված շինությունների հարկման բազան որոշվում է սույն հոդվածին համապատասխան, որը հարկման առումով հիմք է ընդունվում մինչև

շինությունների համար սույն հոդվածի 3-րդ կետով սահմանված հաջորդ գնահատումը(վերագնահատումը):

Սույն օրենքի իմաստով նոր առաջացած են համարվում գնահատման (վերագնահատման) տարվա հուլիսի 1-ի դրությամբ անշարժ գույքի կադաստր վարող մարմնում գրանցված տեղեկությունների համեմատությամբ մինչև շինությունների հաջորդ գնահատումը (վերագնահատումը) ընկած ժամանակաշրջանում շինությունների ավարտվածության աստիճանի, հարկայնության, գործառնական (բնակելի, հասարակական, արտադրական) նշանակության փոփոխությունները, ինչպես նաև սույն օրենքի 4 հոդվածի 1-ին մասի 8-րդ կետում նշված շինությունները:

Նոր առաջացած շինությունների մասով ընթացիկ հաշվառման վերաբերյալ տեղեկությունները Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմիններն անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմին են ներկայացնում սույն օրենքի 14 հոդվածով սահմանված կարգով:

5) փոխադրամիջոցների հարկման բազա է համարվում հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորությունը (ծիաուժ կամ կիլովատ): Փոխադրամիջոցի վրա մեկից ավելի քաշող շարժիչների առկայության դեպքում գույքահարկով հարկման բազա է համարվում բոլոր քաշող շարժիչների գումարային հզորությունը»:

### Ա.3 Հարց .- Օրենքը գույքահարկի ինչպիսի՞ դրույքաչափեր է նախատեսել:

- Գույքահարկի դրույքաչափերը նախատեսված են օրենքի 6 և 7 հոդվածներով, ըստ որոնց՝

#### 1/ ՀՈՂՎԱԾ 6. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Շինությունների համար գույքահարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան դրույքաչափերով՝

1) սույն օրենքի 4 հոդվածի 1-ին մասի 5-րդ, 6-րդ եւ 8-րդ կետերում նշված հասարակական եւ արտադրական նշանակության շինությունների համար՝ հարկման բազայի 0.3 տոկոսը:

2) սույն օրենքի հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ եւ 8-րդ կետերում նշված հարկվող օբյեկտ համարվող շինությունների համար՝

հարկման բազան	հարկի դրույքաչափը
մինչև 3 մլն դրամը ներառյալ	հարկման բազայի 0 տոկոսը
3 մլն դրամից մինչև 10 մլն   100 դրամ՝ գումարած հարկման դրամը ներառյալ	բազայի 3 մլն դրամը գերազանցող գումարի 0.1 տոկոսը
10 մլն դրամից մինչև 20 մլն   7,100 դրամ՝ գումարած հարկման դրամը ներառյալ	բազայի 10 մլն դրամը գերազանցող մասի 0.2 տոկոսը
20 մլն դրամից մինչև 30 մլն   27,100 դրամ՝ գումարած հարկման դրամը ներառյալ	բազայի 20 մլն դրամը գերազանցող մասի 0.4 տոկոսը
30 մլն դրամից մինչև 40 մլն   67,100 դրամ՝ գումարած հարկման դրամը ներառյալ	բազայի 30 մլն դրամը գերազանցող մասի 0.6 տոկոսը
40 մլն դրամից ավելի	127,100 դրամ՝ գումարած հարկման   բազայի 40 մլն դրամը գերազանցող



3) սույն օրենքի 4 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված հարկվող օբյեկտ համարվող շինությունների համար՝ հարկման բազայի 0,2 տոկոսը:

## **2/ ՀՈՂՎԱԾ 7. ՓՈՆԱԴՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

1. Ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է հետևյալ տարեկան դրույքաչափերով՝

1) մինչեւ 10 նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝

- 1-ից 120 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 200 դրամ,

- 121-ից 250 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 300 դրամ, ինչպես նաեւ 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիաուժի համար լրացուցիչ՝ 1000 դրամ,

- 251 եւ ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 500 դրամ, ինչպես նաեւ 150 ձիաուժը գերազանցող յուրաքանչյուր մեկ ձիաուժի համար լրացուցիչ՝ 1000 դրամ.

2) 10 եւ ավելի նստատեղ ունեցող մարդատար ավտոմեքենաների եւ բեռնատար ավտոմեքենաների համար, եթե հարկման բազան՝

- 1-ից 200 ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 100 դրամ,

- 201 եւ ավելի ձիաուժ է, ապա յուրաքանչյուր ձիաուժի դիմաց՝ 200 դրամ:

2. Մոտոցիկլետների համար գույքահարկի տարեկան գումարը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի դիմաց 40 դրամ դրույքաչափով:

3. Ջրային փոխադրամիջոցների համար գույքահարկի տարեկան դրույքաչափը հաշվարկվում է հարկման բազայի յուրաքանչյուր ձիաուժի դիմաց 150 դրամ դրույքաչափով:

4. Մինչեւ երեք տարվա վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար գույքահարկը հաշվարկվում է 100 տոկոսով: Երեք տարուց ավելի վաղեմության ավտոմոբիլային տրանսպորտային միջոցների համար գույքահարկի գումարը երրորդ տարվան հաջորդող յուրաքանչյուր տարվա համար պակասեցվում է հարկի գումարի 10 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան հարկի գումարի 50 տոկոսը: Ընդ որում, վաղեմության ժամկետը որոշելու համար հիմք է ընդունվում ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի թողարկման տարեթիվը:

5. Բեռնատար ավտոմոբիլային տրանսպորտի միջոցների վաղեմության ժամկետի 20-րդ տարին լրանալուց հետո տվյալ ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի համար գույքահարկ չի հաշվարկվում եւ չի վճարվում:

6. Սույն հոդվածում նշված փոխադրամիջոցների հարկման բազան կիրվատերով արտահայտված լինելու դեպքում գույքահարկի տարեկան գումարը որոշվում է՝ համապատասխան դրույքաչափի նկատմամբ կիրառելով 1.36 գործակից:

### **Ա.4 Հարց- Որո՞նք են գույքահարկի վճարման պարտավորությունների առաջացման և դադարման հիմքերը:**

- Գույքահարկի վճարման պարտավորությունների առաջացման և դադարման հիմքերը նախատեսված են օրենքի 8 հոդվածով, ըստ որի.

«1. Գույքահարկի գծով պարտավորությունն առաջանում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Գույքահարկի գծով պարտավորությունը դադարում է գույքահարկով հարկվող օբյեկտի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության իրավունքը դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

2. Անկախ սույն հոդվածի 1-ին մասի դրույթներից՝

1) սույն օրենքի 5 հոդվածի 4-րդ կետում նշված՝ սեփականության իրավունքով պետական գրանցում չստացած հարկվող օբյեկտների համար գույքահարկի գծով հարկային պարտավորությունն առաջանում է անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից դրանց հաշվառման եւ գնահատման վերաբերյալ տեղեկությունները գույքահարկ վճարողներին հաշվառող մարմին (այսուհետ՝ հաշվառող մարմին) տրամադրելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Սեփականության իրավունքով չգրանցվելու դեպքում նշված հարկվող օբյեկտների համար գույքահարկի գծով պարտավորությունը դադարում է անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնում այդ հարկվող օբյեկտները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառումից հանելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

2) ֆիզիկական անձանց պատկանող հարկվող օբյեկտը կամ դրա մի մասն օտարելու դեպքում՝

- նոր սեփականատիրոջն են անցնում օտարման օրվա դրությամբ տվյալ հարկվող օբյեկտի համար չմարված հարկային պարտավորությունները,

- օտարման օրվա դրությամբ տվյալ հարկվող օբյեկտի գույքահարկի գծով այդ օրվան հաջորդող ժամանակաշրջանի համար վճարումների առկայության դեպքում նոր սեփականատիրոջ համար տվյալ հարկվող օբյեկտի գծով գույքահարկի պարտավորությունն առաջանում է այդ ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 1-ից:

3) հարկվող օբյեկտի սեփականատեր համարվող ֆիզիկական անձի մահվան դեպքում նոր սեփականատիրոջն են անցնում ֆիզիկական անձի մահվան օրվանից մինչեւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սեփականության (ժառանգության) ձեւակերպման ամիսը ներառյալ տվյալ հարկվող օբյեկտի համար գույքահարկի գծով հաշվարկված պարտավորությունները:

4) եթե հարկվող օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է դատավճռի, վճռի կամ իրավական ակտի հիման վրա, ապա գույքահարկ վճարողը գույքահարկը հաշվարկում եւ վճարում է այն օրվանից, երբ գույքը հանձնվել է նրա տիրապետմանը:

5) ֆիզիկական անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցը մինչեւ 2008 թվականի դեկտեմբերի 31-ը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով խոտանելու կամ հին նմուշի պետական համարանիշերը նորերով չփոխանակված եւ չչահագործվող փոխադրամիջոցները դրանք հաշվառող (գրանցող) լիազոր մարմնում հաշվառումից ժամանակավորապես հանելու դեպքում գույքահարկի պարտավորությունը դադարում է այդ փոխադրամիջոցի վերջին տարեկան տեխնիկական գննության տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ից: Ֆիզիկական անձի դիմումի համաձայն՝ փոխադրամիջոցը լիազոր մարմնում վերահաշվառելու դեպքում այդ փոխադրամիջոցի համար դադարած գույքահարկի պարտավորությունները հակադարձվում են եւ ենթակա են կատարման սույն օրենքով սահմանված կարգով եւ չափով: Սույն կետով սահմանված արտոնությունների տրամադրման հետեւանքով համայնքների եկամուտների նվազեցումը պետության կողմից փոխհատուցման ենթակա չէ:

3. Գույքահարկ վճարողները գույքահարկը հաշվարկում են ինքնուրույն՝ ելնելով սույն օրենքով սահմանված հարկման բազայից եւ համապատասխան դրույքաչափերից, հաշվի առնելով գործող օրենսդրությամբ վերապահված արտոնությունները: Գույքահարկ վճարողը պարտավոր է հաշվառող մարմին ներկայացնել հարկային արտոնությունների իր իրավունքը հաստատող փաստաթղթերը:

Գույքահարկի հաշվարկման (հարկային պարտավորությունների առաջացման) համար հիմք են համարվում գույքահարկով հարկվող օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքը հիմնավորող փաստաթղթերը, իսկ սույն օրենքի 5 հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքերում՝ նաեւ դրանց հաշվառման վերաբերյալ տեղեկությունները:

4. Հարկվող օբյեկտ համարվող գույքի նկատմամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կիրառված որեւէ արգելանքի առկայությունը հիմք չի համարվում գույքահարկը չհաշվարկելու համար:

## Ա.5 Հարց . – Ի՞նչ կարգով է հաշվարկվում ֆիզիկական անձանց գույքահարկը:

- Տվյալ հարցը կարգավորված է Օրենքի 10 հոդվածով, ըստ որի.

«1. Ֆիզիկական անձանց համար գույքահարկի հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային տարին:

2. Գույքահարկ վճարող ֆիզիկական անձինք գույքահարկը հաշվարկում են ինքնուրույն եւ տարեկան հաշվարկները կարող են մինչեւ հաշվետու տարվա հոկտեմբերի 1-ը ներառյալ ներկայացնել՝

1) հարկվող օբյեկտ համարվող շինության համար՝ շինության գտնվելու վայրի հաշվառող մարմին.

2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար՝ հարկ վճարողի հաշվառման վայրի հաշվառող մարմին: Հաշվառման վայրի բացակայության դեպքում հաշվարկները ներկայացվում են հարկ վճարողի հիմնական բնակության վայրի հաշվառող մարմին: Եթե հաշվառման կամ հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա հաշվարկները ներկայացվում են փոխադրամիջոցի գրանցման վայրի հաշվառող մարմին:

3. Հիմք ընդունելով անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից շինությունների հաշվառման եւ գնահատման, ինչպես նաեւ փոխադրամիջոցների գծով հաշվառում (գրանցում) վարող համապատասխան լիազոր մարմինների կողմից փոխադրամիջոցների վերաբերյալ ներկայացված տեղեկությունները՝ հաշվառող մարմինները հաշվարկում են ֆիզիկական անձանց շինությունների հետագա երեք տարիների եւ փոխադրամիջոցների ընթացիկ տարվա գույքահարկի գումարները:

2003 թվականի հունվարի 1-ից սկսած՝ տեղական ինքնակառավարման մարմինները Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով գույքահարկի հաշվարկման հայտը հարկային մարմնի հետ համաձայնեցնելով, հիմք ընդունելով անշարժ գույքի կադաստր վարող մարմնի կողմից շինությունների հաշվառման եւ գնահատման, ինչպես նաեւ փոխադրամիջոցների գծով հաշվառում (գրանցում) վարող համապատասխան լիազոր մարմինների կողմից փոխադրամիջոցների վերաբերյալ ներկայացրած տեղեկությունները՝ կարող են հաշվարկել ֆիզիկական անձանց շինությունների եւ փոխադրամիջոցների գույքահարկը:

Տեղական ինքնակառավարման համապատասխան մարմինները, սույն օրենքի 14 հոդվածով սահմանված կարգով ներկայացված տեղեկությունների կամ հարկային մարմինների հետ համաձայնեցված կարգով իրենց կողմից կատարված հաշվարկների հիման վրա, մինչեւ գնահատման (վերագնահատման) տարվա դեկտեմբերի 1-ը գույքահարկ վճարող ֆիզիկական անձանց ներկայացնում են հաստատված ձեւով գույքահարկի վճարման ծանուցագրեր:

Ներկայացված ծանուցագրերում գույքահարկի հաշվարկի հետ չհամաձայնելու դեպքում ֆիզիկական անձինք գույքահարկի հաշվարկի ճշտման նպատակով կարող են դիմել հաշվառող եւ գույքահարկի հաշվարկման համար տեղեկություններ տրամադրող լիազոր մարմիններ:

4. Սահմանված ժամկետից ուշ ծանուցագիր ներկայացնելը կամ ծանուցագիր չներկայացնելը գույքահարկ վճարողին չի ազատում հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարելու պարտականությունից»:

Ընդհանուր սեփականության գույքահարկի հաշվարկման կարգը սահմանված է Օրենքի 11 հոդվածով, համաձայն որի.

«Գույքահարկ վճարողներին ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքահարկով հարկվող օբյեկտի համար գույքահարկը հաշվարկվում է հարկվող օբյեկտի ամբողջ արժեքից (կամ շարժիչի հզորությունից): Սույն օրենքի 9 եւ 10 հոդվածներով սահմանված կարգով համապատասխան հաշվարկներն ու մյուս համասեփականատերերի վերաբերյալ հաշվարկի ձեւում պահանջվող տվյալները ներկայացվում են՝

1) ընդհանուր բաժնային սեփականության դեպքում՝ յուրաքանչյուր համասեփականատիրոջ (գույքահարկ վճարողի) կողմից՝ իր բաժնի մասով կամ նրանցից մեկի կողմից.

2) ընդհանուր համատեղ սեփականության դեպքում՝ մեկ համասեփականատիրոջ (գույքահարկ վճարողի) կողմից.

3) եթե ընդհանուր համատեղ սեփականության դեպքում գույքահարկ վճարող համասեփականատերերից մեկը կազմակերպություն է, ապա անկախ սույն հոդվածի 2-րդ կետից՝ կազմակերպության (կազմակերպությունների) կողմից»:

## Ա.6 Հարց.- Ի՞նչ կարգով և ի՞նչ ժամկետներում է վճարվում գույքահարկը:

- Օրենքի 13 հոդվածը վերաբերում է գույքահարկի վճարման կարգին և ժամկետներին, համաձայն որի.

«1. Կազմակերպությունները գույքահարկի հաշվարկված գումարները սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում յուրաքանչյուր եռամսյակ՝ մինչև տվյալ եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 1-ը ներառյալ:

2. Ֆիզիկական անձինք գույքահարկի տարեկան գումարը սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով համապատասխան բյուջե են վճարում մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 1-ը ներառյալ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքի:

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եւ համամասնությամբ գույքահարկի գումարը վճարվում է՝

1) համայնքի վարչական տարածքում գտնվող շինությունների համար՝ հարկվող օբյեկտի գտնվելու վայրի համայնքի բյուջե, իսկ համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող շինությունների համար՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցի համար՝ գույքահարկ վճարող կազմակերպության գտնվելու (հաշվառման) վայրի համայնքի բյուջե: Փոխադրամիջոցի սեփականատեր համարվող ֆիզիկական անձը գույքահարկը վճարում է իր հաշվառման (գրանցման) վայրի համայնքի բյուջե: Նշված հաշվառման(գրանցման) բացակայության դեպքում գույքահարկի գումարը վճարում է իր հիմնական բնակության վայրի համայնքի բյուջե: Եթե ֆիզիկական անձի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս է, ապա գույքահարկի գումարը վճարվում է փոխադրամիջոցի հիմնական գտնվելու վայրի համայնքի բյուջե:

4. Ֆիզիկական անձինք տարեկան տեխնիկական գնության ենթակա փոխադրամիջոցների համար գույքահարկի գծով հարկային պարտավորություններն ամբողջությամբ կատարում են մինչև փոխադրամիջոցների՝ տվյալ տարվա տեխնիկական գնության ներկայացնելը:

Փոխադրամիջոցների գծով հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ փոխադրամիջոցների տեխնիկական գնություն իրականացնող մարմիններ ներկայացվող տեղեկանքը գույքահարկ վճարողին տրամադրում է հաշվառող մարմինը:

Ֆիզիկական անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող փոխադրամիջոցը մինչև 2008 թվականի դեկտեմբերի 31-ը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով խոտանելու կամ հին նմուշի պետական համարանիշերը նորերով չփոխանակված եւ չչափազործվող փոխադրամիջոցները դրանք հաշվառող (գրանցող) լիազոր մարմնում հաշվառումից ժամանակավորապես հանելու դեպքում փոխադրամիջոցի գույքահարկի պարտավորության դադարեցման (հաշվառող մարմնի կողմից գույքահարկի պարտավորությունների վերահաշվարկման) համար հիմք են հանդիսանում փոխադրամիջոցների հաշվառում վարող լիազոր մարմնի կողմից սույն օրենքի 14 հոդվածով սահմանված կարգով ներկայացված տեղեկությունները կամ գույքահարկ վճարողին տրված՝ խոտանումը կամ հաշվառումից ժամանակավորապես հանելը հիմնավորող փաստաթուղթը (որում պարտադիր նշվում է տվյալ փոխադրամիջոցի վերջին տարեկան տեխնիկական գնության տարեթիվը): Ֆիզիկական անձի դիմումի համաձայն՝ փոխադրամիջոցները լիազոր

մարմնում վերահաշվառվում են գույքահարկ վճարողին հաշվառող մարմնի կողմից տրված՝ տվյալ փոխադրամիջոցի գծով գույքահարկի պարտավորություններ չունենալու տեղեկանքի հիման վրա»:

#### Ա.7 Հարց .- Ինչպիսի՞ արտոնություններ են նախատեսվում գույքահարկի գծով:

- Գույքահարկի գծով արտոնությունները սահմանված են Օրենքի 15 հոդվածով, ըստ որի.

«1. Գույքահարկից ազատվում են՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ գծային ինժեներատրանսպորտային շինությունները, եթե դրանցից օգտվելու համար վճար չի գանձվում.

2) ջրամբարները.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պետական սեփականություն համարվող պատմամշակութային նշանակության հարկվող օբյեկտ համարվող շինությունները՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկին համապատասխան, ինչպես նաև կրոնական կազմակերպություններին սեփականության իրավունքով պատկանող՝ մինչև 1991 թվականը կառուցված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դասակարգմանը համապատասխան՝ կրոնական, պաշտամունքային շենքերն ու շինությունները: Կրոնական կազմակերպություններն ազատվում են նաև սեփականության իրավունքով իրենց պատկանող՝ սույն կետում նշված շենքերի եւ շինությունների համար 2007 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված գույքահարկի, ինչպես նաև այդ գումարները օրենսդրությամբ սահմանված ժամկետներում չվճարելու համար հաշվարկված՝ հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի եւ տուգանքների գումարների վճարումից: Կրոնական կազմակերպություններին սեփականության իրավունքով պատկանող՝ սույն կետում նշված շենքերի եւ շինությունների մասով սահմանված հարկային արտոնությունների տրամադրման հետեւանքով համայնքների եկամուտների նվազեցումը պետության կողմից փոխհատուցման ենթակա չէ:

4) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված (մահացած), ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած եւ օրենքով սահմանված կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց (կամ ընտանիքի անդամներին) պատկանող գույքը՝ մինչև այդ անձանց գավակներից մեկի 18 տարին լրանալը.

5) սոցիալական ապահովության մարմիններից արտոնյալ պայմաններով ավտոմեքենաներ ստացած հաշմանդամները՝ այդ ավտոմեքենաների մասով: Հաշմանդամներին սեփականության իրավունքով պատկանող՝ սույն կետում նշված ավտոմեքենաների մասով սահմանված հարկային արտոնությունների տրամադրման հետեւանքով համայնքների եկամուտների նվազեցումը պետության կողմից փոխհատուցման ենթակա չէ:

2. Ծառայության ընթացքում գույքահարկից ազատվում են Հայաստանի Հանրապետության զինված ուժերի եւ այլ զորքերի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով դաշնակից երկրների զինված ուժերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվող անձինք՝

1) սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքահարկով հարկվող օբյեկտի մասով.

2) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքահարկով հարկվող օբյեկտի դեպքում՝ հարկվող օբյեկտի իրենց բաժնի մասով.

3) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքահարկով հարկվող օբյեկտի մասով, եթե մյուս համասեփականատերերն անչափահաս կամ անաշխատունակ անձինք են:

Սույն մասով սահմանված արտոնությունը վերապահվում է, եթե հարկվող օբյեկտ համարվող գույքը ծառայության ընթացքում չի հանձնվել վարձակալության կամ հավատարմագրային կառավարման:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով համայնքի ավագանին կարող է սահմանել գույքահարկի գծով արտոնություններ:

Համայնքի ավագանու սահմանած արտոնության գումարը չի կարող գերազանցել տվյալ տարվա համար գույքահարկի գծով համայնքի բյուջեում հաստատված եկամուտների 10 տոկոսը:

Համայնքի ավագանու կողմից գույքահարկի գծով սահմանված արտոնությունների գումարի դիմաց Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքի բյուջեին լրացուցիչ դոտացիաներ չեն տրամադրվում:

4. Օրենքով կարող են սահմանվել գույքահարկի գծով այլ արտոնություններ»:

Նկատի պետք է ունենալ, որ «Գույքահարկի մասին» օրենքն ունի հավելված, որով սահմանվում է շենքերի, շինությունների գնահատման կարգը:

## **Բ. Ե Կ Ա Մ Տ Ա Հ Ա Ր Կ**

**Բ.1 Հարց.- Ինչպիսի՞ իրավական ակտերով են կարգավորվում եկամտահարկի հետ կապված հարաբերությունները:**

-Եկամտահարկի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 27.12.97թ.:

**Բ.2 Հարց.- Ի՞նչ է եկամտահարկը:**

- Եկամտահարկի հասկացությունը տրված է օրենքի 2 հոդվածով, համաձայն որի՝ «Եկամտահարկը հարկ վճարողների կողմից (օրենքով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի միջոցով) սույն օրենքով սահմանված կարգով եւ չափով պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է»:

**Բ.3 Հարց. – Ո՞վքեր են եկամտահարկ վճարողները:**

- Համաձայն օրենքի 3 հոդվածի. «1. Հայաստանի Հանրապետությունում եկամտահարկ են վճարում (հարկատու են) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ (այսուհետ՝ ռեզիդենտ) եւ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք.

2. Սույն օրենքի իմաստով ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր եւ ավելի, կամ ուն կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը:

Սույն օրենքի իմաստով կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, եթե այնտեղ է գտնվում տունը կամ բնակարանը, որտեղ բնակվում է նրա ընտանիքը եւ գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը, կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը»:

Հոդվածում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ հասկացությունների օգտագործումը կարևոր է այն տեսակետից, որ դրա հիման վրա տարբերակվում է հարկվող օբյեկտը:

#### **Բ.4 Հարց.- Ո՞ր օբյեկտներն են եկամտահարկով հարկվող:**

- Համաձայն Օրենքի 4 հոդվածի «1. Ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում եւ նրա սահմաններից դուրս ստացվող հարկվող եկամուտը:

2. Ոչ ռեզիդենտի համար հարկվող օբյեկտ է համարվում հայաստանյան աղբյուրներից ստացվող հարկվող եկամուտը»:

#### **Բ.5 Հարց .- Ի՞նչ պետք է հասկանալ հարկվող եկամուտ ասելով:**

- Համաձայն Օրենքի 5 հոդվածի. «Հարկվող եկամուտը հարկատուի համախառն եկամտի եւ սույն օրենքի դրույթներին համաձայն իրականացված նվազեցումների դրական տարբերությունն է»:

#### **Բ.6 Հարց.- Ի՞նչ է համախառն եկամուտը:**

Օրենքի 6 հոդվածով տրված է համախառն եկամտի հասկացությունը և այն ամենը, ինչ օրենքի իմաստով դիտվում է որպես եկամուտ: Հոդվածում ասված է.

«Համախառն եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում հարկատուի ստացած բոլոր եկամուտների հանրագումարն է՝ անկախ դրանց ստացման աղբյուրներից:

Սույն օրենքի իմաստով եկամուտ են համարվում, մասնավորապես.

ա) աշխատանքի վարձատրությունը եւ դրան հավասարեցված այլ վճարումներ.

բ) գրականության, արվեստի կամ գիտական աշխատանքի օգտագործման, կամ օգտվելու իրավունքի համար ցանկացած հեղինակային իրավունքից, ցանկացած արտոնագրից, ապրանքային նշանից, նախագծից կամ մոդելից, պլանից, գաղտնի բանաձեւից կամ գործընթացից, էլեկտրոնային հաշվողական մեքենաների եւ տվյալների բազայի համար ծրագրերի կամ արդյունաբերական, առեւտրային, գիտական սարքավորումներն օգտագործելու կամ օգտվելու համար իրավունքի կամ արդյունաբերական, տեխնիկական, կազմակերպական, առեւտրային, գիտական փորձի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու համար ստացվող հատուցումը (այսուհետ՝ ռոյալթի).

գ) փոխառության դիմաց ստացվող տոկոսը եւ այլ հատուցումը (այսուհետ՝ տոկոս).

դ) շահաբաժինները.

ե) խաղատներում, շահումներով խաղերում ստացած եկամուտները (շահումները).

զ) մրցույթների եւ մրցությունների, ինչպես նաեւ վիճակախաղերի, իրային շահումները (մրցանակները).

է) մրցույթների եւ մրցությունների, ինչպես նաեւ վիճակախաղերի դրամական շահումները (մրցանակները).

ը) նվիրատվության եւ օգնության կարգով ստացված գույքը եւ դրամական միջոցները.

թ) ժառանգության կարգով ստացված գույքը եւ դրամական միջոցները.

ժ) ապահովագրական հատուցումները.

ժա) ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտը.

ժբ) գույքն օտարելուց ստացված եկամուտը.

ժգ) վարձակալության դիմաց ստացվող վճարը եւ այլ հատուցումը (այսուհետ՝ վարձավճար), քաղաքացիաիրավական այլ պայմանագրերից ստացվող եկամուտը.

ժդ) իրավաբանական անձանց եւ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների կողմից ֆիզիկական անձանց համար կատարված ապահովագրավճարները, բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր սոցիալական ապահովության վճարների:

Բնամթերային (ոչ դրամական) ձեւով ստացված եկամուտները որպէս համախառն եկամուտ հաշվի են առնվում (այդ թվում՝ նաեւ հարկային գործակալի կողմից, սույն օրենքի դրույթներին համաձայն, հարկը պահելու (գանձելու) դեպքում) պետական հաստատագրված (կարգավորվող), իսկ դրանց բացակայության դեպքում ազատ (շուկայական) գներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Ֆիզիկական անձանց կողմից արտարժույթով ստացված եկամուտները վերահաշվարկվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ ելնելով դրանց ստացման օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժութային շուկաներում ձեւավորված միջին փոխարժեքից:

Բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի, բնակելի թաղամասերում կամ համալիրներում անհատական բնակելի տներ կառուցապատող՝ ֆիզիկական անձի կողմից շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների այլ ֆիզիկական անձանց վաճառքի դեպքում օտարված տարածքի (առանց ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքների) վաճառքից ստացված եկամուտը հաշվարկվում է գույքահարկով հարկման նպատակով՝ դրանց համար օրենքով սահմանված կարգով որոշվող արժեքից ոչ պակաս չափով»:

Համաձայն օրենքի 7 հոդվածիս, եկամուտ չեն համարվում և համախառն եկամտի մեջ չեն ներառվում՝

ա) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համաձայն վճարվող պետական նպաստները, բացառությամբ ժամանակավոր անաշխատունակության եւ ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստների.

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համաձայն վճարվող բոլոր տեսակի կենսաթոշակները.

գ) զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին եւ հաշմանդամ դարձած զինծառայողներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համաձայն տրվող միանվագ վճարները.

դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան վճարվող ալիմենտները (ապրուստավճարները).

ե) արյուն ու կրծքի կաթ հանձնելու եւ դոնորության այլ տեսակների համար ֆիզիկական անձանց ստացած գումարները:

## **Բ.7 Հարց.- Ի՞նչ պետք է հասկանալ համախառն եկամտից նվազեցում ասելով և ո՞ր եկամուտներն են նվազեցվում համախառն եկամտից :**

- Քանի որ եկամտահարկը հաշվարկվում է համախառն եկամտից, եկամտահարկը հաշվարկելու համար համախառն եկամտից նվազեցվում են այն եկամուտները, որոնք հարկման ենթակա չեն: Օրենքի 8 հոդվածի իմաստով, համախառն եկամուտը նվազեցվում է չհարկվող եկամուտների, օրենքով նախատեսված անձնական նվազեցումների և ծախսերի չափով:

Օրենքի 9 հոդվածով թվարկված են այն եկամուտները, որոնք հարկման ենթակա չեն և եկամտահարկ հաշվարկելիս, նվազեցվում են համախառն եկամտից: Այդ հոդվածի համաձայն՝

Հարկվող եկամուտը որոշելիս հարկ վճարողի համախառն եկամտից նվազեցվում են՝

ա) զինծառայողների եւ դրանց հավասարեցված անձանց զինվորական ծառայության հետ կապված եկամուտները.

ա1) փրկարարական ծառայության ծառայողների ծառայության հետ կապված եկամուտները.

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմաների սահմաններում փոխհատուցման վճարները, բացառությամբ աշխատանքից ազատվելու դեպքում չօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարների:



Սույն ենթակետով նախատեսված փոխհատուցման վճարների համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նվազեցման նորմաներ սահմանված չլինելու դեպքում համախառն եկամուտը նվազեցվում է փաստաթղթերով հիմնավորված ծախսերի համար որպես փոխհատուցում ողջ գումարի չափով:

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ ժառանգության եւ նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից ստացված գույքը եւ դրամական միջոցները.

դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված եւ հարկային մարմիններում հաշվառված ոչ առետրային կազմակերպությունների միջոցներից կանոնադրական գործունեության շրջանակներում ֆիզիկական անձանց դրամական եւ բնամթերային ձեւով ցույց տրվող օգնության գումարները.

ե) Հայաստանի Հանրապետության պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների հիման վրա, ինչպես նաեւ օտարերկրյա պետությունների եւ միջազգային միջպետական (միջկառավարական) կազմակերպությունների կողմից ֆիզիկական անձանց անհատույց տրվող գույքը եւ դրամական միջոցները.

զ) պարենային բավարարման արժեքը, ինչպես նաեւ այդ բավարարման փոխարեն վճարվող գումարները.

է) անհատույց ստացված՝ օրենքով սահմանված կարգով շնորհի համարվող միջոցները.

ը) սեփականության իրավունքով իրենց պատկանող գույքի վաճառքից հարկային գործակալ չհանդիսացողներից ֆիզիկական անձանց ստացած գումարները՝ բացառությամբ ձեռնարկատիրական գործունեության հետեւանքով գույքի վաճառքից ստացված գումարների.

թ) ֆիզիկական անձանց կողմից մասնավորեցման (սեփականաշնորհման) սերտիֆիկատները ձեռք բերելու եւ դրանք՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ներդնելու դեպքում մասնավորեցման սերտիֆիկատների անվանական արժեքի եւ դրանց ձեռքբերման գնի միջեւ դրական տարբերությունը.

ժ) բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, ասպիրանտներին, միջնակարգ-մասնագիտական ու պրոֆեսիոնալ, տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողներին. հոգելոր ուսումնական հաստատությունների ունկնդիրներին պետության կողմից վճարվող կենսաթոշակները, ինչպես նաեւ այն կրթաթոշակները, որոնք նրանց համար նշանակում են այդ ուսումնական հաստատությունների կամ սույն հոդվածի "դ" եւ "ե" կետերում նշված կազմակերպությունները.

ժա) ապահովագրական հատուցումները.

ժբ) (9 հոդվածի ժբ ենթակետն ուժը կորցրել է 26.12.00 ՀՕ-130 օրենքով)

ժգ) արժեթղթերից ստացված եկամուտը՝ համապատասխան սույն օրենքի 10 հոդվածի.

ժդ) այն գումարները, որոնք օրենքով սահմանված կարգով ստացվում են որպես վնասի փոխհատուցում, բացառությամբ կորցված եկամտի փոխհատուցման.

ժե) Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն աշխատանքից ազատման դեպքում վճարվող արձակման նպաստի գումարը.

ժզ) կենսաթոշակների կամավոր ապահովագրության պայմաններով վճարվող լրացուցիչ կենսաթոշակները.

ժէ) աշխատողի կամ աշխատողի ընտանիքի որեւէ անդամի մահվան դեպքում միանվագ կարգով վճարվող օգնության գումարները.

ժը) Հայաստանի Հանրապետության ազգային հավաքականի կազմում միջազգային մրցույթների եւ մրցությունների հաղթած մարզիկների եւ մարզիչների մրցանակները.

ժթ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եւ պայմաններով իրականացվող վիճակախաղերի մասնակիցների դրամական եւ իրային շահումները.

(9 հոդ. թ ենթակետը փոփոխվել է 06.07.00 ՀՕ-78 օրենքով)

ի) մրցույթներում եւ մրցութիւններում ստացված դրամական մրցանակների արժեքը՝ յուրաքանչյուր վճարման դեպքում տասը հազար դրամի շրջանակներում.

իա) ֆիզիկական անձանց կողմից անհատական բնակարանային շինարարության նպատակով կառուցվող շինությունների գրավադրման դիմաց ստացված նպատակային վարկերի սպասարկման համար վճարվող տոկոսավճարները.

իբ) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից բարձրագույն ուսումնական հաստատությանը հատկացված վճարովի չափաքանակի շրջանակում սովորող ուսանողական համակազմի տասը տոկոսի ուսման տարեկան վարձի փոխհատուցման գումարները.

իգ) պետական պարգէները (մրցանակները).

իդ) "Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի հատուցած գումարները, բացառությամբ ավանդի գումարին հավելագրված եւ հատուցման ենթակա տոկոսների.

իե) ԽՍՀՄ խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչեւ 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցման գումարները.

իզ) պետության կամ համայնքների կարիքների համար ֆիզիկական անձանց պատկանող անշարժ գույքը վերցնելու դիմաց այդ ֆիզիկական անձանց, ինչպես նաեւ դրանում հաշվառված (գրանցված) ֆիզիկական անձանց վճարված գումարները:

Օրենքի 10-15 հոդվածները նույնպես վերաբերում են համախառն եկամուտներից կատարվող նվազեցումներին՝ արժեթղթերից ստացված եկամուտների, գյուղատնտեսական արտադրանքից ստացված եկամուտների, կենսաթոշակային, զբաղվածության, սոցիալական ապահովագրության համար կատարված վճարումների, բարեգործական և այլ անհատույց հատկացումների, անձնական նվազեցումների, եկամտի համար կատարված ծախսերի չափով կատարվող նվազեցումների կարգին: Այդ առումով կարևորվում են հատկապես 14 և 15 հոդվածները, ըստ որոնց՝

Հոդ. 14 «Համախառն եկամուտը նվազեցվում է եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա համար 25 000 դրամի չափով: Ընդ որում, եկամտի ստացման յուրաքանչյուր ամսում հարկատուի համախառն եկամուտը որոշելիս ստացվող եկամտից հարկային գործակալը սույն նվազեցումն իրականացնում է անկախ տվյալ հարկատուի կողմից ստացվող եկամուտներից մյուս հարկային գործակալների կողմից նման նվազեցումների իրականացումից»:

Հոդ. 15 « 1. Հարկվող եկամուտը որոշելիս, բացի սույն գլխով նախատեսված նվազեցումներից, համախառն եկամուտը նվազեցվում է նաեւ ձեռնարկատիրական գործունեությունից եւ քաղաքացիաիրավական պայմանագրեր կատարելուց ստացված եկամուտների գծով անհրաժեշտ եւ փաստաթղթերով հիմնավորված ծախսերի չափով՝ ֆիզիկական անձի կողմից ներկայացվող հաշվարկի հիման վրա: Անհրաժեշտ են համարվում անմիջականորեն եւ բացառապես եկամտի ստացման հետ կապված ծախսերը:

2. Փաստաթղթերով ծախսերի հիմնավորման նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

## **Բ.8 Հարց . - Եկմտահարկի ինչպիսի՞ դրույքաչափեր են սահմանված:**

Օրենքի 18 հոդվածով սահմանված են եկամտահարկի հետևյալ դրույքաչափերը.

«1. Բացառությամբ սույն հոդվածի 3-րդ, 4-րդ եւ 5-րդ կետերում նշված դեպքերի, հարկային գործակալը եկամտահարկը հաշվարկում է հետևյալ դրույքաչափերով.

Ամսական հարկվող եկամտի չափը  
Հարկի գումարը

մինչեւ 80,000 դրամ

հարկվող եկամտի  
10 տոկոսը

80,000 դրամից ավելի

8,000 դրամին գումարած  
80,000 դրամը գերազանցող  
գումարի 20 տոկոսը

2. Բացառությամբ սույն հոդվածի 3-րդ, 4-րդ եւ 5-րդ կետերում նշված դեպքերի, հարկային գործակալի միջոցով չհարկված եկամուտներից եկամտահարկը հաշվարկվում է հետեւյալ դրույքաչափերով.

Տարեկան հարկվող եկամտի չափը

Հարկի գումարը

մինչեւ 960,000 դրամ

հարկվող եկամտի  
10 տոկոսը

960,000 դրամից ավելի

96,000 դրամին գումարած  
960,000 դրամը գերազանցող  
գումարի 20 տոկոսը

3. Ռոյալթիների եւ գույքը վարձակալության տալու եկամուտներից, ինչպես նաեւ բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի, ստորաբաժանված շենքի, բնակելի թաղամասերում կամ համալիրներում անհատական բնակելի տներ կառուցապատող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից շենքի, դրա բնակարանների կամ այլ տարածքների անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այլ ֆիզիկական անձանց վաճառքի դեպքում՝ շենքի ընդհանուր տարածքի (առանց ընդհանուր բաժնային սեփականություն հանդիսացող ոչ բնակելի տարածքների) մինչեւ տասը տոկոսի, սակայն ոչ ավելի, քան 500 մ<sup>2</sup> մակերեսը, իսկ բնակելի թաղամասերում (կամ համալիրներում) 4-ից ավելի անհատական բնակելի տների քանակը գերազանցող տարածքների վաճառքից ստացված եկամուտներից եկամտահարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով՝ առանց հաշվի առնելու սույն օրենքով սահմանված նվազեցումները:

4. Տոկոսների համար եկամտահարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով՝ առանց հաշվի առնելու սույն օրենքով սահմանված նվազեցումները: (հոդված 18 խմբ. 26.12.00 ՀՕ-130 օրենք, հոդվածի 4-րդ կետն ուժի մեջ է մտնում 01.07.01 թվականից վերապահումով)

5. Հարկային գործակալը ֆիզիկական անձանցից գույք ձեռք բերելու դիմաց վճարվող եկամուտներից եկամտահարկը հաշվարկվում է 10 տոկոս դրույքաչափով՝ հաշվի առնելով միայն սույն օրենքի 10 եւ 11 հոդվածներով սահմանված նվազեցումները»:

#### **Բ.9 Հարց. – Ո՞ր ծախսերն են հաշվառվում որպես համախառն եկամտից նվազեցում:**

- Օրենքի 27 հոդվածը վերաբերում է այն ծախսերին, որոնց չափով կատարվում է նվազեցում հարկվող եկամուտը հաշվարկելիս: Ըստ հոդվածի՝

« 1. Ծախսերի թվին են դասվում, մասնավորապես՝

ա) նյութական ծախսերը.

բ) ամորտիզացիոն մասհանումները.

գ) վարձակալական վճարները.

դ) ապահովագրական վճարները.

ե) չփոխհատուցվող (չհաշվանցվող) հարկերը, տուրքերը եւ այլ պարտադիր վճարները.

զ) վարկերի եւ այլ փոխառությունների տոկոսները.

է) երաշխիքների, երաշխավորությունների, ակրեդիտիվների եւ բանկային այլ ծառայությունների համար վճարները.

ը) գովազդային ծախսերը.

թ) ներկայացուցչական ծախսերը.

ժ) դատական ծախսերը.

ժա) գործուղման ծախսերը.

ժբ) պատճառած վնասի հատուցումը.

ժգ) տույժերը, տուգանքները եւ գույքային այլ սանկցիաները, բացառությամբ պետական կամ համայնքների բյուջեներ, ինչպես նաեւ պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով գանձվող տույժերի, տուգանքների եւ գույքային այլ սանկցիաների.

ժդ) աուդիտորական, իրավաբանական, այլ խորհրդատվական, տեղեկատվական եւ կառավարման ծառայությունների ծախսերը.

ժե) ֆակտորինգային, հավատարմագրային (լիազորագրային) գործառնությունների ծախսերը.

ժզ) հաշվետու տարում հայտնաբերված՝ դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված ծախսերը:

2. Ծախս չեն համարվում այլ անձի կանոնադրական կապիտալում հարկատուի կատարած ներդրումները:

3. Ձեռնարկատիրական գործունեության իրականացման դեպքում ամորտիզացիոն մասհանումների եւ այլ ծախսերի հաշվարկման, համախառն եկամտից չնվազեցվող ծախսերի, ծախսատեսակների համար Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած նորմաների, համախառն եկամտից ծախսերի նվազեցման իրականացման, ինչպես նաեւ ձեռնարկատիրական գործունեությունից ստացված հաշվետու տարվա վնասների մասով կիրառվում են իրավաբանական անձանց համար "Շահութահարկի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված նորմերը»:

## Դ. ՀՈՂԻ ՀԱՐԿԸ

Հողի համար, որպես անշարժ գույքի, սահմանված է հարկման առանձնահատուկ սկզբունքներ և այդ բնագավառի հարկային հարաբերությունները կարգավորվում են առանձին՝ «Հողի հարկի մասին» օրենքով, որն ընդունվել է 14.02.1994 թվականին՝ ՀՀ գերագույն խորհրդի կողմից և գործում է հետագա մի շարք էական փոփոխություններով:

### Դ.1 Հարց .- Ո՞վքեր են հանդիսանում հողի հարկ վճարողներ:

. Հողի հարկ վճարողներ են հանդիսանում հողի սեփականատերերը, պետական սեփականություն հանդիսացող հողի մշտական օգտագործողները:

Վարձակալության պայմաններով օգտագործման տրամադրված հողերի համար հարկը գանձվում է վարձատուից / հող. 1/:

### Դ.2 Հարց .- Ո՞րն է հողի հարկով հարկման օբյեկտը՝ հո՞ղը, թե՞ հողից ստացվող եկամուտը:

- Գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամուտը:

Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հարկման օբյեկտ է հանդիսանում հողի կադաստրային գնահատման արժեքը /Հող 2/:

### Դ.3 Հարց .- Որո՞նք են հողի հարկի դրույքաչափերը:

Հողի հարկի չափը կապված է վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից եւ սահմանվում է հողակտորի միավոր մակերեսի համար հաստատագրված վճարի ձեւով, որը վճարվում է տարվա համար /Հոդ. 3/:

Սա նշանակում է, որ անկախ հողի սեփականատիրոջ կամ օգտագործողի տնտեսական գործունեության արդյունքներից, հողի հարկը հաշվարկվում է տվյալ հողակտորի կադաստրային գնահատման հիման վրա: Այդ առումով տարբերակվում են գյուղատնտեսական նշանակության և ոչ գյուղատնտեսական նշանակության հողի հարկի հաշվարկները:

Գյուղատնտեսական նշանակության հողերի /ներառյալ բնակավայրերում բնակչինարարության համար հատկացված, տնամերձ եւ այգեգործական /ամառանոցային/ հողամասերը/ համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է դրանց կադաստրային գնահատմամբ որոշված հաշվարկային զուտ եկամտի տասնհինգ տոկոսի չափով /Հոդ. 4/:

Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի համար հողի հարկը սահմանվում է հետևյալ չափերով՝

ա) արդյունաբերության /ներառյալ հանքավայրերը եւ արտադրական գործունեությունից խախտված տարածքները/, տրանսպորտի, կապի, ռադիո-հեռարձակման, հեռուստատեսության, պաշտպանության նպատակներով օգտագործվող, գազատար խողովակաշարերով զբաղեցված հողատարածքների, ինչպես նաեւ ջրային ֆոնդի հողերի համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է համապատասխան կադաստրային շրջանացման գոտիների տվյալ հողատեսքի կադաստրային գնահատման արժեքի նկատմամբ հետևյալ չափերով՝

- բնակավայրերի ներսում՝ 1 տոկոս.

- բնակավայրերից դուրս՝ 0,5 տոկոս.

բ) անտառային ֆոնդի հողերի /բացառությամբ դրանցում գտնվող գյուղատնտեսական հողատեսքերի/ համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է համապատասխան կադաստրային շրջանացման գոտիների անօգտագործելի հողերի կադաստրային գնահատման միջին արժեքի 1 տոկոսի չափով.

գ) ոչ գյուղատնտեսական նշանակության մյուս հողերի համար հողի հարկի դրույքաչափը սահմանվում է տվյալ հողատեսքի կադաստրային գնահատման արժեքի 1 տոկոսի չափով / Հոդ 5/:

Հարկման ենթակա մակերեսների մեջ մտնում են՝ շենքերով եւ շինություններով զբաղեցված հողերը, դրանց պահպանության համար անհրաժեշտ տարածքները, ինչպես նաեւ օբյեկտների սանիտարապահպան, տեխնիկական եւ մյուս գոտիները /Հոդ 6/:

### Դ.3 Հարց .- Ե՞րբ է առաջանում հողի հարկի պարտավորություն:

Հողի հարկի պարտավորությունն առաջանում է հարկվող օբյեկտ համարվող հողամասի կամ դրա մի մասի նկատմամբ օրենքով սահմանված կարգով սեփականության կամ մշտական օգտագործման իրավունքի ծագման ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Հողի հարկի պարտավորությունը դադարում է հարկվող օբյեկտ համարվող հողամասի կամ դրա մի մասի նկատմամբ սեփականության կամ մշտական օգտագործման իրավունքն օրենքով սահմանված կարգով դադարելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Ֆիզիկական անձի կողմից հարկվող օբյեկտն օտարելու դեպքում նոր սեփականատիրոջն են անցնում օրենքով սահմանված կարգով սեփականության իրավունքի ծագման օրվա դրությամբ առկա՝ տվյալ հարկվող օբյեկտի համար հողի հարկի չմարված հարկային պարտավորությունները:

Ֆիզիկական անձի կողմից հարկվող օբյեկտն օտարելու դեպքում օրենքով սահմանված կարգով սեփականության իրավունքի ծագման օրվա դրությամբ այդ օրվան հաջորդող ժամանակաշրջանի համար տվյալ հարկվող օբյեկտի հողի հարկի գծով վճարումների

առկայության դեպքում նոր սեփականատիրոջ համար հողի հարկի պարտավորություններն առաջանում են այդ ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 1-ից:

Հարկ վճարող ֆիզիկական անձի մահվան դեպքում նոր սեփականատիրոջն են անցնում ֆիզիկական անձի մահվան օրվանից մինչև օրենքով սահմանված կարգով սեփականության (ժառանգության) իրավունքի ծագման ամիսը ներառյալ տվյալ հարկվող օբյեկտի հողի հարկի պարտավորությունները /Հոդ. 7/:

#### **7.4 Հարց- Հողի հարկի գծով ինչպիսի՞ արտոնություններ են նախատեսված**

Հողի հարկից ազատվում են՝

ա) բյուջետային հիմնարկները եւ կազմակերպությունները, ինչպես նաեւ պետական արգելանոցները եւ արգելավայրերը, ազգային եւ ծառաբանական զբոսայգիները, բուսաբանական այգիները եւ պատմամշակութային նշանակության հողերը, բացառությամբ վարձակալության եւ ծառայողական օգտագործման տրված հողերի:

բ) հողային ռեֆորմի եւ սեփականաշնորհման ընթացքում ձեւավորված գյուղացիական եւ գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները՝ հողի սեփականության իրավունքի ձեռքբերման ամսվանից սկսած 2 տարվա ընթացքում:

գ) հողի այն սեփականատերերը, մշտական եւ ժամանակավոր օգտագործողները, որոնց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով որոշակի ժամկետով եկամտահարկից ազատելու պայմանով տրամադրվել են հողեր՝ այդ ժամկետի ընթացքում:

դ) բնակավայրերում պետական սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման հողերը (հրապարակներ, փողոցներ, անցումներ, ճանապարհներ, զբոսայգիներ, պուրակներ, ջրամբարներ եւ այլն):

ե) մասնագիտական տեխնիկական ուսումնարաններին (պրոֆտեխուսումնարաններին) եւ դպրոցներին կից ուսումնարտադրական եւ փորձարարական հողամասերը:

զ) նոր հիմնված եւ երիտասարդ խաղողի ու պտղատու այգիները, մինչև տնկարկների լրիվ պտղաբերությունը (յուրաքանչյուր սորտի համար ագրոտեխնիկական ցուցումներով սահմանված ժամկետում)՝ դրանց տարածքը 0,1 հեկտար եւ ավելի լինելու դեպքում:

է) պետական անտառային ֆոնդի հողերը, բացառությամբ գյուղատնտեսական նշանակության վարձակալության տրված հողերի /Հոդ. 10/:

Հողի հարկից 50 տոկոսի չափով ազատվում են՝

ա) գյուղատնտեսական եւ անտառտնտեսական գիտական կազմակերպությունները, գիտահետազոտական հիմնարկները եւ ուսումնական հաստատությունների փորձնական, փորձարարական, սերմնաբուծական, տնկարանային, տոհմային եւ սորտափորձարկման ձեռնարկությունները, կայանները եւ հենակետերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ցանկով, այն հողերի համար, որոնք օգտագործվում են բացառապես գիտական եւ ուսումնական, ինչպես նաեւ գյուղատնտեսական, անտառաբուծական մշակաբույսերի սորտափորձարկման նպատակներով:

բ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եկամտահարկի վճարումից ազատված քաղաքացիները՝ սեփականության իրավունքով իրենց պատկանող հողերի համար / Հոդ. 11/:

#### **7.4 Հարց . – Ի՞նչ կարգով են իրականացվում հողի հարկով հարկման օբյեկտի որշման համար կադաստրային գնահատումները:**

Հողի հարկով հարկման օբյեկտի որոշման նպատակով հողամասերի կադաստրային գնահատումները (վերագնահատումները) իրականացվում են երեք տարին մեկ անգամ, անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնի կողմից՝ գնահատման (վերագնահատման)

տարվա հուլիսի 1-ի դրությամբ առկա հաշվառման տվյալների հիման վրա, որի արդյունքները հիմք են ընդունվում գնահատման (վերագնահատման) տարվան հաջորդող երեք տարիների հողի հարկի հաշվարկման համար:

Սույն հոդվածի առաջին մասով սահմանված եռամյա պարբերականությամբ կադաստրային գնահատությունների առաջին կադաստրային գնահատությունն իրականացվում է 2007 թվականի հուլիսի 1-ի դրությամբ անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնում հաշվառված տվյալների հիման վրա, իսկ հետագա գնահատություններն իրականացվում են սույն հոդվածի առաջին մասում նշված պարբերականությամբ:

Անկախ սույն հոդվածի առաջին մասում նշված ժամկետներից՝ գնահատման (վերագնահատման) տարվա հուլիսի 1-ից հետո Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով սեփականության իրավունքով ձեռք բերված հողամասերի, ինչպես նաև գնահատման (վերագնահատման) տարվա հուլիսի 1-ի դրությամբ անշարժ գույքի կադաստր վարող լիազոր մարմնում առկա հաշվառման տվյալների համեմատությամբ մինչև հողամասերի առաջիկա գնահատման (վերագնահատման) տարին ներառյալ ընկած ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նպատակային կամ գործառնական (հողատեսքերի) նշանակության փոփոխություններ կրած հողամասերի հարկման օբյեկտի որոշման նպատակով իրականացված կադաստրային գնահատության արդյունքները հիմք են ընդունվում մինչև սույն հոդվածի առաջին մասով սահմանված առաջիկա գնահատման (վերագնահատման) տարին ներառյալ հողի հարկի հաշվարկման համար /Հոդ. 21/:

Հավելված 1

040.0919.110702

"ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ"  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

"11" հունիսի 2002 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ

25 ապրիլի 2002 թվականի N 919-Ն

ՆՈՏԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն "Նոտարիատի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել նոտարի կողմից մատուցվող վճարովի այլ ծառայությունների հետևյալ սակագները՝

NN	Նոտարական գործողության տեսակը	Նվազագույն
ը/կ		աշխատավարձի
		նկատմամբ
		գործակիցը
1	2	3

1. Գույքի նկատմամբ կնքվող գործարքի վավերացման ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման եւ պարզաբանումների համար (բացառությամբ գրավի պայմանագրերի եւ գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ կնքվող գործարքների) 0,5-5
2. Գյուղատնտեսական նշանակության հողամասերի վերաբերյալ պայմանագրերի վավերացման ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման եւ պարզաբանումների համար 0,5-1
3. Գրավի պայմանագրի վավերացման ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման եւ պարզաբանումների համար 1-5
4. Բաց կտակի վավերացման ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման եւ պարզաբանումների համար 0,3-3
5. Փակ կտակի վավերացման ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման եւ պարզաբանումների համար 0,5-5
6. Լիազորագրի վավերացման ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման եւ պարզաբանումների համար 0,5-3
7. Խառը պայմանագրերի վավերացման ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման եւ պարզաբանումների համար 1-10



8. 1-6-րդ կետերում չնշված այլ գործարքների վավերացման ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման եւ պարզաբանումների համար 0,5-10
9. Առանձնապես բարդ գործարքներ վավերացնելու ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման եւ պարզաբանումների համար 5-20
10. Ժառանգական գույքի պահպանության համար միջոցներ ձեռք առնելու գործողությունների կատարման ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման եւ պարզաբանումների համար 5-50
11. Ժառանգության իրավունքի վկայագիր տալու ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման եւ պարզաբանումների համար 0,5-5
12. Ընդհանուր համատեղ կամ ընդհանուր բաժնային սեփականության ներքո գտնվող գույքից հասանելիք բաժնի նկատմամբ սեփականության իրավունքի վկայագիր տալու ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման եւ պարզաբանումների համար 0,5-5
13. Փաստաթղթերի պատճենների կամ դրանցից քաղվածքների իսկությունը վավերացնելու ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման եւ պարզաբանումների համար (յուրաքանչյուր էջի համար) 0,5
14. Փաստաթղթերի վրա եղած ստորագրությունների իսկությունը վավերացնելու ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման եւ պարզաբանումների համար (յուրաքանչյուր ստորագրության համար) 0,5
15. Փաստաթղթերի թարգմանության իսկությունը վավերացնելու ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման եւ պարզաբանումների համար (յուրաքանչյուր էջի համար) 0,5
16. Քաղաքացու ողջ լինելու փաստը հաստատելու ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման եւ պարզաբանումների համար 2
17. Քաղաքացու՝ որոշակի վայրում գտնվելու փաստը հաստատելու ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման եւ պարզաբանումների համար 2
18. Լուսանկարում պատկերված անձի եւ քաղաքացու նույնությունը հաստատելու ժամանակ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման եւ պարզաբանումների համար 2
19. Փաստաթղթեր ներկայացնելու ժամանակը հաստատելիս ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման եւ պարզաբանումների համար 1
20. Ֆիզիկական անձանց կամ կազմակերպությունների դիմումները, հայտարարությունները կամ այլ փաստաթղթեր այլ ֆիզիկական անձանց կամ կազմակերպություններ փոխանցելու ժամանակ

ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման եւ  
պարզաբանումների համար 3

21. Դրամական գումար կամ արժեթղթեր դեպոզիտ ընդունելու, դեպոզիտ  
պահպանելու, հանձնելու կամ վերադարձնելու ժամանակ ընդունվող  
ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրման եւ գումարի 0,5  
պարզաբանումների համար տոկոսը

22. Փաստաթղթերի ի պահ ընդունելու ժամանակ ներկայացված  
փաստաթղթերի ուսումնասիրման եւ պարզաբանումների համար  
(յուրաքանչյուր օրվա համար) 0,1-0,3

23. Ապացույցների ապահովման ժամանակ ներկայացված  
փաստաթղթերի ուսումնասիրման եւ պարզաբանումների համար 5-50

24. Կազմակերպության ընդհանուր ժողովի կամ կոլեգիալ այլ մարմնի  
նիստի արձանագրությունը վավերացնելու ժամանակ ներկայացված  
փաստաթղթերի ուսումնասիրման եւ պարզաբանումների համար 5-50

25. Գործարքների, հաստատման ենթակա փաստաթղթերի կամ իրավական  
այլ փաստաթղթի օրինակելի ձեւերի պատրաստման եւ  
տրամադրման համար 1-2

26. Անձանց առաջարկությունների հիման վրա ոչ օրինակելի  
գործարքների, հաստատման ոչ ենթակա ոչ օրինակելի  
փաստաթղթերի կամ իրավական այլ փաստաթղթերի պատրաստման եւ  
տրամադրման, ինչպես նաեւ գործարքների վավերացման կամ  
փաստաթղթերի պատրաստման հետ չկապված իրավական օգնության  
կամ խորհրդատվության տրամադրման կամ այլ ծառայությունների  
մատուցման համար՝ ծառայության մատուցման համար անհրաժեշտ  
յուրաքանչյուր ժամի համար 10

## 2. Սահմանել, որ

ա) նոտարը պարտավոր է վճարովի ծառայությունների դիմաց գանձվելիք գումարի  
չափի մասին դիմողին հայտնել անվճար՝ նրանից անհրաժեշտ փաստաթղթերն ընդունելու  
պահին.

բ) նոտարի կողմից վավերացման կամ հաստատման ենթակա յուրաքանչյուր  
նոտարական գործողության ժամանակ փաստաթղթերի ուսումնասիրման եւ  
պարզաբանումների համար նախատեսված վճարն իր մեջ ներառում է տվյալ  
նոտարական գործողության համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի ուսումնասիրումն  
ու պարզաբանումը.

գ) առանձնապես բարդ է համարվում այն գործարքը, որի վավերացումը նոտարի  
կողմից հետաձգվում է՝

փաստաթղթերը նոտարի կողմից փորձաքննության ուղարկելու դեպքում.

ներկայացված փաստաթղթերը նոտարի կողմից մանրամասն ուսումնասիրվելու  
անհրաժեշտություն առաջանալու դեպքում.

նոտարական գործողության կատարման համար նոտարի կողմից  
կազմակերպություններից համապատասխան տեղեկությունների կամ փաստաթղթերի  
ստացման անհրաժեշտության դեպքում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող  
օրվանից:

**ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ**  
**2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 4-ԻՆ**

## Հավելված 2

322.0089.170402

**ԳՐԱՆՑՎԱԾ Է  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ  
„17,, 04 2002 Թ.  
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 32202068**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ  
ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ  
ՀՐԱՄԱՆ  
12 փետրվարի 2002 թվականի N 89-Կ**

**ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ  
ՍԱՀՄԱՆԱՓՈՎԱԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ  
ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով "Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին" ՀՀ օրենքի 49 հոդվածի պահանջներով.

Հրամայում եմ՝

1. Հաստատել "Պետական գրանցման, գույքի եւ դրա նկատմամբ իրավունքների եւ սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման վճարների ցանկը"

(կցվում է):

2. Սահմանված կարգով վճարների ցանկը ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարություն՝ համաձայնեցման:

3. Սահմանված կարգով վճարների ցանկը ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ գրանցման:

4. Սույն հրամանի կատարման պատասխանատվությունը դնել կոմիտեի ֆինանսական, հաշվապահական հաշվառման վարչության (Ա. Հովհաննիսյան) վրա:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

### **ՑԱՆԿ**

#### **ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, պետական, համայնքային, ոչ պետական հիմնարկների եւ կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց, իրավաբանական անձանց սեփականություն հանդիսացող կամ օգտագործման իրավունքով տրամադրված, գրավադրված, սերվիտուտով ծանրաբեռնված անշարժ գույքի հաշվառում, գնահատում:

#### **1. ՉԱՓԱԳՐՈՒՄ**

ա) Շենքերի եւ շինությունների չափագրում 1 քմ. 20 դրամ

բ) Հողամասերի (բացառությամբ գյուղ. նշանակության, հատուկ պահպանվող տարածքների հողերի, անտառային հողերի հողերի) չափագրում՝ յուրաքանչյուր 100 քմ. 300 դրամ

գ) Հողամասերի (բացառությամբ գյուղ. նշանակության, հատուկ պահպանվող տարածքների հողերի, անտառային հողերի հողերի) 10 հեկտարից ավելի հողերի չափագրում հանութագրման եղանակով՝ յուրաքանչյուր 10000 քմ. 4000 դրամ

դ) Գյուղատնտեսական նշանակության, հատուկ պահպանվող տարածքների հողերի, անտառային հողերի հողերի չափագրում՝ յուրաքանչյուր 1000 քմ. 100 դրամ

ե) Գյուղատնտեսական նշանակության, հատուկ պահպանվող

տարածքների հողերի, անտառային հողերի 10 հեկտարից ավելի հողերի չափագրում հանութագրման եղանակով՝ յուրաքանչյուր 10000 քմ. 2000 դրամ

**ՏԵՂԱԶՆՆՈՒԹՅՈՒՆ**

Բնակելի, հասարակական եւ արտադրական նշանակության շենքերի ու շինությունների համար՝

ա) 200-ից մինչեւ 500 քմ. մակերեսով	2500 դրամ
բ) 500-ից մինչեւ 1000 քմ. մակերեսով	5000 դրամ
գ) 1000-ից մինչեւ 5000 քմ. մակերեսով	15000 դրամ
դ) 5000-ից մինչեւ 10000 քմ. մակերեսով	30000 դրամ
ե) 10000 քմ-ից ավել մակերեսով	60000 դրամ

**2. ԿԱՄԵՐԱԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**

- ա) Անշարժ գույքի սահմանված մասշտաբով (A3, A4 ֆորմատի) հատակագծի կազմում (բացառությամբ գյուղ. նշանակության, հատուկ պահպանվող տարածքների հողերի, անտառային հողերի հողերի) 1 թերթը. 1000 դրամ
- բ) A3,A4 ֆորմատի յուրաքանչյուր լրացուցիչ ներդիրի (հատակագիծ) համար. 600 դրամ
- գ) Գյուղատնտեսական նշանակության հողերի, հատուկ պահպանվող տարածքների հողերի, անտառային հողերի սահմանված մասշտաբով (A3,A4 ֆորմատի) հատակագծի կազմում՝ 1 թերթը. 500 դրամ

**3. ԳՆԱՀԱՏՈՒՄ**

- ա/ Շենքերի եւ շինությունների յուրաքանչյուր միավորի գնահատում 350 դրամ
- բ/ Հողամասերի յուրաքանչյուր միավորի գնահատում 350 դրամ (ցանկը փոփ. 10.09.04 թիվ 215-Ն հրաման)

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓՈՎԱԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ**

1   Անշարժ գույքի եւ դրա նկատմամբ գրանցված իրավունքների եւ	7000 դրամ
սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկատվության	
տրամադրում բացառությամբ՝ գյուղատնտեսական նշանակության	
հողերի	
2   Գյուղատնտեսական նշանակության հողերի յուրաքանչյուր միավորի	500 դրամ
նկատմամբ գրանցված իրավունքների եւ սահմանափակումների	
վերաբերյալ միասնական տեղեկատվության տրամադրում	
Գյուղատնտեսական նշանակության հողերի յուրաքանչյուր միավորի	200 դրամ
նկատմամբ գրանցված առանձին իրավունքների եւ սահմանափակումների	
վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:	
3   Սերվիտուտի վերաբերյալ տրվող տեղեկանք	500 դրամ
4   Գրավի հիփոթեքի առկայության վերաբերյալ տրվող տեղեկանք	500 դրամ
5   Անշարժ գույքի չափերի վերաբերյալ տրվող տեղեկանք	500 դրամ
6   Կադաստրային արժեքի վերաբերյալ տրվող տեղեկանք	500 դրամ
7   Ընդհանուր սեփականության դեպքում, սեփականատերերի թվի,	500 դրամ
թաժնեմասի չափերի վերաբերյալ տրվող տեղեկանք	

8	Անավարտ (կիսակառույց) շինությունների եւ մեխորատիվ   նախապատրաստվող հողերի, համապատասխանաբար, ըստ ավարտվածության    չափանիշերի վերաբերյալ տրվող տեղեկանք	500 դրամ		
8.	Շարժական գույքի նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ 1.տեղեկատվության տրամադրման	500 դրամ		
8.	Անշարժ գույքի հասցեների վերաբերյալ տեղեկատվություն 2.տրամադրելու համար	1000 դրամ		
9	Անշարժ գույքի կադաստր վարող մարմինների կողմից տրվող   փաստաթղթերի քսերոպատճենի յուրաքանչյուր էջի համար	50 դրամ		
10	Կադաստրային քարտեզներում արտահայտված տեղեկատվության   տրամադրում			
	Քաղային շերտերում(1) արտահայտված տեղեկատվություն /1 հա/.			
	ա/ Երեւան քաղաք,	6000 դրամ		
	բ/ Քաղաքային համայնքների /Երեւան քաղաքի տարածքից բացի/			
	կառուցապատված հատվածներ,	3000 դրամ		
	գ/ Գյուղական համայնքների կառուցապատված հատվածներ,	1500 դրամ		
	դ/ Քաղաքային /Երեւան քաղաքի տարածքից բացի/ եւ գյուղական			
	համայնքների չկառուցապատված հատվածներ եւ այլ տարածքներ	500 դրամ		
11	Թեմատիկ շերտերում արտահայտված տեղեկատվություն (1 շերտ)   ա) յուրաքանչյուր համայնք	500 դրամ		
12	Կադաստրային քարտեզների պատճենների ստացում (տպագրություն)   Յուրաքանչյուր օրինակի արժեքը, գունավոր			
	ա) A01 (1.2 x 0.9 մ) ֆորմատ	500 դրամ		
	բ) A1 ֆորմատ	2500 դրամ		
	գ) A2 ֆորմատ	1250 դրամ		
	դ) A3 ֆորմատ	625 դրամ		
	ե) A4 ֆորմատ:	300 դրամ		
13	Կադաստրային քարտեզների պատճենավորում էլեկտրոնային   կրիչների վրա			
	Յուրաքանչյուր պատճեն			
	ա) ճկուն սկավառակի վրա,	500 դրամ		
	բ) կոմպակտ սկավառակի վրա	1000 դրամ		
14	Կադաստրային քարտեզների քսերոպատճենների յուրաքանչյուր   թերթի համար			
	ա) A01 (1.2 x 0.9 մ) ֆորմատ	600 դրամ		
	բ) A1 ֆորմատ	300 դրամ		
	գ) A2 ֆորմատ	150 դրամ		
	դ) A3 ֆորմատ	75 դրամ		
	ե) A4 ֆորմատ:	30 դրամ		
15	1:10000-10:1000 մասշտաբների տեղագրական քարտեզների   յուրաքանչյուր անվանակարգային (նոմենկլատուրային) թերթը    (գունավոր)	6000 դրամ		
16	1:500-1:10000 մասշտաբների տեղագրական հատակագծերի   յուրաքանչյուր անվանակարգային (նոմենկլատուրային) թերթը    (սեւ-սպիտակ)	2000 դրամ		

17 1:10000-1:1000000 մասշտաբների տեղագրական քարտեզների եւ    1:500-1:10000 մասշտաբների տեղագրական հատակագծերի    անվանակարգային (նոմենկլատուրային) թերթի յուրաքանչյուր    քսերոպատճենների համար	1000 դրամ
18 Յուրաքանչյուր գեոդեզիական կետի կոորդինատները (աբսցիս,    օրդինատ, բարձրություն)	1000 դրամ
19 Անշարժ գույքի միավորի (հողամաս, շենք, շինություն)    յուրաքանչյուր շրջադարձային կետի կամ անկյան կոորդինատը    (աբսցիս, օրդինատ)	100 դրամ
20 1:500-1:1000000 մասշտաբի տեղագրական հատակագծերի եւ    քարտեզների յուրաքանչյուր անվանակարգային /նոմենկլատուրային/    թերթը    ա/ ռաստերային ֆորմատով,    բ/ վեկտորային ֆորմատով	4000 դրամ   80000 դրամ
21  Օդալուսանկար ցանկացած մասշտաբի /18x18 կամ 23x23սմ/,     ռաստերային ֆորմատով	1500 դրամ
22  Տիեզերական նկար 1մ եւ ավելի պակաս թույլատրելիություն     ունեցող, ռաստերային ֆորմատով, 1կմ2	12000 դրամ
23  Տիեզերական նկար 1մ-ից ավելի թույլատրելիություն ունեցող,     ռաստերային ֆորմատով, 1կմ2	3000 դրամ

(ցանկը փոփ. 13.05.05 թիվ 131-Ն, 16.10.06 թիվ 06-418-Ն հրամաններ)

1. Կադաստրային քարտեզներում բազային է հանդիսանում անշարժ գույքը պատկերող շերտը, որը բաղկացած է երկու ենթաշերտերից /հողամասեր, շենքեր եւ շինություններ/:

2. Կադաստրային քարտեզներում թեմատիկ են հանդիսանում անշարժ գույքի որակական բնութագրությունները պատկերող շերտերը: Թեմատիկ շերտերն են՝ հողերի նպատակային նշանակության, շենքերի եւ շինությունների նպատակային նշանակության, անշարժ գույքի սեփականության սուբյեկտների, կոմունիկացիաների եւ այլն:

Յուրաքանչյուր թեմատիկ շերտ բաղկացած է երկու եւ ավելի ենթաշերտերից:

3. Մեկ գույնով տպագրության դեպքում 12 ա/-ե/ կետերում բերված վճարների համար կիրառվում է 0.4 գործակից:

Անշարժ գույքի եւ դրա նկատմամբ գրանցված իրավունքների եւ սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում" բաժնի 2, 3, 4, 5, 6, 7, 8, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 19 կետերով նախատեսված, ինչպես նաեւ բնակելի նշանակության անշարժ գույքի (անհատական բնակելի տուն, բնակարան, այգետնակ, ավտոտնակ, տնամերձ, բնակելի տան կառուցման եւ սպասարկման համար հատկացված հողամասեր եւ այլն), գյուղատնտեսական նշանակության եւ պահուստային հողերի, մինչեւ 200 քմ հասարակական, արտադրական նշանակության անշարժ գույքի ("Փոքր" օբյեկտ), չկառուցապատված հողամասերի եւ դրանց նկատմամբ գրանցված իրավունքների եւ սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկատվության տրամադրումն իրականացվում է դիմումը ներկայացնելու օրվանը հաջորդող աշխատանքային օրը:

200 քմ-ից ավելի հասարակական, արտադրական նշանակության անշարժ գույքի եւ դրանց նկատմամբ գրանցված իրավունքների եւ սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկատվության տրամադրումն իրականացվում է պատվիրատուի կողմից դիմումը ներկայացնելու օրվանը հաջորդող 2-րդ աշխատանքային օրը: Պատվիրատուի պահանջով այն կարող է իրականացվել նաեւ դիմումը ներկայացնելու օրվանը հաջորդող աշխատանքային օրը՝ կիրառելով 2 գործակից (2 x 7000 դրամ):

Անշարժ գույքի կադաստր վարող մարմինների կողմից տրվող փաստաթղթերի քսերոպատճենների տրամադրումն իրականացվում է պատվիրատուի կողմից դիմումի ներկայացման նույն օրը:

Անշարժ գույքի վերաբերյալ մասնագիտական եզրակացություն եւ հատակագծի տրամադրում.

Անշարժ գույքի վերաբերյալ միավորման, բաժանման եւ այլ բնույթի մասնագիտական եզրակացությունը եւ հատակագիծը տրամադրվում է դիմումը ներկայացնելու օրվանը հաջորդող աշխատանքային օրը, որի համար գանձվում է 5000 դրամ:  
(3-րդ կետը փոփ. 06.09.02 թիվ 783-Ն հրաման)

**ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ, ՓՈՓՈԽՄԱՆ, ՓՈՒՍԱՆՑՄԱՆ ԵՎ ԴԱԴԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐ**

1. Անշարժ գույքի՝ հողամասի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության, հատուկ պահպանվող տարածքների հողերի, լանտառային հողերի, ինչպես նաեւ իհամայնքների վարչական սահմաններում եւ դրանից դուրս գտնվող պետական պահուստային ֆոնդի հողամասերի) եւ դրանց վրա ամրակայված շենքերի եւ շինությունների նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար՝	
ա) օտարում (առքուվաճառք, նվիրատվություն, փոխանակում, օտարման այլ գործարքներ),	10000 դրամ
բ) կտակ կամ ըստ օրենքի ժառանգություն, առանձին իրավունքների գրանցում	
գ) վարձակալություն (ենթավարձակալություն),	
դ) անհատույց օգտագործում,	
ե) գրավ, հիփոթեք,	
զ) ֆինանսական վարձակալություն (լիզինգ),	
է) սերվիտուտներ,	
ը) այլ գույքային իրավունքներ:	
1.1 Անշարժ գույքի՝ հողամասի, /բացառությամբ գյուղատնտեսական նշանակության սեփականաշնորհված հողամասերի, ինչպես նաեւ իհամայնքների վարչական սահմաններում եւ դրանցից դուրս գտնվող պետական պահուստային ֆոնդի /հողամասերի/ եւ դրանց վրա ամրակայված շենքերի եւ շինությունների համար լսեփականատերերին եւ օգտագործողներին մինչեւ իրավունքների պետական գրանցման /իհամակարգի ներդրումը (1998 թվականի մարտի 1-ը) տրամադրված իրավունքը /հաստատող փաստաթղթերի փոխարինման՝ իրավունքների պետական գրանցման համար /3000 դրամ:	
2. Գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համար՝	
ա) օտարում (առքուվաճառք, նվիրատվություն, փոխանակում, օտարման այլ գործարքներ),	500 դրամ
բ) կտակ կամ ըստ օրենքի ժառանգություն, առանձին իրավունքների գրանցում	
գ) վարձակալություն (ենթավարձակալություն),	
դ) անհատույց օգտագործում,	
ե) գրավ, հիփոթեք,	
զ) ֆինանսական վարձակալություն (լիզինգ),	
է) սերվիտուտներ,	
ը) այլ գույքային իրավունքներ:	
3. Անշարժ գույքի հողամասի (բացառությամբ գյուղատնտեսական նշանակության հողամասերի) եւ դրանց վրա ամրակայված շենքերի եւ շինությունների նկատմամբ իրավունքների սահմանափակումների պետական գրանցման համար:	1000 դրամ
4. Գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ իրավունքների սահմանափակումների պետական գրանցման համար:	500 դրամ
5. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականների կամ նախկինում գույքագրման մարմինների կողմից տրված լսեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի կրկնօրինակ տալու իհամար՝	

ա) սեփականության, (օգտագործման) իրավունքի գրանցման   վկայական,	5000 դրամ
բ) վարձակալության իրավունքի գրանցման վկայական,	
գ) գրավի, հիփոթեքի գրանցման վկայական,	
դ) գույքային թերթ,	
ե) սեփականության վկայագիր,	
զ) սեփականության վկայական,	
է) տեխնիկական անձնագիր:	
6. Համայնքների վարչական սահմաններում եւ սահմաններից դուրս   մարզերի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն   իհանդիսացող գյուղատնտեսական նշանակության հատուկ պահպանվող տարածքների   ի հողերի, անտառային հողերի եւ պահուստային ֆոնդի   ի հողամասերի (պետական ֆոնդի ամառային արոտներ)՝ անկախ մակերեսից,   վարձակալության պայմանագրերից ծագող իրավունքների հիմք   ընդունելով մարզպետների կողմից հաստատված տվյալ հողամասի   ի հատակագիծը, իրավունքների պետական գրանցման համար:	2000 դրամ
7. "Հայաստանի Հանրապետության պետական, հանրային եւ	

| համայնքային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին" եւ  
| "Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց  
| մասնավորեցման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքներով  
| լ սահմանված պետական սեփականություն համարվող բնակարանային ֆոնդի  
| բնակարանների անհատույց մասնավորեցումից ծագող սեփականության  
| ի իրավունքի պետական գրանցման, տվյալ բնակարանի չափագրման, կամերալ  
| լ եւ գնահատության աշխատանքների համար: 1000 դրամ|

| 8. Միջազգային կազմակերպությունների վարկերի եւ դրամաշնորհների,  
| պետական բյուջեի միջոցների հաշվին (այդ թվում՝ Շիրակի եւ Լոռու մարզերում)  
| կառուցված եւ քաղաքացիներին փոխանցված բազմաբնակարան շենքերի բնակարանների,  
| լ անհատական բնակելի տների նկատմամբ իրավունքների պետական գրանցման, Շիրակի |  
| լ եւ Լոռու մարզերի համայնքներին հանձնված նախկին պետական բնակարանային ֆոնդի|  
| նկատմամբ համայնքի անվամբ իրավունքների պետական գրանցման, ինչպես նաեւ  
| լ միջազգային կազմակերպությունների վարկերի եւ դրամաշնորհների, պետական  
| լ բյուջեի միջոցների հաշվին Շիրակի եւ Լոռու մարզերում կառուցված բնակելի  
| լ ֆոնդի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի օտարման (նվիրատվություն,  
| լ առուվաճառք), պայմանագրի կնքման արդյունքում քաղաքացիների սեփականության  
| լ իրավունքի պետական գրանցման համար՝ 1000 դրամ:  
| 8.1. Շարժական գույքի գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության  
| լ իրավունքի գրանցում կատարելու համար՝ 1000 դրամ:  
| 8.2. Անշարժ գույքի հասցեների գրանցում կատարելու եւ գրանցված  
| լ հասցեների փոփոխություն կատարելու համար 1000 դրամ:

(աղյուսակը փոփ. 06.09.02 թիվ 783-Ն, 10.09.04 թիվ 215-Ն,  
16.10.06 թիվ 06-418-Ն հրամաններ)

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ցանկում ընդգրկված սահմանամերձ եւ բարձր լեռնային բնակավայրերում գտնվող անշարժ գույքի նկատմամբ "Պետական գրանցման եւ տեղեկատվության տրամադրման վճարների ցանկում" սահմանված վճարները գանձվում են դրանց 50%-ի չափով:

Պետական գրանցման աշխատանքներն իրականացվում են 7-րդ աշխատանքային օրը, առանց գործակից կիրառելու:

Պատվիրատուի պահանջով անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցումը կարող է իրականացվել նաեւ դիմումը ներկայացնելու օրվանը հաջորդող 4-րդ աշխատանքային օրը, 2-րդ աշխատանքային օրը (բացառությամբ բնակելի նշանակության անշարժ գույքի (անհատական բնակելի տուն, բնակարան, այգետնակ, ավտոտնակ, տնամերձ, բնակելի տան կառուցման եւ սպասարկման համար հատկացված հողամասեր եւ այլն), գյուղատնտեսական նշանակության եւ պահուստային հողերի, մինչեւ 200 քմ հասարակական, արտադրական նշանակության անշարժ գույքի



("Փոքր" օբյեկտ), չկառուցապատված հողամասերի), գրանցման նպատակով իրականացված չափագրման կամ տեղագնության, կամերալ աշխատանքների համար սահմանված վճարների նկատմամբ կիրառելով համապատասխանաբար 2 եւ 3 գործակիցներ:

Բնակելի նշանակության անշարժ գույքի (անհատական բնակելի տուն, բնակարան, այգետնակ, ավտոտնակ, տնամերձ, բնակելի տան կառուցման եւ սպասարկման համար հատկացված հողամասեր եւ այլն), գյուղատնտեսական նշանակության եւ պահուստային հողերի, մինչեւ 200 քմ հասարակական, արտադրական նշանակության անշարժ գույքի ("Փոքր" օբյեկտ), չկառուցապատված հողամասերի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը իրականացվում է դիմումը ներկայացնելու օրվանը հաջորդող 2-րդ աշխատանքային օրը՝ առանց արագացման գործակիցների կիրառման:

Կադաստրային քարտեզագրումն ավարտված համայնքներում իրավունքների առաջին պետական գրանցման աշխատանքները իրականացվում են պետական բյուջեի միջոցների հաշվին առաջին պետական գրանցման հավաստագրի տրման օրվանից սկսած վեց ամսվա ընթացքում, որից հետո այն իրականացվում է վճարովի, սեփականատիրոջ, օգտագործողի միջոցների հաշվին:  
(բաժինը փոփ. 06.09.02 թիվ 783-Ն հրաման)

Ուժը կորցրած համարել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի "Պետական գրանցման եւ տեղեկատվության տրամադրման վճարների ցանկը հաստատելու մասին" 05.08.99թ. թիվ 212-կա հրամանը: